ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 432 -Ա/2 «25» Մարտի 2024 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 30 ԿՐԵԴԻՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ (3-ԱՄՍՅԱ) ՄՈԴՈՒԼՆԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ  ԵՄ**

1. Գործածության երաշխավորել՝

1) մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար վերապատրաստման դասընթացի (3-ամսյա) մոդուլները՝ համաձայն Հավելվածի:

**ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

3/25/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2024 թվականի մարտի 25-ի N 432-Ա/2 հրամանի

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ 30 ԿՐԵԴԻՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

# ԴԱՍԸՆԹԱՑ (3-ԱՄՍՅԱ)

Համաձայն «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին /https://www.arlis.am/documentView.aspx?docid=160449/ փաստաթղթի 26-րդ հոդվածի /ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը/ 2-րդ մասի, առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1. Տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթության ունեցող և տվյալ մասնագիտական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,
2. Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական

ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորված կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

***ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է*** հանրակրթական ուսումնական հաստատությունների համար պատրաստել որակյալ մանկավարժներ՝ ապագա մասնագետներին փոխանցելով հոգեբանամանկավարժական ակադեմիական և գործնական գիտելիքների հիմնարար բազա, ինչպես նաև զինելով նրանց ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների և ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների ու միջոցների վերաբերյալ համապարփակ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով:

## ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

1. ***Գիտականության սկզբունք.*** Գիտության նվաճումների ներառում դասընթացի մեջ,
2. ***Ամբողջականության և համակարգայնության սկզբունք.*** Ստեղծել տրամաբանական կապ մոդուլի՝ մանկավարժահոգեբանական ծրագրի տարբեր բաժինների միջև, ապահովելով փոխկապվածություն:
3. ***Այժմեականության սկզբունք*** . Ծրագրում ներդնել կրթության ոլորտում ժամանակակից միտումները, նորագույն մեթոդիկաները և գիտակրթական նորագույն հետազոտությունների արդյունքները:

4. ***Ճկունության և անհատականացման սկզբունք.*** Ծրագրի մասնակիցներին հնարավորություն տալ ընտրել որոշակի մոդուլներ և ուսուցման ուղիներ՝ կախված իրենց հետաքրքրություններից :
5. ***Կիրառական նշանակության սկզբունք.*** Ծրագրում ներառել գործնական պարապմունքներ, քեյսեր և ռեալ իրավիճակներ, որպեսզի մասնակիցները կարողանան տեղում կիրառել ստացած գիտելիքները:
6. ***Ուսուցման մեթոդների բազմազանության սկզբունք.*** Կիրառել տարբեր մեթոդներ և ուսուցման ձևեր՝ ներառելով դասախոսություններ, սեմինարներ, նախագծային աշխատանքներ, խմբային և անհատական պարապմունքներ:
7. ***Հետազոտական մոտեցման սկզբունք.*** Մասնակիցներին մղել քննադատական մտածողության, վերլուծության և հետազոտական գործունեության:
8. ***Ներառականության սկզբունքների հաշվառում.*** Ապահովել մասնակիցների պատրաստումը աշխատելու տարբեր խմբի աշակերտների հետ, ներառյալ ԿԱՊԿՈՒ աշակերտները:
9. ***Որակյալ հետազոտահեն կրթության ապահովման սկզբունք.*** Մշտապես թարմացնել ծրագիրը, վերլուծել ուսուցման արդյունքները և իրականացնել շտկումներ լավագույն մանկավարժական արդյունքների հասնելու համար:

## *ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

### *Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն*

***Այս ծրագրի ավարտին սովորողն ունակ կլինի.***

*Ա1. Սահմանել կրթության մեթոդաբանական տեսությունները, դրանցից բխող մոտեցումներն ու ռազմավարությունները:*

*Ա2. Ներկայացնել ժամանակակից հոգեբանության ուղղությունները և դրանց կիրառման ոլորտները*

*Ա3. Ներկայացնել կրթության ոլորտում ծառացած արդի հիմնախնդիրները և դիտարկել դրանք ՀՀ դպրոցների օրինակով:*

*Ա4. Սահմանել ուսուցման հիմնական հասկացությունները, հայեցակարգային մոտեցումները, տեսակետները, որոնք ընկած են մասնագիտական գործունեության*

*հիմքում:*

*Ա5.Ներկայացնել և մեկնաբանել սովորողների տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները՝ հաշվի առնելով դրանք ուսուցման գործընթացում:*

*Ա6. Մեկնաբանել ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունները, խնդիրներն ու դժվարությունները համընդհանուր ներառականության պայմաններում:*

*Ա7. Դասակարգել ուսուցման նորարարական մեթոդներն ու ժամանակակից տեխնոլոգիաները, ինչպես նաև ընտրել ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա:*

*Ա8. Քննարկել դասի պլանավորման, նպատակների սահմանման և գնահատման առանձնահատկությունները:*

*Ա9. Սահմանել հոգեբանական երևույթների, գործընթացների, անձի հոգեկան առանձնահատկությունները:*

*Ա10. Դիտարկել կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:*

## *Բ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

***Այս ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝***

*Բ1. Կիրառել ուսուցման ինտերակտիվ, համագործակցային մեթոդներ ուսուցման գործընթացում՝ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ:*

*Բ2. Կանխատեսել ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:*

*Բ3. Մեկնաբանել աքսելերացիայի և տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրները երեխայի զարգացման գործընթացում:*

*Բ4. Վերլուծել աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման վրա տարբեր ներքին և արտաքին հոգեբանական գործոնների ազդեցության առանձնահատկությունները:*

*Բ5. Կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ:*

*Բ6. Դուրս բերել կրթության հիմնախնդիրներով պայմանավորված ուսուցչի գործնական քայլերի մոդելները և դրանց հիմքում եղած պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև գործնականում կիրառել կրթական հիմնախնդիրների լուծման գործողություններ:*

*Բ7. Ստեղծել քայլաշար՝ դասարանային դրական մշակույթ ունենալու համար և գործնականում կիրառել սոցիալ-հուզական ուսումնառությունը (ՍՀՈՒ), դրա զարգացման պլանը դասավանդման պրակտիկայում:*

*Բ8. Ստեղծել նախագծի մանրամասն ծրագիր. ժամանակացույց, ակնկալվող արդյունքները: Ներկայացնել ծրագրի գործնական ամփոփումը և փիչինգը:*

*Բ9. Կիրառել կրթական արդի տեխնոլոգիաներն ու դասավանդման նորագույն մեթոդները մասնագիտական գործունեության մեջ:*

*Բ10. Կազմել երկարաժամկետ թեմատիկ պլան՝ օգտագործելով ուսումնառության թեմատիկ պլանավորման գործիքը:*

*Բ11. Կիրառել գնահատման վերլուծության արդյունքները հետագա աշխատանքները պլանավորելիս:*

*Բ12. Մշակել և կիրառել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու նոր և արդյունավետ միջոցներ և ձևեր՝ նրանց դասապրոցեսին ինտեգրելու համար:*

### *Գ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

***Այս ծրագրի ավարտին սովորողն ունակ կլինի՝***

*Գ1. Կշռադատել հանրակրթության ոլորտում հիմնախնդիրների լուծման ճանապարհները՝ հենվելով մեթոդաբանական կայուն գիտելիքների վրա:*

*Գ2. Կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից:*

*Գ3. Պատրաստել զեկուցումներ, ներկայացնել ինքնուրույն վերլուծությունների և հետազոտությունների արդյունքները, վարել քննարկումներ և բանավեճեր:*

*Գ4. Կիրառել ՏՀՏ-ներն ուսուցման գործընթացում* (Word, Excel, Power Point):

*Գ5. Ապահովել ուսուցիչ-աշակերտ-ծնող արդյունավետ համագործակցություն՝ սովորողների լիարժեք սոցիալականացման համար:*

*ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ.*

- Բանավոր հարցում,
- Գործնական աշխատանք,
- Ուսումնական և հետազոտական նախագծերի ներկայացում,
- Սահիկների կազմում և ներկայացում,
- Հետազոտական աշխատանք:

## *ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԸ*

1. ***Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ.*** 5կր.,150 ժամ, որից 70 ժամ լսարանային, 80 ժամ ինքնուրույն և արտալսարանային:
2. ***Մանկավարժություն.*** 4 կրեդիտ՝ 120ժամ, որից՝ 60 ժամ լսարանային, 60ժամ ինքնուրույն և արտալսարանային:
3. ***Հոգեբանություն.*** 4 կրեդիտ՝ 120ժամ, որից՝ 60 ժամ լսարանային, 60ժամ ինքնուրույն և արտալսարանային:
4. ***Մասնագիտական կամընտրական դասընթացներ.***
   - Ուսուցման և դասավանդման մեթոդիկա՝ 4 կրեդիտ՝ 120 ժամ, որից 60 ժամ լսարանային , 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային:

5. ***Կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ.*** 4 կրեդիտ՝ 120 ժամ, որից 60ժամ լսարանային , 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային:

***6. Հետազոտական աշխատանք***՝ 3 կրեդիտ՝ 90ժամ,

***7. Մանկավարժական պրակտիկա***՝ 6 կրեդիտ՝ 180ժամ

*ԸՆԴԱՄԵՆԸ*՝ **30 կրդ.-900 ժամ**

- Մեկ ECTS կրեդիտը համարժեք է 30ժամ լրիվ /լսարանային, արտալսարանային և ինքնուրույն/ ուսումնական բեռնվածությանը (Հղում՝ ԵՊՀ Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, 2011, էջ՝ 6-7, ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, 2022, էջ՝ 3):

# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

## 1. Ընդհանրական կարողություններ

**Դասավանդման/մանկավարժական**

- Դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու հմտություն,
- Մեթոդական զինվածություն /դասավանդման, գնահատման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների տիրապետում/:

**Հետազոտական**

- Ընդհանուր հետազոտական աշխատանքների իրականացման հմտություն:
- Մանկավարժական ախտորոշման գործառույթների տիրապետում:

**Հաղորդակցական**

- Հաղորդակցական, որն անհրաժեշտ է սովորողի հետ միջանձնային հարաբերությունների հաստատման և կառուցողական փոխառնչությունների համար,
- Լսարանը կառավարելու կարողություններ,

**ՏՀՏ կիրառություն**

- Բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) հմտություններ:
- Լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու հմտություններ (pptx, prezi, canva և այլն):

Այլ կարողություններ

- Տարիքային հոգեբանության իմացություն
- Մանկավարժական էթիկայի իմացություն:
- Հանրակրթության ոլորտի իրավական նորմերի իմացություն:

## 2. Մասնագիտական կարողություններ

1. Մանկավարժության հիմնախնդիրների և մեթոդաբանական հիմքերի տիրապետում:
2. Նպատակներին և խնդիրներին մեթոդական տեսության համապատասխանությունը գնահատելու կարողություն:
3. Մասնագիտական գործունեության հիմքում ընկած ուսուցման հիմնական հասկացությունների, հայեցակարգային մոտեցումների, տեսակետների սահմանման կարողություն՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:
4. Ուսուցման մեթոդիկաները դասակարգելու և դասավանդման արդյունավետ մեթոդիկայի ընտրության կարողություն:
5. Ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման կարողություն:
6. Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու կարողություն:
7. Մեթոդական խնդիրը ձևակերպելու, ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ ընտրելու կարողություն:
8. ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:
9. Շարժասահիկներով դասերի նյութեր պատրաստելու և ներկայացնելու կարողություն և հմտություն:
10. Տարբեր երկրների մեթոդական առաջավոր փորձի իմացություն և կիրառման կարողություն:

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ

<table>
<tr><td>2801</td><td>Մանկավարժական պրակտիկա</td><td>6 կրեդիտ</td></tr>
<tr><td colspan="2"></td><td>180ժամ</td></tr>
<tr><td colspan="2"></td><td></td></tr>
<tr><td colspan="3">Մանկավարժական պրակտիկայի նպատակն է՝<br>▪ Հնարավորություն ստեղծել սովորողներին ինքնաիրացվելու դասավանդման գործընթացում,<br>▪ Սովորողների մեջ ձևավորել գիտելիքների կիրառման կարողություններ և հմտություններ:</td></tr>
<tr><td colspan="3">Մանկվարժական պրակտիկայի ավարտին սովորողն ունակ կլինի՝<br>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն<br>• Ծանոթանալ դպրոցում ուսուցման գործընթացի խնդիրներին և դժվարություններին,<br>• դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդները,<br>• ընտրել ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,<br>բ. գործնական մասնագիտական կարողություններ<br>• կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները դասավանդման գործընթացում,<br>• կանխատեսել ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները,<br>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ<br>• արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները ,<br>• կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով</td></tr>
</table>

| |
|---|
| տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից: |
| **Պրակտիկան ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br><br>1. ուսուցման ժամանակակից մեթոդների դասակարգում,<br>2. դասավանդման արդյունավետ մեթոդիկաների ընտրություն,<br>3. ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,<br>4. ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցների օգտագործում: |
| **Կիրառվում են պրակտիկայի իրականացման հետևյալ ձևերն ու մեթոդները**.<br><br>**Պրակտիկան իրականացվում է՝**<br><br>• Առկա հարթակում /առդեմ/՝ ապահովելով անմիջական շփում և հաղորդակցում սովորողների հետ,<br>• Առցանց հարթակում՝ իրավիճակի փոփոխության պայմաններում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները.**<br><br>• Պրակտիկան գնահատվում է ստուգարքով: Պրակտիկան դրական /ստուգված/ է գնահատվում այն դեպքում, եթե սովորողը մասնակցել է պրակտիկային, կատարել ծրագրով նախատեսված առաջադրանքները, սահմանված ժամկետում ներկայացրել հաշվետվություն: |
| **Պրակտիկան իրականացվում է հետևյալ սկզբունքներով.**<br><br>• Գիտականության սկզբունք,<br>• Մատչելիության սկզբունք,<br>• Տեսության և պրակտիկայի կապի սկզբունք,<br>• Սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելու սկզբունք: |

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**Հետազոտական աշխատանքը կատարվում է հետևյալ փուլերով՝**

1. Սովորողներին տրամադրվում են հետազոտական աշխատանքի թեմաներ՝ մանկավարժությունից և դասավանդման մեթոդիկաներից,
2. Նշանակվում են հետազոտական աշխատանքների ղեկավարներ,
3. Նշանակվում են կոնսուլտացիաների օրեր՝ ղեկավարների կողմից սովորողներին խորհրդատվություն իրականացնելու նպատակով,
4. Հետազոտական աշխատանքի կառուցվածքը՝
   - Ներածություն,
   - Հիմնական նյութի վերլուծական շարադրանք՝ ըստ բաժինների, հղումներով,
   - Եզրակացություններ,
   - Առաջարկություններ,
   - Օգտագործված գրականության ցանկ,
5. Հետազոտական աշխատանքի պաշտպանություն՝ տեսասահիկներով,
6. Հետազոտական աշխատանքը գնահատվում է 20 բալանոց համակարգով:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

**Հետազոտական աշխատանքը կատարվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝**

- Գիտականության սկզբունք,
- Այժմեականության սկզբունք,
- Տեսության և պրակտիկայի կապի սկզբունք,
- Ամբողջականության և համակարգայնության սկզբունք՝ աշխատանքի տարբեր բաժինների միջև փոխկապվածությունն ապահովելու նպատակով:

## ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| 1. | Հասարակագիտության  դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
|---|---|---|---|
| 60 ժամ լսարանային, որից 20ժամ դաս., 40ժամ գործն. | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է .**

- սովորողներին ներկայացնել Հասարակագիտութուն դասընթացի նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները,
- Ներկայացնել  Հասարակագիտության կրթական արժեքը:
- Սովորեցնել Հասարակագիտության դասավանդման ժամանակակից մեթոդներն և հնարները:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները.**

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

***Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն***

- Հիմնավորել Հասարակագիտության դասավանդման կարևորությունը,
- Ներկայացնել Հասարակագիտության դասավանդման մոտեցումները,
- Բացատրել Հասարակագիտության դպրոցական ծրագրի բաղադրիչները:

***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ***

- Տիրապետել հասարակագիտության նյութի մատուցման հնարքներին,
- Աջակցել սովորողներին հասարակագիտության նյութը յուրացնելու գործընթացում,
- Կիրառել գնահատման մեթոդներ և հնարներ:

***Գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ.***

- Իրականացնել համագործակցային աշխատանք:
- Դրսևորել հաղորդակցական հմտություններ:
- Կիրառել թվային գործիքներ:

**Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները.**

- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել հասարակագիտության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները հասարակագիտության դասավանդման գործընթացում,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական առաջադրանքներ
- բանավեճեր

**Գնահատման մեթոդները և միջոցները.**

- Բանավոր հարցում,
- Գործնական աշխատանքներ,
- Ռեֆերատներ:

- **Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**
- Հասարակագիտության դասավանդումը կարողունակությունների և վերջնարդյունքների հիման վրա
- Հասարակագիտության դասավանդման պլանավորման հմտություններ
- Մարդ-բնություն-հասարակություն:
- Արժեքներ:
- Մարդու իրավունքներ:
- Ժողովրդավարություն:
- Գեղագիտության հիմնախնդիրներ:
- Բարոյագիտության հիմնախնդիրներ:
- Հոգեբանության հիմնախնդիրներ:
- Տնտեսագիտության հիմնախնդիրներ:
- Ֆինանսական գրագիտություն:
- Մեդիա գրագիտություն:

| |
|---|
| • Պետություն և իրավունք։<br>• Մտածողության հմտություններ։ Քննադատական և ստեղծագործական հմտություններ։<br>• Գլոբալ հիմնախնդիրներ։ |
| **Գրականության ցանկ.**<br>1. 1. Борисов С. В. «Человек философствующий». Исследование современных моделей философской пропедевтики, М. 2005<br>2. Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ մեթոդներ, Երևան, 2019<br>3. Խաչատրյան Ս. Կամուրջներ պատերի փոխարեն, Երևան, 2014<br>4. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս. Հասարակագիտություն 8, Երևան, 2018<br>5. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Վարդանյան Կ., Աղաջանյան Հ. Հասարակագիտություն 10, Երևան, 2017<br>6. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս. Հասարակագիտություն 12, Երևան, 2019 |

**«Հասարակագիտության դասավանդման մեթոդիկա»**

*դասընթացի ծրագիր /4կրդ/*

**Թեմա 1. Հանրակրթության պետական չափորոշչի 8 կարողունակությունները, «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, ծրագիրը։ (12 ժամ)**

Կարողունակությունների վրա հիմնվող մոտեցման առանձնահատկությունները։ «Հասարակագիտություն» առարկայի դերը 8 կարողունակությունների զարգացման գործում։ «Հասարակագիտություն» առարկայի կոնցեպտը։ Հասարակագիտություն առարկայի չափորոշչի և ծրագրի բաղադրիչները։ Խաչվող հասկացությունների կիրառումը «Հասարակագիտություն» առարկայի դասընթացում։

**<u>Գործնական աշխատանք</u>**՝ (8 կարողունակությունների և «Հասարակագիտություն» առարկայի վերջնարդյունքների համապատասխանեցում)։

**Թեմա 2. «Հասարակագիտություն» առարկայի բովանդակային բաղադրիչները (12 ժամ)**

Մարդու իրավունքների և քաղաքացիական կրթության բաղադրիչ։ Իրավագիտության բաղադրիչը։ Հոգեբանության բաղադրիչը։ Քաղաքագիտության բաղադրիչը։ Սոցիոլոգիայի և փիլիսոփայության բաղադրիչը։ Տնտեսագիտության և ֆինանսական

գրագիտության բաղադրիչը։

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (Բաղադրիչներից որևէ մեկի մասին ներկայացման պատրաստում)։

**Թեմա 3. «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը (12 ժամ)**

«Հասարակագիտություն» առարկայի պլանավորման առանձնիատկությունները։ Մակերեսային գիտելիք-Խորքային գիտելիք-Փոխանցելի գիտելիք եռեամիասնությունը Հասարակագիտության դասընթացում։ Քննադատական և ստեղծագործական մտածողությունը որպես «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման մասեր։ Քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնող մեթոդներ, հնարներ, առաջադրանքներ։

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (Քննադատական և ստեղծագործական մտածողության վարժությունների կատարում)։

**Թեմա 4. «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման մեթոդներ և հնարներ (12 ժամ)**

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման ավանդական, ինտերակտիվ մեթոդներ և հնարներ։ Անհատական, զույգերով, փոքր խմբերով և համադասարանային աշխատանքի առանձնահատկությունները։ Ուսուցման նպատակների-մեթոդների համապատասխանության կարևորությունը։

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (Ուսուցման մեթոդների և հնարների կիրառում)։

**Թեմա 5. Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումը «Հասարակագիտություն» առարկայի դասաժամերին (12 ժամ)**

Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման մեթոդներ և հնարներ։

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ («Հասարակագիտություն» առարկայի դասապլանի կազմում)։

**Դասընթացի ամփոփում (2 ժամ)**

*ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ*

<table>
<tr><th rowspan="2">Հ Հ</th><th rowspan="2">Թեմա</th><th colspan="3">Ժամաքանակ</th><th rowspan="2">Նպատակը</th><th rowspan="2">Վերջնարդյունքները</th><th rowspan="2">Ստուգ ման ձև</th></tr>
<tr><th>Ընդ հ.</th><th>Տե ս.</th><th>Գոր ծն.</th></tr>
<tr><td></td><td>Թեմա 1. Հանրակրթության պետական չափորոշչի 8 կարողունակությունները, «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, ծրագիրը: (6 ժամ)<br><br>• Կարողունակությունների վրա հիմնվող մոտեցման առանձնահատկությունները:<br>• «Հասարակագիտություն» առարկայի դերը 8 կարողունակությունների զարգացման գործում:<br>• «Հասարակագիտություն» առարկայի կոնցեպտը: Հասարակագիտություն առարկայի չափորոշչի և ծրագրի բաղադրիչները:<br>• Խաչվող հասկացությունների կիրառումը «Հասարակագիտությու</td><td>10</td><td>4</td><td>6</td><td>Ներկայացնել կարողունակությունների վրա հիմնված ուսուցման էությունը, «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, կոնցեպտը և ծրագիրը, խաչվող հասակացությունների իմաստը:</td><td>Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>• կբացատրեն կարողունակությունների վրա հիմնվող ուսուցման էությունը<br>• կնկարագրեն «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, ծրագիրը:<br>• կհիմնավորեն խաչվող հասկացությունների կարևորությունը:</td><td></td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ն» առարկայի դասընթացում:<br><br>***Գործնական աշխատանք***՝<br><br>կարողունակություննե րի և «Հասարակագիտությու ն» առարկայի վերջնարդյունքների համապատասխանեցն ում | | | | | | |
| | **Թեմա 2. Հասարակագիտություն» առարկայի բովանդակային բաղադրիչները**<br><br>• Մարդու իրավունքների և քաղաքացիական կրթության բաղադրիչը:<br>• Իրավագիտությ ան բաղադրիչը:<br>• Հոգեբանության բաղադրիչը:<br>• Քաղաքագիտու թյան բաղադրիչը:<br>• Սոցիոլոգիայի և փիլիսոփայության բաղադրիչը:<br>• Տնտեսագիտութ յան և ֆինանսական գրագիտության բաղադրիչը:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>**՝<br>Բաղադրիչներից որևէ | 12 | 4 | 8 | Ներկայացնել Հասարակագիտո ւթյուն առարկայի բովանդակային բաղադրիչները և դրանց առանցքային գաղափարները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>• կտիրապետե ն «Հասարակագիտությ ուն» առարկայի բովանդակային բաղադրիչների առանցքային գաղափարներին:<br>• կհիմնավորեն առանցքային գաղափարների արդիականությունը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մեկի մասին ներկայացման պատրաստում: | | | | | | |
| | **Թեմա 3. «Հասարակագիտությու ն» առարկայի դասավանդումը**<br><br>• «Հասարակագիտություն» առարկայի պլանավորման առանձնահատկություններ ը:<br>• Մակերեսային գիտելիք-Խորքային գիտելիք-Փոխանցելի գիտելիք եռամիասնությունը Հասարակագիտության դասընթացում:<br>• Քննադատական և ստեղծագործական մտածողությունը որպես «Հասարակագիտությու ն» առարկայի դասավանդման մասեր: Քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնող մեթոդներ, հնարներ, առաջադրանքներ:<br><u>**Գործնական աշխատանք**</u>՝ Քննադատական և ստեղծագործական մտածողության վարժությունների կատարում: | 12 | 4 | 8 | Ներկայացնել «Հասարակագիտություն» առարկայի պլանավորման առանձնահատկությունները, գիտելիքի տեսակները, քննադատական և ստեղծագործական մտածողության կարևորությունը: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>• կտիրապետեն «Հասարակագիտության» պլանավորման առանձնահատկություններին:<br>• կտարբերակեն գիտելիքի տեսակները:<br>• կհիմնավորեն ստեղծագործական և քննադատական մտածողության կարևորությունը:<br>• կկիրառեն քննադատական և ստեղծագործական մտածողության գիտելիքները: | |
| | **Թեմա 4. «Հասարակագիտությու** | 12 | 4 | 8 | Ներկայացնել «Հասարակագիտ | Թեմայի ուսումնասիրության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ն» առարկայի դասավանդման մեթոդներ և հնարներ**<br><br>• «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման ավանդական, ինտերակտիվ մեթոդներ և հնարներ:<br>• Անհատական, զույգերով, փոքր խմբերով և համադասարանային աշխատանքի առանձնահատկությունները:<br>• Ուսուցման նպատակների-մեթոդների համապատասխանության կարևորությունը:<br>**<u>Գործնական աշխատանք</u>**՝<br>Ուսուցման մեթոդների և հնարների կիրառում: | | | | ություն» առարկայի ուսուցման մեթոդներ և հնարներ, աշխատանքի ձևաչափեր: | ավարտին մասնակիցները.<br>• կդասակարգեն դասավանդման մեթոդները, հնարները:<br>• կտարբերակեն դասարանի հետ աշխատանքի ձևաչափերը:<br>• կհամապատասխանեցնեն ուսուցման նպատակները և մեթոդները: | |
| | **Թեմա 5. Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումը «Հասարակագիտություն» առարկայի դասաժամերին**<br><br>• Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման մեթոդներ և հնարներ: | 12 | 4 | 8 | Մասնակիցներին ներկայացնել «Հասարակագիտություն» առարկայի գնահատման երեք ձևերը: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br>• կտարբերակեն հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումը:<br>• կկիրառեն հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման ձևերը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **<u>Գործնական աշխատանք</u>**՝ «Հասարակագիտություն» առարկայի դասապլանի կազմում: | | | | | | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | 20 | 40 | | | |

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

## ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

<table>
<tr><td>Դասընթացի անվանումը</td><td colspan="2">Մանկավարժություն</td><td>4կրեդիտ</td><td>120ժամ</td></tr>
<tr><td colspan="2">60ժ լս., որից՝ 46ժ. դաս., 14ժ.սեմ</td><td colspan="3">60 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցման ձևը՝ առկա</td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="5">Դասընթացի նպատակն է՝<br>• սովորողներին ներկայացնել մանկավարժության նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները և գիտաճյուղերը,<br>• ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը և գործոնները,<br>• ծանոթացնել ուսուցման և դաստիարակության գործընթացներին, դրանց սկզբունքներին, մեթոդներին, ուսուցման կազմակերպման ձևերին, դաստիարակության բաղադրիչներին,<br>• ներկայացնել դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,<br>• ծանոթացնել ՀՀ կրթության համակարգի կառուցվածքին և առկա խնդիրներին:</td></tr>
</table>

| |
|---|
| Դասընթացի կրթական վերջնարդյունքները<br><br>Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝<br><br>*Ա. **Մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>• *սահմանել մանկավարժության հիմնական հասկացությունները,*<br>• *ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը և գործոնները*<br>• *դասակարգել մանկավարժության առաջադիր խնդիրները մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում,*<br>• *քննարկել ուսուցման և դաստիարակության հիմնական սկզբունքներն ու մեթոդները, ուսուցման կազմակերպման ձևերն ու դաստիարակության տեսակները:*<br>• *ներկայացնել ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը:*<br>***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ***<br>• *փաստարկել անձի ձևավորման հիմքում ընկած հիմնական գործոնների հարաբերակցությունը,*<br>• *արժևորել և գնահատել մանկավարժության նշանակությունն անձի ձևավորման և զարգացման գործում,*<br>• *կանխատեսել ուսուցման և դաստիարակության գործընթացներում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները,*<br>• *կիրառել ուսուցման ժամանակակից արդյունավետ մեթոդներն ու տեխնոլոգիաները,*<br>• *կանխատեսել ՀՀ կրթության համակարգում առաջացած խնդիրները և ներկայացնել դրանց հնարավոր հաղթահարման ուղիները:* |
| Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները.<br><br>• գնահատել մանկավարժության դերն ու նշանակությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում,<br>• վերլուծել անձի ձևավորման վրա ազդող ժառանգական և սոցիալական գործոնների ազդեցությունն ուսումնադաստիարակչական գործընթացում, |

- գնահատել ՀՀ կրթության համակարգի ուսումնասիրման ընթացքում ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
2. սեմինար պարապմունք,
3. քննարկումներ,
4. գործնական աշխատանքներ/ փոքր խմբերով/
5. բանավեճեր
6. Ուսումնական նախագծերի կազմում

**Գնահատման մեթոդներն ու ձևերը.**

- Բանավոր հարցում,
- Ուսումնական նախագծերի ներկայացում,
- Ռեֆերատներ

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից**.

- Մանկավարժության նպատակը, խնդիրները, գիտահետազոտ. մեթոդները
- Մանկավարժության գիտաճյուղերը
- Մանկավարժության կապն այլ գիտությունների հետ
- Անձի ձևավորումն ու զարգացումը
- Դիդակտիկայի ընդհանուր բնութագիրը,
- Ուսուցման սկզբունքները,
- Ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,
- Դաստիարակության սկզբունքները
- Դաստիարակության մեթոդները,
- Դաստիարակության տեսակները,
- Ներառական ուսուցմամբ կրթություն, հեռանկարային ուղիները,

- ՀՀ կրթության համակարգը. նպատակը, խնդիրները, կառուցվածքը:

**Գրականության ցանկ.**


1. Աստրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Աստրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, 2017:
2. Աստրյան Լ.Թ., Աստրյան Մ.Ա., Սաֆարյան Ն. Ա. Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 2018:
3. Աստրյան Լ.Թ., Աստրյան Զ.Ա., Հակոբյան Ա, Ա., Սաֆարյան Ն. Ա. Մանկավարժության պատմություն, Երևան, 2020:
4. Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005:
5. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Երևան, 2005:
6. ՀՀ Սահմանադրություն, Հոդված 39, Կրթության իրավունք:
7. ՀՀ օրենքը կրթության մասին. 14 ապրիլի, 1999թ:

8..ՀՀ օրենքը պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին. 23 հոկտեմբերի, 2001թ:

9.«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու «ՀՀ պետական հանրակրթական հաստատության» պետական ոչ առևտրյին կազմակերպության օրինակելի կանոնադրությունը. 16 սեպտեմբերի 2002 թ.:

10. ՀՀ Օրենքը «Հանրակրթության մասին», Երևան, 2009:

11. Ազարյան Ռ.Ն., Ավագյան Ա.Վ., Հատուկ մանկավարժություն, /դասագիրք մանկավարժական բուհերի համար/ Եր., 2016:

12. Лазарев В.С. и др., Управление школой. Теоретические основы и методы, М 1997.

13. Педагогика: учебник для бакалавров / Л П. Крившенко; под ред. Л. П. Крившенко, Москва, 2013.

14. Коджаспирова Г.М. Педагогика: учебник / Г.М. Коджаспирова. М., 2010.

15.Ковалева Е.В. История педагогики и образования: учеб. метод. пособие, 2013.

## *Դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ընդ | լս | սեմ | նպատակը | վերջնարդյունքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժություն գիտության արդի մարտահրավերները<br>1.1.Մանկավարժության նպատակը, խնդիրները,<br>1.2.Մանկավարժության ժամանակակից գիտաճյուղերը<br>1.3.Մանկավարժության կապն այլ գիտությունների հետ<br><br>**Գործնական աշխատանք**<br>*Կազմակերպել քննարկում՝*<br>*«Իմ պատկերացմամբ մանկավարժության արդի մարտահրավերներն են, որոնք ……»:*<br>*Բանալեճ.«Ժամանակակից գիտաճյուղերի իմացությունը հնարավորություն կտա կատարելագործել հետևյալ մասնագիտական կոմպետենցիաները»:* | 3 | 2 | 1 | Թեմայի նպատակն է.<br>-դասակարգել մանկավարժության առաջադիր խնդիրները մարդու մասին գիտությունների շարքում,<br>-մասնակիցներին ներկայացնել մանկավարժության նպատակը, խնդիրները, մանկավարժության ժամանակակից գիտաճյուղերը, մանկավարժության կապն այլ գիտությունների հետ: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան.**<br>մանկավարժության արդի հիմնախնդիրները և դրանք կպրոյեկտեն իրենց մանկավարժական գործունեության ընթացքում<br><br>**Կկարողանան.**<br>Կախտորոշեն մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրները՝ լուծման հնարավոր միջոցներ դիտարկելով ժամանակակից գիտաճյուղերի ձեռքբերումների և փոխառնչությունների արդյունքները: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Անձի ձևավորումն ու զարգացումը<br>2.1.Մանկավարժական անտրոպոլոգիան որպես անձի ձևավորման մեթոդաբանական հիմք<br>2.2.Անձի ձևավորման հիմնական տեսությունները<br>2.3.Մարդու զարգացման կենսաբանական և սոցիալական ծրագրերը,<br>2.4.Անձի ձևավորման և զարգացման հիմնական օրինաչափություններն ու շարժիչ ուժերը<br>2.5.Անձի ձևավորման հիմքում ընկած հիմնական գործոնները<br>• **Գործնական աշխատանք**<br>*Առաջարկե՛ք մեխանիզմներ անձի ձևավորման, սոցիալականացման ընթացքում փոփոխություններ իրականացնելու համար, որոնք կնպաստեն ժամանակի նոր պահանջներին և մարտահրավերներին դիմակայելու:*<br>*Բանավեճ՝ դերային խաղով «Ժամանակի բոլո՞ր մարտահրավերներն են օգտակար անձի ձևավորման համար»թեմայով:* | 3 | 2 | 1 | Թեմայի նպատակն է. ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը և գործոնները: Մասնակիցներն իրենց մանկավարժական գործունեության ընթացքում կառընչվեն սովորողի անձի ձևավորման գործընթացի առանձնահատկություններին, օրինաչափություններին և շարժիչ ուժերին, հետևաբար սովորողների գիտելիքների յուրացման արդյունավետություննն ապահովելու համար անհրաժեշտ է ուսումնառություն իրականացնել նրանց կենսաբանական ծրագրերի հիման վրա: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան.**<br>Կկարևորեն տարիքային շրջաբաժանմանը համապատասխան՝ անձի ձևավորման և զարգացման հիմնական օրինաչափություններն ու շարժիչ ուժերը՝ կենսաբանական և սոցիալական ծրագրերը:<br>**Կկարողանան.**<br>Վերլուծել և հարաբերակցել անձի ձևավորման հիմքում ընկած գործոնների դերակատարությունը սովորողների իրավիճակային, հուզակամային, վարքագծային դրսևորումների կառավարման ընթացքում: |
| 3 | Դիդակտիկայի ընդհանուր բնութագիրը<br>3.1.Դիդակտիկայի նպատակը,խնդիրները<br>3.2.Կրթական նոր հարացույցի համատեքստում՝ | 10 | 8 | 2 | Թեմայի<br>նպատակն է.<br>Ծանոթացնել ուսուցման սկզբունքներին, ուսուցման | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան.**<br>Կրթական հարացույցի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուսուցման գործընթացի շարժիչ ուժերի, օրինաչափությունների բնութագրումը<br>3.3.Մանկավարժական մոդելի կիրառումն որպես արդյունավետ դասավանդման երաշխիք<br>3.4.Ուսուցման սկզբուքներն ու դիդակտիկական կանոնները | | | | շարժիչ ուժերին, օրինաչափություններին:<br>Մասնակիցներն իրենց մանկավարժական գործունեության ալգորիթմն պետք է կառուցեն մանկավարժական մոդելի հիման վրա՝ տիրապետելով դիդակտիկայի նպատակին և խնդիրներին, ուսուցման սկզբունքներին: | համատեքստում ուսուցման գործընթացի շարժիչ ուժերը, ուսուցման սկզբունքների հիման վրա ուսուցման օրինաչափությունները:<br>**Կկարողանան.** Արդյունավետ կիրառել մանկավարժական մոդելը: |
| 4 | Ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները<br>4.1.Ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդներ<br>4.2.Սովորողների դրդապատճառների և ակտիվության ձևավորման մեթոդներ<br>4.3.Ստուգման և գնահատման մեթոդներ<br>4.4.Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ<br>• **Գործնական աշխատանք**<br>*Լսարանում անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում. «Դասավանդման մեր փորձից՝ նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ» :* | 10 | 8 | 2 | Թեմայի նպատակն է.<br>Մասնակիցներին ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները:<br>Քննարկել դասավանդողի իմացական-ճանաչողական, նախագծային (պրոյեկտիվ), կառուցվածքային (կոնստրուկտիվ), կազմակերպչական և հաղորդակցական գործառույթները՝ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան** Կարժևորեն ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կարևորությունը՝ ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ընթացքում:<br>**Կկարողանան** կիրառել ուսուցման ժամանակակից արդյունավետ մեթոդներն ու տեխնոլոգիաները՝ տարբերակելով դասավանդվող նյութի,սովորողների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Դաստիարակության սկզբունքներն ու մեթոդները<br>5.1.Դաստիարակությունը սոցիալ-մանկավարժական երևույթ<br>5.2.Դաստիարակության նպատակն ու խնդիրները անձնակողմնորոշիչ-ձևավորող-զարգացնող հարացույցի համատեքստում<br>5.3.Դաստիարակության սկզբունքները<br>5.4.Դաստիարակության մեթոդներն ու միջոցները<br>**Գործնական աշխատանք**<br>*Նկարե՛ք «Զարգացող ծառ» և ծառի ճյուղերի վրա նշեք այն նպատակները, դրդապատճառները, որոնք կնպաստեն անձի նպատակամետ դաստիարակմանը և արդյունավետ սոցիալականացմանը:* | 10 | 8 | 2 | Թեմայի<br>նպատակն է.<br>Մասնակիցներին ներկայացնել մանկավարժական գործունեության ընթացքում դաստիարակության սկզբունքների և մեթոդների իմացության կարևորությունն դասի կառավարման գործընթացն առավել արդյունավետ և անխափան կազմակերպելու համար: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան.**<br>Դաստիարակող-դաստիարակվող համագործակցության ընթացքում դաստիարակության նպատակին, խնդիրներին , համապատասխան երկուստեք գործելաոճի առանձնահատկություններ:<br>**Կկարողանան.**<br>Դեպքերի վերլուծության ընթացքում ըստ իրավիճակի կիրառել դաստիարակության համապատասխան մեթոդներն ու միջոցները: |
| 6 | Դաստիարակության տեսակները<br>***Գործնական աշխատանք***<br>*«Փոփոխված արժեքների հիերարխիան սոցիալականացման ընթացքում»թեմայի շրջանակներում պատրաստեք հարցաթերթիկ և իրականացրեք սոցիոլոգիական հարցում/ քսան աշակերտների շրջանում/: Արդյունքների վերլուծությունը իրականացնել հիմք ընդունելով* | 9 | 8 | 1 | Թեմայի<br>նպատակն է.<br>Քննարկել դաստիարակության տեսակները, վերլուծել իրականացման մեխանիզմներն ու միջոցները:<br>Ներկայացնել կրթության բովանդակությամբ ամրագրված այն ուսումնական առարկաները, որոնց դասավանդման ընթացքում իրականացվում է | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան.**<br>Դաստիարակության տեսակները, դրանց շաղկապվածությունը սովորողների սոցիալականացման ընթացքում:<br>**Կկարողանան.**<br>Տեսականորեն ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնականում. հաշվի առնելով սովորողների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *դաստիարակության տեսակները:* | | | | համապատասխան դաստիարակության տեսակը: | մշակութային, սեռադերային, ընտանեկան սոցիալականացման առանձնահատկություններ ժամանակի մարտահրավերների ն համապատասխան: |
| 7. | Ներառական ուսուցմամբ կրթության հեռանկարային ուղիները<br>7.1. ներառական ուսուցման ներդրման հնարավորությունները<br>7.2. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի կազմումը և անդամների գործառույթները:<br>7.3.ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքների դիտարկումը, բացահայտումը և գնահատումը:<br>Գործնական աշխատանք<br>*Անհատական, զույգերով և խմբերով ներառական ուսուցման թեմայի դիտարկումներ, քննարկումներ, արդյունքների ներկայացում՝ համառոտ շարադրանքով, իրավիճակների ստեղծում և նկարագրում (առարկայական ժամերին), դերային խաղ, դեպքի ուսումնասիրում:* | 10 | 8 | 2 | Խորացնել կատարելագործել մանկավարժա-հոգեբանական ծառայության խմբի, նրանց գործառույթների, ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքների դիտարկման, բացահայտման ու գնահատման մասին մասնակիցների գիտելիքները, արժևորել դրանք և ձևավորել համապատասխան հմտություններ և վարքագիծ: | **Գիտանա.**<br>ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքները, մանկավարժահոգեբանական խմբի կազմումը, նրա անդամների գործառույթները, կարիքների դիտարկումը, բացահայտումը և գնահատումը:<br>**Կկարողանա.**<br>բնութագրել մանկավարժահոգեբանական խմբի գործառույթները, կատարել ԿԱՊԿՈՒ սովորողի կարիքների դիտարկում, դիտարկման քարտի ստեղծում : |
| 8. | Ուսուցիչ-աշակերտ համագործակցության առանձնահատկությունները<br>8.1.Ինովացիոն ուսուցիչ<br>8.2.Ուսուցչի հաղորդակցման մոդելները | 3 | 2 | 1 | Թեմայի նպատակն է. Դիտարկել հաղորդակցական մոդելների կիրառման ընթացքում ուսուցչի այն մասնագիտական | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Գիտանա.**<br>Նոր չափորոշիչներին համապատասխան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 8.3.Ուսուցչի անձնային և մասնագիտական որակների ներդաշնակությունը<br>8.4.Ուսուցչի մանկավարժական գործունեության անհատական ոճը<br>**Գործնական աշխատանք**<br>Պատրաստե՛ք ինքնանկար՝ բնութագրելով Ձեզ՝ «Ես ինովացիոն ուսուցիչ եմ, որովհետև......»: | | | | կոմպետենցիաները, որոնք կնպաստեն անհատական ոճի ձևավորմանը: Ներկայացնել ինովացիոն ուսուցչի կերպարը, ով կկարողանա դիմակայել ժամանակի մարտահրավերներին և լուծել իր գործունեության ընթացքում ծագող բազմաբնույթ խնդիրները: | ուսուցչի այն կոմպետենցիաների տիրապետման հնարավորությունները, որոնք կապահովեն ուսուցչի հեղինակության վարկանիշն ու դասավանդման բարձր որակը:<br>**Կկարողանան.**<br>Որպես նորարար ուսուցիչ իրենց գաղափարները կյանքի կոչել դասավանդման ընթացքում: |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | |
| | **Ընդամենը՝** | **60** | **46** | **14** | | |

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

# ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| Դասընթացի անվանում | Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ | 5 կրեդիտ |
|---|---|---|
| 70 ժամ լսարանային, որից 10 ժամը՝ դասախոսություն, 60 ժամ՝ լաբորատոր աշխատանք | 80 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |

**Դասընթացի նպատակն է՝**

- *ձևավորել անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ ՏՀՏ մասնագիտական ոլորտում կիրառելու համար*
- *զարգացնել գործնական հմտություններ կիրառական ծրագրերը մասնագիտական նպատակներով կիրառման գործընթացում*

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացի ավարտին շրջանավարտն ունակ կլինի՝**

**Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- *մեկնաբանելու ՏՀՏ-ների դերն ու նշանակությունը մասնագիտական կրթության համակարգում,*
- *հիմնավորելու ՏՀՏ-ների կիրառման արդյունավետությունը մասնագիտական ոլորտում*

**Բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- *ստեղծելու մասնագիտական ոլորտում տարբեր տեսադասեր, անիմացիաներ, թեստեր*
- *նախագծելու մասնագիտական ոլորտում հաշվարկային տարբեր համակարգեր, որոնք կարող է կիրառել հետազոտական աշխատանքներում*

**Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- *օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ միջոցներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),*
- *օգտագործելու համակարգչային մասնագիտական ծրագրային ապահովումները մասնագիտական խնդիրներ լուծելիս:*

| |
|---|
| Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը.<br>• *գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:* |
| Գնահատման մեթոդները և չափանիշները.<br>▪ *Ուսումնական նախագծերի ներկայացում,*<br>▪ *Գործնական առաջադրանքների իրականացում* |
| Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.<br>**Շաբաթ 1. ՏՀՏ ներածություն կրթության մեջ**<br>*Լաբորատոր աշխատանք 1. Google Docs-ի ուսուցում՝ տեքստային փաստաթղթեր ստեղծելու և համագործակցելու համար:*<br>*Լաբորատոր աշխատանք 2. Google Sheets-ի օգտագործումը ուսումնական նախագծեր և առաջադրանքներ կազմակերպելու համար:*<br>**Շաբաթ 2. Թվային կրթական միջոցների մշակում և օգտագործում**<br>*Լաբորատոր աշխատանք 3. Google Presentation, Microsoft PowerPoint-ում շնորհանդեսների ստեղծում՝ մուլտիմեդիա (պատկերներ, տեսանյութեր) կիրառմամբ:*<br>*Լաբորատոր աշխատանք 4. Canva-ի գործիքների ծանոթացում և կիրառում:*<br>**Շաբաթ 3. Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ**<br>*Լաբորատոր աշխատանք 5. Kahoot-ի միջոցով կրթական վիկտորինաների և խաղերի մշակում:*<br>*Լաբորատոր աշխատանք 6. Google Apps-ի օգտագործումը՝ որպես համագործակցության և քննարկման ինտերակտիվ տեղեկատու տախտակ:*<br>**Շաբաթ 4. Առցանց հաղորդակցություն և համագործակցություն**<br>*Լաբորատոր աշխատանք 7. Վիրտուալ հանդիպումներ Zoom-ի կամ Google Meet-ի միջոցով:*<br>*Լաբորատոր աշխատանք 8. Google Drive-ը դասընթացի նյութերը պահելու և համօգտագործելու համար:*<br>**Շաբաթ 5. Նախագծային ուսուցում՝ օգտագործելով ՏՀՏ գործիքներ**<br>*Լաբորատոր աշխատանք 9. Google Sites՝ պարզ վեբ էջեր և պորտֆոլիո նախագծեր* |

| |
|---|
| *ստեղծելու համար:*<br>*Լաբորատոր աշխատանք 10. Ծանոթացում Google Classroom համակարգի հետ:*<br>**Շաբաթ 6. Կրթական վերլուծություն և գնահատում՝ ՏՀՏ կիրառմամբ**<br>*Լաբորատոր աշխատանք 11. Ստեղծել հարցումներ և հարցաթերթիկներ՝ օգտագործելով Google Forms՝ աշակերտների գիտելիքները գնահատելու համար:*<br>*Լաբորատոր աշխատանք 12. Տվյալների վերլուծության և հաշվետվությունների համար Excel-ի հիմնական գործառույթների տիրապետում:*<br>**Շաբաթ 7. ՏՀՏ անվտանգության և էթիկական խնդիրներ**<br>*Լաբորատոր աշխատանք 13. Կիբերանվտանգության հիմունքներ և համացանցի անվտանգ օգտագործում, ծանոթացում համացանցում անվտանգ վարքագծի կանոններին:*<br>***Շաբաթ 8. Ամփոփիչ նախագիծ, որը պետք է ներկայացնել PowerPoint-ի կամ Google Slides-ի միջոցով:*** |
| Գրականության ցանկ.<br>• *Семенова И.Н., Слепухин А.А. Методика использования информационно-коммуникационных технологий в учебном процессе. Ч. 2. Методология использования информационных образовательных технологий : Учебное пособие [Текст] / Под ред. Б.Е. Стариченко / Урал. гос. пед. ун-т. Екатеринбург, 2013. – 144 с.*<br>• https://www.youtube.com/watch?v=_40zKCYcyLQ<br>• *Информационные и коммуникационные технологии в образовании: монография / Под.редакцией: Бадарча Дендева –М. : ИИТО ЮНЕСКО, 2013.*<br>• *Исаев, Г.Н. Информационные технологии: Учебное пособие / Г.Н. Исаев. - М.: Омега-Л, 2013. - 464 с.*<br>• *Федотова, Е.Л. Информационные технологии в науке и образовании: Учебное пособие / Е.Л. Федотова, А.А. Федотов. - М.: ИД ФОРУМ, НИЦ ИНФРА-М, 2013. - 336 с.* |

## «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ» դասընթացի թեմատիկ պլան

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. /Լաբ. | | | |
| 1. | Լաբորատոր աշխատանք 1. Google Docs-ի ուսուցում՝ տեքստային փաստաթղթեր ստեղծելու և համագործակցելու համար | 4 | 2 | 2 | սովորողներին ծանոթացնել Google Docs-ի գործիքներին և համատեղ աշխատանքի, ուսումնական նախագծերի կազմակերպմանը | **Կիմանան՝**<br>▪ Google Docs-ի աշխատանքային տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ կրթական նախագծեր՝ կիրառելով Google Docs-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Docs-ի գործիքներին և համատեղ աշխատանքի սկզբունքներին | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Լաբորատոր աշխատանք 2. Google Sheets-ի օգտագործումը ուսումնական նախագծեր և առաջադրանքներ կազմակերպելու համար | 6 | 0 | 6 | սովորողներին ծանոթացնել Google Sheets -ի գործիքներին և համատեղ աշխատանքի, ուսումնական նախագծերի կազմակերպմանը | **Կիմանան՝**<br>▪ Google Sheets -ի աշխատանքային տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ կրթական նախագծեր՝ կիրառելով Google Sheets -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Sheets-ի գործիքներին և համատեղ աշխատանքի սկզբունքներին | գործնական առաջադրանք |
| 3. | Լաբորատոր աշխատանք 3. Google Presentation, Microsoft PowerPoint-ում շնորհանդեսների ստեղծում՝ մուլտիմեդիա (պատկերներ, տեսանյութեր) | 8 | 2 | 6 | սովորողներին ծանոթացնել Google Presentation, Microsoft PowerPoint-ի գործիքներին և համատեղ աշխատանքի, ուսումնական նախագծերի | **Կիմանան՝**<br>▪ Google Presentation, Microsoft PowerPoint -ի աշխատանքային տիրույթը և աշխատանքի | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կիրառմամբ | | | | կազմակերպմանը | սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ կրթական նախագծեր՝ կիրառելով Google Presentation, Microsoft PowerPoint -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Presentation, Microsoft PowerPoint -ի գործիքներին և համատեղ աշխատանքի սկզբունքներին | |
| 4 | Լաբորատոր աշխատանք 4. Canva-ի գործիքների ծանոթացում և կիրառում | 4 | 0 | 4 | սովորողներին ծանոթացնել Canva-ի գործիքներին և համատեղ աշխատանքի, ուսումնական նախագծերի կազմակերպմանը | **Կիմանան՝**<br>▪ Canva-ի աշխատանքային տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | իրականացնել համատեղ կրթական նախագծեր՝ կիրառելով Canva -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Canva-ի գործիքներին և համատեղ աշխատանքի սկզբունքներին | |
| 5 | Լաբորատոր աշխատանք 5. Kahoot-ի միջոցով կրթական վիկտորինաների և խաղերի մշակում | 4 | 0 | 4 | սովորողներին ծանոթացնել Kahoot-ի գործիքներին և ուսումնական առաջադրանքների կազմակերպմանը | **Կիմանան՝**<br>▪ Kahoot-ի աշխատանքային տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ առաջադրանքներ՝ կիրառելով Kahoot-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Kahoot-ի գործիքներին և | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աշխատանքի սկզբունքներին | |
| 6 | Լաբորատոր աշխատանք 6. Google Apps-ի օգտագործումը՝ որպես համագործակցության և քննարկման ինտերակտիվ տեղեկատու տախտակ | 2 | 0 | 2 | սովորողներին ծանոթացնել Google Apps-ի գործիքներին և ուսումնական առաջադրանքների կազմակերպմանը | **Գիտենան՝**<br>▪ Google Apps-ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ առաջադրանքներ՝ կիրառելով Google Apps -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Apps-ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | գործնական առաջադրանք |
| 7. | Լաբորատոր աշխատանք 7. Վիրտուալ հանդիպումներ Zoom-ի կամ Google Meet-ի միջոցով | 4 | 0 | 4 | սովորողներին ծանոթացնել Zoom-ի կամ Google Meet-ի գործիքներին և | **Գիտենան՝**<br>▪ Zoom-ի կամ Google Meet-ի կիրառման | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ուսումնական գործընթացի կազմակերպմանը | տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ ուսումնառություն՝ կիրառելով Zoom-ի կամ Google Meet-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Zoom-ի կամ Google Meet-ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | |
| 8. | Լաբորատոր աշխատանք 8. Google Drive-ը դասընթացի նյութերը պահելու և համօգտագործելու համար | 2 | 0 | 2 | սովորողներին ծանոթացնել Google Drive-ի գործիքներին և համատեղ ուսումնական գործընթացի կազմակերպմանը | **Կիմանան՝**<br>▪ Google Drive-ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կրթական նախագծեր ՝ կիրառելով Google Drive-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Drive-ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | |
| 9. | Լաբորատոր աշխատանք 9. Google կայքեր՝ պարզ վեբ էջեր և պորտֆոլիո նախագծեր ստեղծելու համար | 6 | 0 | 6 | սովորողներին ծանոթացնել Google Sites-ի գործիքներին | **Կիմանան՝**<br>▪ Google Sites-ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ կրթական ՝ կիրառելով Google Sites -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Sites-ի գործիքներին և | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աշխատանքի սկզբունքներին | |
| 10. | Լաբորատոր աշխատանք 10. Ծանոթացում Google Classroom համակարգի հետ | 8 | 2 | 6 | սովորողներին ծանոթացնել Google Classroom-ի գործիքներին և տիրույթին | **Գիտենան՝**<br>▪ Google Classroom-ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել համատեղ դասընթաց՝ կիրառելով Google Classroom-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Classroom -ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | գործնական առաջադրանք |
| 11. | Լաբորատոր աշխատանք 11. Ստեղծել հարցումներ և հարցաթերթիկներ՝ | 10 | 2 | 8 | սովորողներին ծանոթացնել Google Forms-ի գործիքներին և տիրույթին | **Գիտենան՝**<br>▪ Google Forms -ի կիրառման տիրույթը և | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | օգտագործելով Google Forms՝ աշակերտների գիտելիքները գնահատելու համար | | | | | աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել գնահատում՝ կիրառելով Google Forms-ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Forms-ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | |
| 12. | Լաբորատոր աշխատանք 12. Տվյալների վերլուծության և հաշվետվությունների համար Excel-ի հիմնական գործառույթների տիրապետում | 8 | 2 | 6 | սովորողներին ծանոթացնել Ms Excel-ի գործիքներին և բանաձևերին | **Կիմանան՝**<br>▪ Ms Excel -ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ նախագծել և իրականացնել գնահատում՝ կիրառելով Ms Excel -ի գործիքները | գործնական առաջադրանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | **Կտիրապետեն՝**<br>▪ Ms Excel-ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | |
| 13. | Լաբորատոր աշխատանք 13. Կիբերանվտանգության հիմունքներ և համացանցի անվտանգ օգտագործում, ծանոթացում համացանցում անվտանգ վարքագծի կանոններին | 2 | 0 | 2 | սովորողներին ծանոթացնել Google Family Link-ի գործիքներին և բանաձևերին | **Կիմանան՝**<br>▪ Google Family Link -ի կիրառման տիրույթը և աշխատանքի սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ իրականացնել ծնողական վերահսկողություն՝ կիրառելով Google Family Link -ի գործիքները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Google Family Link -ի գործիքներին և աշխատանքի սկզբունքներին | գործնական առաջադրանք |
| 14. | Շաբաթ 8. Ամփոփիչ նախագիծ, | 2 | 0 | 2 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | որը պետք է ներկայացնել PowerPoint-ի կամ Google Slides-ի միջոցով | | | | |
| **Ընդամենը՝** | | 70 | 10 | 60 | |

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| **1.** | Անգլերենի դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60 ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է .**

- ձևավորել սովորողների մեջ տեսական գիտելիքների ընդգրկուն հիմք՝ ապագա մասնագիտական գործունեության համար,
- սովորողներին ծանոթացնել անգլերենի դասավանդման մեթոդիկայի ձևավորմանը, զարգացման պատմությանը,
- բացահայտել տեսությունների զարգացման միտումները, մեթոդները,

- հիմնավորել ժամանակակից սկզբունքների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,
- ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը, հասցեատիրոջը, ուսուցման օբյեկտներին և սուբյեկտներին:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները.**

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

***Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն***

- *ներկայացնել անգլերենի դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները, մեթոդների պատմությունը,*
- *հիմնավորել հաղորդակցական մեթոդների արդյունավետությունը,*
- *բացահայտել անգլերենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները:*

***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ***

- *կիրառել համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում*
- *համեմատել անգլերենի ավանդական, դասական և այլընտրանքային դասավանդման մեթոդները և հիմնավորել հաղորդակցական մոտեցման կիրառման արդյունավետությունը,*
- *կիրառել ընկալողական և վերարտադրողական կարողությունները և հմտությունները՝ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների,*
- *ստեղծել ընթացիկ և ավարտական ստուգման թեստեր՝ըստ մոդելի կամ ցուցանմուշի:*

| |
|---|
| **Դասընթացը ձևավորում է  հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները**.<br>• մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,<br>• դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել անգլերենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները անգլերենի դասավանդման գործընթացում,<br>• կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,<br>• կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,<br>• հաղորդակցվել օտար լեզվով: |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.<br>• *դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ*<br>• *գործնական առաջադրանքներ*<br>• *բանավեճեր և դիալոգներ/ անգլերենով/*<br>• *թեմատիկ/ուսումնական/ ֆիլմերի դիտում և քննարկում:* |

| |
|---|
| **Գնահատման մեթոդները և միջոցները.**<br>• Բանավոր հարցում,<br>• Գործնական աշխատանքներ,<br>• Ռեֆերատներ: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**<br>• *Անգլերենի դասավանդումը որպես գիտություն: Անգլերենի դասավաղնման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:*<br>• *Անգլերենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ քերականական-թարգմանական (grammar-translation), ուղիղ (direct), տեսալսողական (audiovisual), հաղորդակցական (communicative):*<br>• *Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:*<br>• *Քերականական նյութի մատուցման մեթոդներ:*<br>• *Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում:*<br>• *Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ:*<br>• *Մենախոսության ուսուցում:* |

- *Երկխոսության ուսուցում:*
- *Միջմշակութային ուսուցում:*
- *Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը):*
- *Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ:*
- *Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին) դասակարգում:*
- *Ընթերցանության տեխնիկայի ուսուցում:*
- *Ընթերցանության տարբեր տեսակների մակարդակների բնութագրում:*
- *Ընթերցանության տեսակների ձևավորման մեթոդներ ու ռազմավարություններ:*
- *Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում:*
- *Գրավոր խոսքի ուսուցում:*
- *Գրավոր խոսքի ուսուցման նպատակները:*
- *Գրելու տեխնիկա (տառուսուցում, ուղղագրություն) և գրավոր խոսքի (մտքերը գրավոր արտահայտելու) կարողություն:*
- *Վարժությունների համակարգ՝ ուղղված գրելու տեխնիկայի և գրավոր խոսքի կարողությունների ու հմտությունների զարգացմանը:*
- *Գրավոր խոսքի ստուգման ձևերը:*
- *Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր:*
- *Անգլերենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:*

**Գրականության ցանկ.**


- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում «օտար լեզուներ» բնագավառի («անգլերեն», «գերմաներեն», «ֆրանսերեն» եվ «ռուսերեն» առարկաների 2-12-րդ դասարանների) առարկայական չափորոշիչ, Երևան 2023*
- *Աստվածատրյան Մ. Գ. և ուրիշներ, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), Երևան, 2007*
- *Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոլյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., Խմբ. ՝ Սուրեն Զոլյան, Մելանյա Աստվածատրյան և ուրիշ., Եր., 2005*
- *Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ, Ազգային զեկույց, Երևան, 2008*
- *Факторович А. А. Педагогические технологии, 3-е издание, Москва 2023*
- *Маслыко, Е. А., Бабинская, П. К., Бутько, А. Ф., Петрова, С. И., Попов, А. И. Настольная книга преподавателя иностранного языка / Е. А. Маслыко, П. К. Бабинская, А. Ф. Бутько, С. И. Петрова, А. И. Попов, М., 1992*
- *M. Spratt, A. Pulverness, M. Williams, Teaching Knowledge Test Course, Module 1,2 & 3, Cambridge University Press, 2011*
- *K. Bentley, TKT Course, CLIL Module, Cambridge University Press 2010*
- *D. Riddell, Teach ESL, The complete guide, 2014*
- *Educational Technology, Edited By Dr. Kulwinder Pal, 2022*

- *Common European Framework of Reference: Teaching, Learning, Assessment. CoE, Strasbourg, 2001*
- *Joe Sheils, Communication in the modern language classroom. Council of Europe Press, 1993*
- *Scrivener Jim Learning Teaching: A guidebook for English language teachers, Macmillan Publishers Limited. – 2005*


**Թեմա 1. Անգլերենի դասավանդումը որպես գիտություն: (12 ժամ)**

Անգլերենի դասավաղնման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ: Անգլերենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ քերականական-թարգմանական (grammar-translation), ուղիղ (direct), տեսալսողական (audiovisual), հաղորդակցական (communicative):

**<u>Գործնական աշխատանք-</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, դասավանդման մոտեցումների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Անգլերենի լեզվական միջոցների ուսուցումը: (12 ժամ)**

Անգլերենի բառապաշարի ուսուցումը: Քերականության ուսուցումը: Քերականական նյութի մատուցման մեթոդներ: Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:  Անգլերենի հնչյունաբանության ուսուցում:

**<u>Գործնական աշխատանք</u>** -8ժամ (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3.Խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցում:** (12 ժամ)

**Բանավոր խոսքի ուսուցում: Ունկնդրման ուսուցում:** Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն,

երկխոսություն) ուսուցում: Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ: Մենախոսության ուսուցում: Երկխոսության ուսուցում:

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4.Խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցում: (12ժամ)**

**Ընթերցանության ուսուցում: Գրավոր խոսքի ուսուցում:**

Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը): Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ: Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին) դասակարգում: Ընթերցանության տեխնիկայի ուսուցում:

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 5. Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը անգլերենի ուսուցման գործընթացում: (10 ժամ)**

Գրավոր խոսքի ստուգման ձևերը: Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր: Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում:

<u>**Գործնական աշխատանք**</u>

(Նախնական գնահատում: Ընթացիկ գնահատում: Ամփոփիչ գնահատում):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

«Անգլերենի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1 | **Անգլերենի դասավանդումը որպես գիտություն:**<br>**Գործնական աշխատանք՝**<br>Ընտրել անգլերենի դասավանդման որևէ մոտեցում և ներկայացնել սահիկաշարի ուղեկցմամբ: | **12** | **4** | **8** | ▪ ներկայացնել անգլերենի դասավանդման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:<br>▪ Ծանոթացնել անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդներին և մոտեցումներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կձևակերպեն անգլերենի դասավադման նպատակները,<br>▪ կընտրեն, կհամադրեն և կհակադրեն անգլերենի դասավադման ավանդական և ժամանակակից մոտեցումներն ու մեթոդները: | |
| 2. | **Անգլերենի լեզվական միջոցների ուսուցումը:**<br>Անգլերենի բառապաշարի | **12** | **4** | **8** | Հաղորդել սովորողներին անգլերենի հնչյունաբանության, բառապաշարի և | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կտիրապետեն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ուսուցումը: Քերականության ուսուցումը: Քերականական նյութի մատուցման մեթոդներ: Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն: Անգլերենի հնչյունաբանության ուսուցում:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | | | | քերականության ուսուցման վերաբերյալ գիտելիքներ, ներկայացնել ռեցեպտիվ և պրոդուկտիվ հմտությունների ձևավորման ուղիները: | անգլերենի լեզվական միջոցների ուսուցման մեթոդներին,<br>▪ նշել անգլերենի լեզվական միջոցների արդյունավետ ուսուցումն ապահովող գործոնները: | |
| 3. | **Խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցում: Բանավոր խոսքի ուսուցում: Ունկնդրման** | **12** | **4** | **8** | Ներկայացնել խոսքային գործունեության ուսուցման տարբեր տեսակները և զարգացնել դրա վերաբերյալ սովորողների տեսական | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կկարողանան վերլուծել խոսքային գործունեության տարբեր տեսակների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ուսուցում:** Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում: Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ: Մենախոսության ուսուցում: Երկխոսության ուսուցում:<br>**Գործնական աշխատանք՝**<br>Թեմատիկ երկխոսության միջոցով | | | | գիտելիքները: | ուսուցման առանձնահատկությունները:<br>▪ կտիրապետեն խոսքային գործունեության առանձին տեսակների ուսուցման հմտություններին:<br><br>Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կկարողանան վերլուծել ընթերցանության և գրավոր խոսքի ուսուցման առանձնահատկությունները:<br>▪ կտիրապետեն դրանց ուսուցման հմտություններին: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնագիտական բառապաշարի հարստացում:<br><br>**Ընթերցանության ուսուցում: Գրավոր խոսքի ուսուցում:**<br>Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը): Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ: Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, | 12 | 4 | 8 | Ներկայացնել ընթերցանության և գրավոր խոսքի ուսուցման առանձնահատկությունները և զարգացնել թեմայի վերաբերյալ սովորողների տեսական գիտելիքները: | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մանրազնին) դասակարգում: Ընթերցանության տեխնիկայի ուսուցում: **Գործնական աշխատանք՝** Տարբեր տիպի աշխտանքների միջոցով ընթերցանության և գրավոր խոսքի հմտությունների զարգացում: | | | | | | |
| | **Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը անգլերենի ուսուցման գործընթացում:** Գրավոր խոսքի ստուգման ձևերը: Խոսքային կարողությունների ստուգման | 10 | 4 | 6 | Ներկայացնել արժևորումը/գնահատումը՝ որպես սովորողի ցուցաբերած արդյունքի կամ կատարողականի մասին արժեքային դատողությունների իրացման գործընթաց: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները. <br>▪ կիմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները, <br>▪ կարժևորեն գնահատման գործառույթը, <br>▪ կգիտակցեն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | այլընտրանքային ձևեր: Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում: Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը անգլերենի ուսուցման գործընթացում:<br><br>▪ Գնահատում և արժևորում: Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները: Գնահատման տեսակները:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Թեստի կառուցման | | | | | Գսովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կդասակարգեն ուսումնառական նպատակները ըստ առաջնահերթությունների,<br>▪ կընտրեն գնահատման մեթոդները՝ ի տեղի: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սկզբունքները։ | | | | | | |
| | Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում | 2 | | 2 | | | Թեստային աշխատանք |
| Ընդամենը՝ | | 60 | 20 | 40 | | | |

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Դասընթացի անվանում | Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա | 4կրեդիտ | 120ժամ |
| 60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է** .

- Սովորողներին ծանոթացնել աշխարհագրության դասավանդման նպատակին, խնդիրներին,
- ներկայացնել աշխարհագրության դասավանդման գործընթացում կիրառվող արդի մեթոդները, տեխնոլոգիաներն ու միջոցները,
- ծանոթացնել աշխարհագրության դասավադման պատմությանը և զարգացման փուլերին:
- ծանոթացնել աշխարհագրության դասավանդման գործնական կարողություններին և հմտություններին:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

**Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**

- Ներկայացնել դպրոցական աշխարհագրության կրթադաստիրակչական դերը,
- բացատրել աշխարհագրության արդի հայեցակարգերը,
- ներկայացնել աշխարհագրության դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,
- մեկնաբանել աշխարհագրության դասավանդման հիմնական հասկացությունները:

**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.**

- Կիրառել աշխարհագրության դասավանդման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաններ,
- պլանավորել և իրականացնել հանրակրթական դպրոցում աշխարհագրության ուսուցման արդյունավետ գործընթաց՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

**Գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- Կիրառել ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ աշխարհագրության դասավանդման գործընթացում,
- ծավալել ինքնուրույն մասնագիտական և մանկավարժական գործունեություն,
- ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը:

**Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները**.

- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել աշխարհագրության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները աշխարհագրության դասավանդման գործընթացում,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը**.

- դասախոսություններ՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,
- գործնական պարապունքներ,
- համր և ակտիվ դասեր,
- բանավեճեր:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

- *Բանավոր հարցում,*
- *Ուսումնական նախագծերի ներկայացում,*
- *Ռեֆերատներ:*

Ելնելով բանավոր հարցման և նախագծերի ներկայացման արդյունքներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ, դասընթացը գնահատվում է առավելագույնը 20 միավոր:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**

- Աշխարհագրության դասավանդման մեթոդիկան որպես գիտություն, կապն այլ գիտությունների հետ:
- Դասընթացի ուսումնասիրության առարկան, հետազոտման մեթոդները, գլխավոր խնդիրները:
- Դպրոցական աշխարհագրության պատմությունից: Աշխարհագրությունը անցյալի հայկական կրթօջախներում: Հայ ականավոր մանկավարժ-աշխարհագետներ:
- Դպրոցական աշխարհագրությունը որպես ամբողջական համակարգ, դրա արդի հայեցակարգերը և կառուցվածքը:
- Դպրոցական աշխարհագրության ծրագրերը, դասագրքերը, ուսուցչի ձեռնարկները, աշխատանքային տետրերը, դիդակտիկ պարագաները:
- Աշխարհագրության դասավանդման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները:
- Դպրոցական աշխարհագրությունը որպես ինտելեկտուալ և գործնական կարողությունների ձևավորման դասընթաց:

**Գրականության ցանկ.**


- Խ. Սարգսյան, Աշխարհագրության դասավանդման մեթոդիկան, Եր., <<Զանգակ-97>>, 2002,
- Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան Աշխահագրություն 7-8. Ուսուցչի ձեռնարկ, Եր., 2013,
- Աշխարհագրության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու / հեղ. Մ. Մանասյան, Ս. Սուվարյան և ուրիշ./ Եր., 2007թ.:
- Աշխարհագրություն, մեթոդական ցուցումներ սեմինար և գործնական պարապունքներ անցկացնելու համար, ՀԱԱՀ, Երևան 2015թ.:
- Դպրոցական աշխարհագրության ժամանակակից բովանդակությունը և դրա կատարելագործման խնդիրները, Գիտական տեղեկագիր, ԱրՊՀ, պրակ 1, 2022:
- Դպրոցական աշխարհագրության առարկայի դերը դաստիարակչության գործում, Գիտական տեղեկագիր,

| |
| --- |
| ՇՊՀ, 2021:<br>• Աշխարհագրություն առարկայի դասավանդման դերը հանրակրթության համակարգում, Կրթությունը և գիտությունը Արցախում, համար 1-2, Երևան, 2014թ.: |

**Թեմատիկ պլան**

**Թեմա 1. Դասընթացի խնդիրներն ու նպատակները: Աշխարհագրության դպրոցական դասընթացի ընդհանուր բնութագիրը: Աշխարհագրության ծրագրերը և դրանց բովանդակության նորացումները: (11 ժամ)**

Աշխարհագրության դասընթացի տեղն ու դերը հանրակրթության մեջ: «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրության» առարկաների դերը հայեցի կրթության և դաստիարակության կարևորագույն միջոց: «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրության» առարկաների բովանդակության ձևավորումը (չափորոշիչ, ծրագիր) և բովանդակային բաղադրիչները:

**<u>Գործնական աշխատանք</u>**՝ (SWOT վերլուծություն, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Աշխարհագրության դասընթացի բովանդակությունը, նորույթները, ուսուցումը, ուսուցման առանձնահատկությունները 7-8 դասարաններում: (12 ժամ)**

Աշխարհագրության ուսուցման սկզբունքները: Ժամանակակից մեթոդներով ուսուցման կազմակերպումը: Գործնական ուսուցման և

դասի թեմատիկ պլանավորման առանձնահատկությունները: Համակարգչային ներկայացումների կառուցման մոտեցումները:

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (SWOT վերլուծություն, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3. Հայաստանի աշխարհագրության ուսուցումը 9-րդ դասարանում, թեմատիկ պլանների, ուսումնական նյութերի ստեղծում (11 ժամ)**

Աշխարհագրության ուսուցիչը և ժամանակակից դասը: Ուսուցման սկզբունքները: Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները: Դասի պլանավորումը: Ուսուցման ժամանակակից ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները, դրանց նպատակային կիրառությունը դասին: Գործնական աշխատանքի ժամանակակից տեսակները: Ուսումնական գծակարգերի (աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, գծապատկերներ, հատակագծեր և այլն) և սահասալիկների ստեղծում:

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (SWOT վերլուծություն, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Աշխարհագրության դասավանդման առանձնահատկությունները 10-12-րդ դասարաններում, ուսուցման միջոցները (12 ժամ)**

Աշխարհագրության ժամանակակից դասին ներկայացվող տեխնոլոգիական պահանջները: Որոնողական-հետազոտական գործունեության զարգացումը ուսուցման գործընթացում: Աշխարհագրության ուսուցման ժամանակակից միջոցները և էլեկտրոնային միջոցները (համակարգիչ, համացանցային կայքեր, էլեկտրոնային դասագիրք, էլեկտրոնային գրադարան և նյութեր, տեսադասեր, հեռավար ուսուցում):

<u>**Գործնական աշխատանք**</u>՝ (SWOT վերլուծություն, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 5. Աշխարհագրության դասավանդման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մեթոդները, Երկրատեղեկատվական համակարգերի կիրառման առանձնահատկությունները և դիդակտիկական սկզբունքներն**

**աշխարհագրության ուսուցման գործընթացում (12 ժամ)**

Համակարգչային նյութերի, ծրագրերի, տեղեկատվական նյութերի պատրաստում, ցուցադրական նյութերի մշակում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում աշխարհագրության դասաժամերին, երկրատեղեկատվական համակարգերի գործիքակազմի կիրառում:

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում պլանավորում (2 ժամ):**

*Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| | Ներածություն: Դասընթացի բովանդակությունը, նորույթները:<br><br>Դասընթացի նպատակները և խնդիրները:<br><br>«Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրության» բարելավված ծրագրերը և դրանց կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունները, նորույթները: | 11 | **4** | 7 | Զարգացնել ուսուցչի մասնագիտական հմտությունները, ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները:<br><br>Զարգացնել ուսուցչի մեթոդամանկավարժական գործունեությունը և հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները: | **Մասնակիցները կիմանան՝**<br>● աշխարհագրության ուսուցման սկզբունքները.<br>● աշխարհագրության առարկայի չափորոշիչներն ու առարկայական ծրագիրը<br><br>● **Մասնակիները կկարողանան՝**<br>● պլանավորել և վարել դասաժամը նոր | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | չափորոշիչներին համապատասխան<br>● պլանավորել և վարել ինտեգրված դաս. | |
| | **Աշխարհագրության ուսուցումը, ուսուցման առանձնահատկությունները 7-8 դասարաններում**:<br><br>Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նոր մոտեցումներ՝ դասընթացը նորաձև ներկայացման համար:<br><br>Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ դասի որևէ թեմայի (ինքնուրույն աշխատանք՝ սահասալիկի և տեսանյութի ստեղծում):<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Ամփոփիչ դասի պլանների կազմում:<br><br>Որևէ թեմայից տեսանյութի կամ | 12 | 4 | 8 | Կնպաստի աշխարհագրության դասավանդման արդյունավետությանը,<br><br>կապահովի տարբերակված ուսուցման կազմակերպում՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ միջոցներ:<br><br>Կզարգացնի նյութի գործնական կիրառման հմտությունները դասավանդելիս:<br><br>Կխթանի սովորողների ինքնուրույնությանը, ինքնավերահսկման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը: | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սահասալիկի պատրաստում: | | | | | | |
| | **Հայաստանի աշխարհագրության ուսուցումը 9-րդ դասարանում, թեմատիկ պլանների, ուսումնական նյութերի ստեղծում**:<br><br>Չափորոշիչահեն կրթության ապահովումը:<br><br>Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառություն առարկան դասավանդելիս:<br><br>Գործնական աշխատանքների ուսուցման առանձնահատկություններ:<br><br>Սովորողների ստեղծագործական մտածողություն ու խոսքի զարգացում:<br><br>Առարկայի թեմատիկ պլանավորման սկզբունքները (ինքնուրույն աշխատանք):<br><br>**Գործնական աշխատանք՝** | 11 | **4** | 7 | Զարգացնի ներառված սովորողի դիտարկման և ուսումնական ունակությունների բացահայտման գործընթացում մասնակցության շրջանակի ներկայացումը և դիտարկման հմտությունները:<br><br>Զարգացնի ուսուցման ժամանակակից մեթոդների տիրապետման և կիրառման կարողությունները: | **Մասնակիցները կիմանան՝**<br><br>● Ուսուցման ժամանակակից մեթոդներ.<br>**Մասնակինները կկարողանան՝**<br><br>● պլանավորել և անցկացնել ուսուցման դասեր՝ կիրառելով տեղեկատվական համակարգեր | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | | | | | | |
| | **Աշխարհագրության դասավանդման առանձնահատկությունները 10-12-րդ դասարաններում, ուսուցման միջոցները**<br><br>Աշխարհագրության դասին ներկայացվող ժամանակակից տեխնոլոգիական պահանջներ:<br><br>Սովորողների վերլուծական կարողությունների զարգացում:<br><br>Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպում աշխարհագրության ուսուցման գործընթացում:<br><br>Որևէ թեմայի ուսուցում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:<br><br>Որևէ թեմայի էլեկտրոնային դասի պլանի կազմում, տեսանյութի ստեղծում: | 12 | 4 | 8 | Կնպաստի սովորողների վերլուծական կարողությունների զարգացմանը աշխարհագրության ուսուցման գործընթացում:<br><br>Կզարգացնի էլեկտրոնային դասի պլանների կազմումն ու տեսանյութերի ստեղծման հմտությունները, | **Մասնակիցները կիմանան՝**<br><br>• աշխարհագրության դասին ներկայացվող ժամանակակից տեխնոլոգիական պահանջները<br>• սովորողների հետազոտական գործունեության կազմակերպման սկզբունքները.<br>**Մասնակինները կկարողանան՝**<br><br>• կազմակերպել և ղեկավարել սովորողների որոնողա-հետազոտական գործունեությունը.<br>• որևէ թեմայի վերաբերյալ ստեղծել ցուցադրական ուսումնական նյութ: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Որևէ թեմայի վերաբերյալ ուսումնական նյութի ստեղծում (ինքնուրույն աշխատանք):<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ բնագրային որևէ նյութի (սահասալիկի կամ տեսանյութի ստեղծում):<br><br>Որևէ թեմայի մասին ուսուցողական ցուցապաստառի ստեղծում: | | | | | | |
| | **Աշխարհագրության դասավանդման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդները, երկրատեղեկատվական համակարգերի կիրառման առանձնահատկությունները աշխարհագրության ուսուցման գործընթացում**<br><br>Գնահատման նյութերի մշակում և ժամանակակից սկզբունքներով գնահատման | 12 | 4 | 8 | Նպաստի որևէ թեմայի վերաբերյալ նյութերի մշակման և կազմման գործընթացին,<br><br>Ուսուցման ժամանակ կիրառել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ<br><br>Ուսուցման ժամանակ կիրառել | **Մասնակիցները կիմանան՝**<br><br>● օգտագործել SS-ը նոր նյութի մատուցման ժամանակ,<br>● օգտագործել ԵՏՀ գործիքները նոր նյութի մատուցման ժամանակ<br><br>**Մասնակիները** | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սանդղակների կազմում: Գրավոր խոսքի գնահատման սկզբունքներն ու եղանակները: Թեստ, թեստի տեսակները, կառուցվածքը, կազմման սկզբունքները: Գիտելիքների գնահատման մատյանի ստեղծում: **Գործնական աշխատանք՝** Որևէ թեմայի ուսուցման ժամանակ ցուցադրական նյութի ստեղծում՝ օգտագործելով ՏՏ-ն: | | | | երկրատեղեկատվական համակարգի գործիքներ | **կկարողանան՝** • կազմել դասեր ցուցադրական նյութեր ՏՏ-ների միջոցով • կազմել դասերի ցուցադրական նյութեր ԵՏՀ-երի միջոցով | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | Գնահատի դասընթացը՝ զարգացնելով հմտությունները | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | 20 | 40 | | | |

# ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ  ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

<table>
<tr><td>Դասընթացի անվանումը</td><td colspan="2">Գերմաներենի դասավանդման  մեթոդիկա</td><td>4 կրեդիտ</td><td>120ժամ</td></tr>
<tr><td colspan="2">60ժամ լսարանային, որից՝ 20ժ.  դաս.  40ժ.  գործն. ,</td><td colspan="3">60 ժամ ինքնուրույն և արտալսարանային</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցման ձևը՝ առկա</td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="5">Դասընթացի նպատակն է<br><ul><li>Սովորողներին փոխանցել գերմաներենի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, ծանոթացնել նպատակներին և խնդիրներին, բովանդակությանը և սկզբունքներին, զարգացման միտումներին և նորարարական մոտեցումներին:</li><li>Զարգացնել գերմաներենի դաս կազմակերպելու և վարելու, դասավանդման ժամանակ ծագած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ հմտություններ:</li><li>ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,</li><li>ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը:</li><li>Խրախուսել սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ խթանելով պրակտիկ փորձի հիման վրա մեթոդական հմտությունների կատարելագործումը:</li></ul></td></tr>
</table>

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները.**

Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝

**Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.**

0. մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
1. դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել գերմաներենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա
2. օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները գերմաներենի դասավանդման գործընթացում,
3. կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,
4. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից:

***Բ.* Գործնական մասնագիտական կարողություններ.**

0. կազմակերպել և վարել գերմաներենի դաս,
1. լուծել մասնագիտական գործունեության ժամանակ ծագած խնդիրները,
2. գործնականում կիրառել հաղորդակցական համակարգչային մեթոդներ,
3. օգտագործել  էլեկտրոնային մասնագիտական  ռեսուրսներ,
4. վերլուծել  գերմաներենի դասավանդման տեսական և գործնական հիմնահարցերը,
5. կիրառել գերմաներենի ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
6. կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանք գերմաներենի դասավանդման տեսության և մեթոդների վերաբերյալ:

***Գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ.***

| |
|---|
| 0. օգտվել հաղորդակցական-տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից,<br>1. վերլուծել մասնագիտական փաստեր և կատարել հետևություններ,<br>2. ստեղծագործաբար կիրառել և զարգացնել ձեռք բերած գիտելիքները,<br>3. ցուցաբերել ստեղծագործական մոտեցում գերմաներենի դասավանդման գործում: |
| **Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները**.<br>• մեկնաբանել կրթական ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,<br>• դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել գերմաներենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները գերմաներենի դասավանդման գործընթացում,<br>• կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,<br>• հաղորդակցվել օտար լեզվով: |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.<br>• դասախոսություն՝ շարժապատկերների ուղեկցությամբ,<br>• գործնական առաջադրանքներ,<br>• բանավեճեր և դիալոգներ/ գերմաներենով/<br>• թեմատիկ/ուսումնական/ ֆիլմերի դիտում և քննարկում: |
| **Գնահատման մեթոդները և միջոցները.**<br>• Բանավոր հարցում,<br>• Գործնական աշխատանքներ,<br>• Ռեֆերատներ, |

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**

- Օտար լեզվի դասավանդման մեթոդիկան որպես գիտություն, կապն այլ գիտությունների հետ, հիմնական նպատակները:
- Օտար լեզուների ուսուցման մեթոդների զարգացումը (քերականական-թարգմանական, բնական, ուղիղ, ակտիվ, խոսալսողական, տեսալսողական, հաղորդակցական մեթոդներ): Օտար լեզվի ուսուցման նորարարական մոտեցումները: Լեզվակրթության համաեվրոպական պահանջներն ու չափանիշները:
- Օտար լեզուների ուսուցման բովանդակությունը և սկզբունքները:
- Դաս. ձևերը (ասպեկտային, համակցված) և բաղադրիչները, պլանավորումը, դասապրոցեսի կազմակերպումը:
- Հնչյունական հմտության ձևավորման փուլերը դասապրոցեսում, վարժությունների համակարգը:
- Բառային միջոցների ուսուցման մեթոդիկան:
- Քերականական միջոցների ուսուցման մեթոդիկան :
- Սոցիալ-մշակութային հմտության ձևավորման նպատակն ու բաղադրիչները: Սոցիալ-մշակութային հաղորդակցության հիմնական հասկացությունները:
- Լեզվի և մշակույթի փոխկապակցված ուսուցում:
- Ընթերցանության տեսակները:
- Գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները:

**Գրականության ցանկ**

1. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: Դասագիրք բուհերի համար, Երևան, Լույս, 1985:

2. Աստվածատրյան Մ. Գ. և ուրիշներ, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), «Տիգրան Մեծ», Երևան, 2007:
3. Burwitz-Melzer E., Mehlhorn G. u. a., Handbuch Fremdsprachenunerricht, Tubingen, 2016.
4. Altmayer C., Biebighauser K. u. a., Handbuch Deutsch als Fremd-und Zweitsprache. Kontexte-Themen-Methoden, Berlin, 2021.
5. Леонтьева Т.П., Будько А.Ф., Пониматко А.П. и др. Методика преподавания иностранного языка, Минск: «Вышейшая школа», 2015.
6. Щукин А.Н., Фролова Г.М. Методика преподавания иностранных языков, М.: Академия, 2015.

**Անհրաժեշտ այլ նյութեր.**

Ինտերնետ կապ, համակարգիչ, էլեկտրոնային հասցե, Moodle և Zoom հավելվածներ:

**Լրացուցիչ գրականություն՝**

7. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոլյան, Թարգմ. ՝ Ս. Կարախանյան և ուրիշ., Խմբ. ՝ Սուրեն Զոլյան, Մելանյա Աստվածատրյան և ուրիշ., Եր., Նորք Գրատուն, 2005. – 308 էջ:
8. Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ, Ազգային զեկույց, «Լինգվա», Երևան, 2008:
9. Common European Framework of Reference: Teaching, Learning, Assessment. CoE, Strasbourg, 2001.
10. Metzler Lexikon Fremdsprachendidaktik / C. Surkamp (Hrsg.), Stuttgart-Weimar, 2010.
11. Rösler D., Deutsch als Fremdsprache, Stuttgart, 2012.
12. Terhart E., Lehr-Lernmethoden. Eine Einführung in Probleme der methodischen Organisation von Lehren und Lernen, Weinheim und Munchen. 2005.
13. Terhart E., Didaktik. Eine Einführung. Stuttgart, 2009.

14. Бабинская П. К., Леонтева Т. П. И др., Практический курс методики преподавания иностранных языков: английский, немецкий, французский. Минск, 2003.
15. Бурлакова И.И. Технология оценивания на уроках иностранного языка. Современные технологии обучения иностранным языкам 2018, Международная научно-практическая конференция (Россия, г. Ульяновск, 15 января 2018 года): сборник научных трудов. — Отв. ред. Н.С. Шарафутдинова. — Ульяновск: УлГТУ, 2018.
16. Оловникова Н.Г., Шульга Н.В. (сост.) УМК Современные технологии обучения иностранным языкам, Для специальности высшего образования второй ступени «Теория и методика обучения и воспитания (иностранный язык)». — Минск: БГПУ, 2014.
17. Современные тенденции в обучении иностранным языкам и межкультурной коммуникации, Материалы Международной заочной научно-практической конференции. – Электросталь: Новый гуманитарный институт, 2011.
18. Фадеева Л. В., Теория и методика обучения немецкому языку как второму иностранному, Москва, “ФЛИНТА”, 2017.

*«Գերմաներենի դասավանդման մեթոդիկա»*

*դասընթացի թեմատիկ պլան*

**Թեմա 1. Գերմաներենի դասավանդումը որպես գիտություն: (12 ժամ)**

«Գերմաներեն լեզու» առարկայի առանձնահատկությունները: Գերմաներեն լեզվի ուսուցման նպատակները: Գերմաներենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները (քերականական-թարգմանական, բնական, ուղիղ, ինտերակտիվ, տեսալսողական, հաղորդակցական մեթոդներ): Օտար լեզվի ուսուցման նորարարական մոտեցումները: Լեզվակրթության համաեվրոպական պահանջներն ու չափանիշները:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, դասավանդման մեթոդների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Գերմաներենի լեզվական միջոցների ուսուցումը: (11 ժամ)**

Գերմաներենի հնչյունաբանության ուսուցում: Բառապաշարի ուսուցում: Քերականության ուսուցում: Քերականական նյութի մատուցման մեթոդներ: Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3. Խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցում: Լեզվի և մշակույթի փոխկապակցված ուսուցում: (12 ժամ)**

Բանավոր հաղորդակցման ուսուցում: Մենախոսության և երկխոսության ուսուցում: Ունկնդրման ուսուցում: Գերմաներենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Ընթերցանության ուսուցում: Գրավոր խոսքի ուսուցում: (11 ժամ)**

**Գործնական աշխատանք (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):**

**Թեմա 5. Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը գերմաներենի դասավանդման գործընթացում: (12 ժամ)** Գնահատում և արժևորում: Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները: Գնահատման տեսակները:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Նախնական գնահատում: Ընթացիկ գնահատում: Ամփոփիչ գնահատում):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

*«Գերմաներենի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| | **Գերմաներենի դասավանդումը որպես գիտություն** :<br><br>«Գերմաներեն լեզու» առարկայի առանձնահատկությունները: Գերմաներեն լեզվի ուսուցման նպատակները: Գերմաներենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները (քերականական-թարգմանական, բնական, ուղիղ, ինտերակտիվ, տեսալսողական, հաղորդակցական մեթոդներ): Օտար լեզվի ուսուցման նորարարական մոտեցումները: Լեզվակրթության համաեվրոպական պահանջներն ու չափանիշները: | 12 | **4** | 8 | ▪ ներկայացնել գերմաներենի դասավանդման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:<br>▪ ծանոթացնել գերմաներենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև նորարարական մոտեցումներին և լեզվակրթության համաեվրոպական պահանջներին ու չափանիշներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին սովորողները.<br><br>▪ կձևակերպեն գերմաներենի դասավանդման նպատակները, խնդիրներն ու վերջարդյունքները,<br>▪ կիարաբերեն, կհամադրեն և կհակադրեն գերմաներենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդներն ու նորարարական մոտեցումները: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Գործնական աշխատանք՝***<br><br>Ընտրել գերմաներենի դասավանդման որևէ մոտեցում և ներկայացնել սահիկաշարի ուղեկցմամբ: | | | | | | |
| | **Գերմաներենի լեզվական միջոցների ուսուցումը**<br><br>Գերմաներենի հնչյունաբանության ուսուցում: Բառապաշարի ուսուցում: Քերականության ուսուցում: Քերականական նյութի մատուցման մեթոդներ: Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | 11 | **4** | 7 | Հաղորդել սովորողներին գերմաներենի հնչյունաբանության, բառապաշարի և քերականության ուսուցման վերաբերյալ գիտելիքներ, ներկայացնել ռեցեպտիվ և պրոդուկտիվ հմտությունների ձևավորման ուղիները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կտիրապետեն գերմաներենի լեզվական միջոցների ուսուցման մեթոդներին,<br>▪ կնկարագրեն գերմաներենի լեզվական միջոցների արդյունավետ ուսուցումն ապահովող գործոնները: | |
| | **Խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցում: Լեզվի և** | 12 | **4** | 8 | Ներկայացնել խոսքային գործունեության ուսուցման | Թեմայի ուսումնասիրության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **մշակույթի փոխկապակցված ուսուցում:**<br><br>Բանավոր հաղորդակցման ուսուցում: Մենախոսության և երկխոսության ուսուցում: Ունկնդրման ուսուցում:<br><br>Գերմաներենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:<br><br>*Գործնական աշխատանք՝*<br><br>Թեմատիկ երկխոսության միջոցով մասնագիտական բառապաշարի հարստացում: | | | | տարբեր տեսակները և զարգացնել դրա վերաբերյալ սովորողների տեսական գիտելիքները:<br><br>Ներկայացնել լեզվի և մշակույթի փոխկապակցվածությունը:Զա րգացնել սովորողների միջմշակութային կարողունակությունները: | ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան վերլուծել խոսքային գործունեության տարբեր տեսակների ուսուցման առանձնահատկություննե րը,<br>▪ կտիրապետեն խոսքային գործունեության առանձին տեսակների ուսուցման հմտություններին: | |
| | **Ընթերցանության ուսուցում: Գրավոր խոսքի ուսուցում:**<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Տարբեր տիպի աշխատանքների միջոցով ընթերցանության և գրավոր խոսքի հմտությունների | 11 | 4 | 7 | Ներկայացնել ընթերցանության և գրավոր խոսքի ուսուցման առանձնահատկությունները և զարգացնել թեմայի վերաբերյալ սովորողների տեսական գիտելիքները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան վերլուծել ընթերցանության և գրավոր խոսքի ուսուցման | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | զարգացում։<br><br>**Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը գերմաներենի դասավանդման գործընթացում։**<br><br>▪ Գնահատում և արժևորում։<br>▪ Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները։<br>▪ Գնահատման տեսակները։<br><br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Թեստի կառուցման սկզբունքները։ | 12 | 4 | 8 | Ներկայացնել արժևորումը/գնահատումը՝որ պես սովորողի ցուցաբերած արդյունքի կամ կատարողականի մասին արժեքային դատողությունների իրացման գործընթաց։ | առանձնահատկություննե րը,<br>▪ կտիրապետեն դրանց ուսուցման հմտություններին։<br><br>Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կիմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները,<br>▪ կարժևորեն գնահատման գործառույթը,<br>▪ կգիտակցեն սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կդասակարգեն ուսումնառական նպատակները ըստ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | առաջնահերթությունների<br>,<br>▪ կընտրեն գնահատման մեթոդները՝ ի տեղի: | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | 20 | 40 | | | |

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

<table>
<tr><td>1.</td><td>Երաժշտության ուսուցման և դասավանդման մեթոդիկա</td><td>4 կրեդիտ</td><td>120ժամ</td></tr>
<tr><td colspan="2">60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն.,</td><td colspan="2">60 ժամ ինքնուրույն և արտալսարանային</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցման ձևը՝ առկա</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="4">Դասընթացի նպատակն է .<br>• սովորողներին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում երաժշտության դասավանդման մեթոդիկային,<br>• բացահայտել տեսությունների զարգացման միտումները,<br>• ծանոթացնել հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի ծրագրին (1-12-րդդասարաններ),<br>• ծանոթացնել «Երաժշտություն» առարկայի չափորոշիչներին,<br>• հիմնավորել ժամանակակից  սկզբունքները և ռազմավարությունները,<br>• ներկայացնել  երաժշտության դասավանդման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,<br>• ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը:</td></tr>
<tr><td colspan="4">Դասընթացի կրթական վերջնարդյունքները.</td></tr>
</table>

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն***

- մեկնաբանել երաժշտության ուսուցման նպատակը, խնդիրները, առանձնահատկությունները,
- սահմանել երաժշտության ուսուցման հիմնական հասկացությունները,
- վերլուծել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները, օրինաչափությունները,
- մեկնաբանել արդի մեթոդաբանությունը՝ զուգակցելով երաժշտական կրթության բազմադարյա ազգային ավանդույթներին՝ հիմք ընդունելով Կոմիտաս վարդապետի ազգային կրթության, ինչպես նաև երաժշտական կրթության հայեցակարգը,
- մեկնաբանել կրթական ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը երաժշտության ուսուցման գործընթացում:

***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.***

- *համեմատել ուսուցման ավանդական, ազգային և ժամանակակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները երաժշտության ուսուցման գործընթացում,*
- *կիրառել համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ երաժշտության ուսուցման գործընթացում,*
- *գործնականում կազմել կամ ընտրել երաժշտության ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ,*
- *գնահատել սովորողների գիտելիքները ՝ընտրելով համապատասխան մեթոդներ, միջոցներ և չափանիշներ:*

| |
|---|
| Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները.<br>• *մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,*<br>• *դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել երաժշտության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,*<br>• *օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միձոցներ երաժշտության դասավանդման գործընթացում,*<br>• *կիրառել ստացված գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլէկտրոնային միջոցներից:* |
| Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.<br>• *դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ*<br>• *գործնական առաջադրանքներ*<br>• *բանավեճեր և դիալոգներ* |
| Գնահատման մեթոդները և միջոցները.<br>• Բանավոր հարցում,<br>• Գործնական աշխատանքներ,<br>• Ռեֆերատներ: |
| Թեմաները.<br>1. Երաժշտության ուսուցման նպատակը, խնդիրները, սկզբունքները (2 ժամ)<br>2. Երաժշտության ուսուցման գործառույթները (2 ժամ)<br>3. Երաժշտության դասավանդման մեթոդները (4 ժամ) |

4. Երգեցողությունը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)

5. Ունկնդրումը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)

6. Դմիտրի Կաբալևսկու մեթոդիկան: Զոլտան Կոդայի մեթոդիկան (2 ժամ)

7. Էմիլ Ժակ-Դալկրոզի ռիթմիկ համակարգը (2 ժամ)

8. Երաժշտառիթմական շարժումը՝ որպես գործունեության տեսակ, երաժշտառիթմական դաստիարակության առանձնահատկությունները: Ռիթմ, մետր, տեմպ; Երաժշտառիթմական վարժություն կազմելու մեթոդիկան (4 ժամ)

9. Երաժշտական խաղեր (3 ժամ)

10. Նվագ մանկական նվագարաններով և իմպրովիզացիա գործունեության տեսակները (4 ժամ)

11. Կարլ Օրֆի մեթոդիկան (2 ժամ)

12. Կոմիտասի երաժշտական դաստիարակության հայեցակարգը (2 ժամ)

13. Երաժշտություն առարկայի Չափորոշիչ (2 ժամ)

14. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 1-ին դասարանում (3 ժամ)

15. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 2-րդ դասարանում (3 ժամ)

16. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 3-րդ դասարանում (3 ժամ)

17. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 4-րդ դասարանում (3 ժամ)

18. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 5-րդ դասարանում (3 ժամ)

19. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 6-րդ դասարանում (3 ժամ)

20. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 7-րդ դասարանում (2 ժամ)

21. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 8-րդ դասարանում (3 ժամ)

| |
|---|
| **22. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 10-րդ դասարանում (2 ժամ)**<br>**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում:** |
| **Գրականության ցանկ**<br>▪ «Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ, ծրագիր, Երևան, 2023:<br>▪ Գևորգյան Ա.: Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Ա. Գևորգյան.-Եր.: Արտագերս, 2015. – 120 էջ:<br>▪ Գևորգյան Ա. Ռիթմիկա Մեթոդական ձեռնարկ /2-րդ մաս/ Երևան, Մեկնարկ, 2022թ.-72 էջ:<br>▪ Գևորգյան Ա. Ռիթմիկա: Մեթոդական ձեռնարկ /1-ին մաս/ Երևան, Մեկնարկ, 2022թ.-80 էջ:<br>▪ Գևորգյան Ա. Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ, Երևան, «Արտագերս», 2015թ.-120 15:<br>▪ Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ. Երաժշտություն. Տասներկուամյա հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք/Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան: Նկարազարդումները՝ Էմմա Իսախանյանի.- Եր.: «Արևիկ», 2023.- 124 էջ:<br>▪ Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ. Երաժշտություն. Տասներկուամյա հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան: Նկարազարդումները՝ Էմմա Իսախանյանի, դիմանկարները՝ Ամալյա Վարդանյանի.- Եր.: «Արևիկ», 2023.- 128 էջ: |

- «Երաժշտություն» առարկայի դասագրքի ուսուցչի մեթոդական ուղեցույց (2-րդ դասարան) / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան.- Եր.: «Արևիկ» հրատ., 2023:
- «Երաժշտություն» առարկայի դասագրքի ուսուցչի մեթոդական ուղեցույց (5-րդ դասարան) / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան.- Եր.: «Արևիկ», 2023:
- Կոմիտաս – «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941:
- Յուզբաշյան, Յու. Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ. Երաժշտությունը 1-4 դասարաններում» , ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Զանգակ-98», Երևան, 2008:
- Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ. Երաժշտությունը 5-7 դասարաններում, ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Զանգակ-97» , Երևան, 2011:
- Абдуллин Э.Б., Николаева Е.В. Методика музыкального образования. – М., Музыка, 2006. – 326 с.
- Музыкальное образование в школе: Учебное пособие для студ. муз. фак. и отд. высш. и сред. пед. учеб. заведений / Под. ред. Л.В. Школяр, В.А. Школяр, Е.Д. Критская и др. - М. : Академия, 2001. - 232 с.
- Программы общеобразовательных учреждений. Музыка 1-8 классы / Под руководством Д.Б. Кабалевского, - 4-е издание Москва. Издательство Просвещение, 2007г..


*«Երաժշտություն» դասընթացի ծրագիր*

**1. Երաժշտության ուսուցման նպատակը, խնդիրները, սկզբունքները (2 ժամ)**

2. Երաժշտության ուսուցման գործառույթները (2 ժամ)
3. Երաժշտության դասավանդման մեթոդները (4 ժամ)
4. Երգեցողությունը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)
5. Ունկնդրումը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)
6. Դմիտրի Կաբալևսկու մեթոդիկան: Զոլտան Կոդայի մեթոդիկան (2 ժամ)
7. Էմիլ Ժակ-Դալկրոզի ռիթմիկ համակարգը (2 ժամ)
8. Երաժշտառիթմական շարժումը՝ որպես գործունեության տեսակ, երաժշտառիթմական դաստիարակության առանձնահատկությունները: Ռիթմ, մետր, տեմպ; Երաժշտառիթմական վարժություն կազմելու մեթոդիկան (4 ժամ)
9. Երաժշտական խաղեր (3 ժամ)
10. Նվագ մանկական նվագարաններով և իմպրովիզացիա գործունեության տեսակները (4 ժամ)
11. Կարլ Օրֆի մեթոդիկան (2 ժամ)
12. Կոմիտասի երաժշտական դաստիարակության հայեցակարգը (2 ժամ)
13. Երաժշտություն առարկայի Չափորոշիչ (2 ժամ)
14. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 1-ին դասարանում (3 ժամ)
15. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 2-րդ դասարանում (3 ժամ)
16. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 3-րդ դասարանում (3 ժամ)
17. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 4-րդ դասարանում (3 ժամ)
18. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 5-րդ դասարանում (3 ժամ)
19. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 6-րդ դասարանում (3 ժամ)
20. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 7-րդ դասարանում (2 ժամ)
21. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 8-րդ դասարանում (3 ժամ)

22. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 10-րդ դասարանում (2 ժամ)

Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում:

*Երաժշտություն դասընթացի թեմատիկ պլան*

| | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակ | Ակնկալվող վերջնարդյունքներ | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1. | **Երաժշտություն առարկայի ուսուցման նպատակները, խնդիրները և սկզբունքները (2 ժամ)**<br><br>«Երաժշտությունը որպես արվեստի ճյուղ», | 2 | 1 | 1 | Նպատակ `<br>➢ ուսումնական առարկայի ուսուցման նպատակների, խնդիրների և սկզբունքների վերաբերյալ գիտելիքների ընդլայնում: | Կիմանա՝<br>➢ երաժշտության առարկայական չափորոշչային պահանջները, չափորոշչի կառուցվածքն ըստ կրթական աստիճանների:<br>➢ նպատակները, խնդիրները և սկզբունքները:<br>➢ սովորողներին առաջադրվող որակական պահանջներն՝ ըստ կարողունակությունների և ակնկալվող վերջնարդյունքների: | Գործն. աշխ.<br><br>խմբային քննարկում ըստ թեմաների |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | «Երաժշտական կրթության նպատակը, խնդիրները, թեմատիկ սկզբունքը»<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում):**Ախտորոշիչ գնահատում:** | | | | | Կկարողանա՝<br><br>➢ ներկայացնել Երաժշտություն առարկայի սկզբունքերը.<br>➢ ձևակերպել յուրաքանչյուր թեմայի նպատակը և խնդիրները | |
| 2. | **Երաժշտության ուսուցման գործառույթները (2 ժամ)**<br><br>հաղորդակցման, իրականության արտացոլման, բարոյական, գեղագիտական, ճանաչողական, հասարակական-վերափոխման, անձնական-վերափոխման, | 2 | 1 | 1 | Նպատակ՝<br><br>ուսումնասիրել երաժշտության ուսուցման գործառույթները | Կիմանա՝<br><br>➢<br>երաժշտության ուսուցման գործառույթները<br>Կկարողանա՝<br><br>Կազմակերպել այնպիսի դասընթաց, որտեղ կիրականացվեն երաժշտության ուսուցման գործառույթները | Թիմային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կանոնական և փորձարարական գործառույթներ,<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում): | | | | | | |
| 3. | **Երաժշտության դասավանդման մեթոդները (4 ժամ)**<br><br>պասիվ-ակտիվ-ինտերակտիվ, «Մտավոր գրոհի» մեթոդները, «Խիկ համակարգ», «Վեննի դիագրամ», խմբավորման մեթոդ, մտքի քարտեզագրում:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում): | 4 | 1 | 3 | Նպատակ՝<br><br>ուսումնասիրել մանկավարժական մի շարք մեթոդներ: | Վերջնարդյունք<br><br>Կիմանա՝<br><br>➢ մանկավարժական մեթոդների կիրառումը երաժշտության դասերին<br><br>Կկարողանա՝<br><br>➢ մանկավարժական մեթոդները կիրառել երաժշտամանկավարժական գործընթացում | Գործնական աշխատանքի կատարում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | **Երգեցողությունը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)**<br><br>երգեցողության համալիր բնույթը, շնչառության նշանակությունը, խմբակային երգեցողություն, կրտսեր դպրոցականների ձայնածավալը, երգի ուսուցումը 1-4-րդ դդ.:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում): | 3 | 1 | 2 | Նպատակ՝<br>➢ ուսումնասիրել երգեցողությունը որպես գործունեության տեսակ,<br>➢ ձևավորել և զարգացնել կրտսեր դպրոցականի երգչական ձայնը, շնչառությունը և ձայնածավալը: | Վերջնարդյունք<br>Կիմանա՝<br>➢ շնչառության առանձնահատկությունները երգերգողության ժամանակ<br>➢ ձայնավարժությունների դերը երգչական ձայնի ձևավորման գործընթացում<br>➢ կրտսեր դպրոցականների ձայնածավալն ըստ դասարանների<br>Կկարողանա՝<br>➢ ճիշտ ձևավորել և զարգացնել կրտսեր դպրոցականի երգչական ձայնը, շնչառությունը և ձայնածավալը<br>➢ ճիշտ կազմակերպել երգի ուսուցման մեթոդիկան | Ծրագրային երգերի խմբային կատարում |
| 5. | **Ունկնդրումը՝ որպես գործունեության տեսակ (3 ժամ)**<br><br>երաժշտության | 3 | 1 | 2 | Նպատակ՝<br>➢ ուսումնասիրել ունկնդրումը որպես գործունեության տեսակ, | Վերջնարդյունք<br>Կիմանա՝<br>➢ ունկնդրման նշանակությունը կրտսեր դպրոցականի երաժշտական | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ունկնդրման նպատակը, ունկնդրման իրականացման հաջորդականությունը, ունկնդրումն 1-4-րդ դդ.:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում): | | | | ➢ ուսումնասիրել ունկնդրման փուլերը: | դաստիարակության գործընթացում Կկարողանա՝<br><br>➢ ճիշտ կազմակերպել երաժշտական ստեղծագործության ունկնդրումը Երաժշտության դասերին | |
| 6. | **Դմիտրի Կաբալևսկու մեթոդիկան: Զոլտան Կոդայի մեթոդիկան (2 ժամ)**<br><br>Դ. Կաբալևսկու մեթոդիկան՝ «Երեք կետ», երաժշտությունը 1-8-րդ դդ.,<br><br>Զ. Կոդայի մեթոդիկան, ժողովրդական երաժշտությունը որպես | 2 | 1 | 1 | Նպատակ՝<br><br>ուսումնասիրել ռուս կոմպոզիտոր, մանկավարժ Դ. Կաբալևսկու և հունգար կոմպոզիտոր Զ. Կոդայի մեթոդիկաները: | Վերջնարդյունք<br><br>Կիմանա՝<br><br>➢ Կաբալևսկու՝ 1-8-րդ դդ. Մեթոդիկան ըստ թեմաների<br>➢ Զոլդան Կոդայի լսողության զարգացման մեթոդիկան<br>Կկարողանա՝<br><br>➢ համադրել Կաբալևսկու երաժշտական դաստիարակության հայեցակարգը ՀՀ-ում առկա մեթոդիկայի հետ<br>➢ գործնականում կիրառել Կոդայի մեթոդիկան | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | երաժշտական դաստիարակության հիմք:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում): | | | | | | |
| 7. | **Էմիլ Ժակ-Դալկրոզի ռիթմիկ համակարգը (2 ժամ)**<br><br>Դալկրոզը որպես ռիթմիկայի հիմնադիր: Ռիթմիկան և նրա դերը երեխայի երաժշտական ընդունակություննե րի զարգացման գործընթացքում: Ռիթմիկ վարժությունները, վարժություններ կազմելու մեթոդիկան:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** | 1 | 1 | 1 | Նպատակը՝<br><br>➢ ներկայացնել ռիթմիկայի հիմնադիր Է. Ժակ-Դալկրոզի համակարգը,<br>➢ ռիթմական վարժություն կազմելու մեթոդիկան: | Վերջնարդյունք<br><br>Կիմանա՝<br><br>➢ Դալկրոզի մեթոդիկան,<br>➢ ռիթմիկայի դերը կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակության գործում:<br><br>Կկարողանա՝<br><br>➢ գործնականում կիրառել Դալկրոզի մեթոդիկան,<br>➢ կազմել ռիթմական վարժություն: | Անհատական աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Ստեղծագործությունների ունկնդրում): | | | | | | |
| 8. | **Երաժշտառիթմական շարժումը՝ որպես գործունեության տեսակ, երաժշտառիթմական դաստիարակության առանձնահատկությունները: Ռիթմ, մետր, տեմպ (4 ժամ)**<br><br>Երաժշտառիթմիկ շարժումը, սովորողի ռիթմիկ զգացողության զարգացումը, հնչյունների կարճ և երկար տևողությունները, տեմպ, տակտ, չափ, պաուզա հասկացությունները<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** | 4 | 1 | 3 | Նպատակը՝<br>➢ ներկայացնել երաժշտառիթմիկ շարժում գործունեության տեսակը<br>➢ ռիթմ, մետր, տակտ հասկացությունները: | Վերջնարդյունք<br>Կիմանա՝<br>➢ երաժշտառիթմական շարժման դերը կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակության գործում:<br>➢ ռիթմ, մետր, տակտ հասկացությունները:<br>Կկարողանա՝<br>➢ արդյունավետ իրականացնել երաժշտառիթմական շարժում գործունեության տեսակը: | Անհատական աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Ստեղծագործությու ների ունկնդրում): | | | | | | |
| 9. | **Երաժշտական խաղեր (3 ժամ)** <u>**Գործնական աշխատանք**</u> (Ստեղծագործությու ների ունկնդրում): | 3 | 1 | 2 | Նպատակը՝ <br>➢ ներկայացնել երաժշտական խաղերը | Վերջնարդյունք <br>Կիմանա՝ <br>➢ երաժշտաական խաղերի դերը և նշանակությունը հանրակրթական դպրոցում <br>Կկարողանա՝ <br>➢ արդյունավետ կիրառել երաժշտական խաղերը | Խմբային աշխատա նք |
| 10. | **Նվագ մանկական նվագարաններով և իմպրովիզացիա գործունեության տեսակները (4 ժամ)** <br><br>«բնական նվագարաններ», մանկական հարվածային նվագարաններ, հանպատրաստից | 4 | | 4 | Նպատակ՝ <br>➢ ներկայացնել նվագ մանկական նվագարաններով գործունեության տեսակը, <br>➢ ներկայացնել իմպրովիզացիա գործունեության տեսակը: | Վերջնարդյունք <br>Կիմանա՝ <br>➢ մանկական նվագարանները և դրանց կիրառումը հանրակրթական դպրոցում <br>Կկարողանա՝ <br>➢ նվագել մանկական պարզ նվագարաններ <br>➢ հորինել նվագակցություն մանկական նվագարաններով: | Անհատա կան աշխատա նք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ստեղծագործելը:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>**<br>(Ստեղծագործությունների ունկնդրում): | | | | | | |
| 11. | **Կարլ Օրֆի մեթոդիկան (2 ժամ)**<br><br>Կ. Օրֆի երաժշտական դաստիարակության համակարգը,<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>**<br>(Ստեղծագործությունների ունկնդրում): | 2 | 1 | 1 | Նպատակ՝<br><br>➢ ներկայացնել Կ. Օրֆի մեթոդիկան: | Վերջնարդյունք<br><br>Կիմանա՝<br><br>➢ գերմանացի կոմպոզիտոր, մանկավարժ Կ. Օրֆի մեթոդիկան:<br>Կկարողանա՝<br><br>➢ արդյունավետ կիրառել Օրֆի մեթոդիկան: | Խմբային աշխատանք |
| 12. | **Կոմիտասի երաժշտական դաստիարակության հայեցակարգը (2 ժամ)** | 2 | 1 | 1 | Նպատակ՝<br><br>➢ ներկայացնել Կոմիտասի մանկավարժական հայացքները: | Վերջնարդյունք<br><br>Կիմանա՝ | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Կոմիտասի մանկավարժական հայացքները **<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործության ունկնդրում): | | | | | ➢ Կոմիտասի մանկավարժական հայացքները: Կկարողանա՝ ➢ գործնականում կիրառել Կոմիտասի մանկավարժական հայացքները: | |
| 13. | **Երաժշտություն առարկայի Չափորոշիչ (2 ժամ)** | 2 | 1 | 1 | Նպատակ՝ ➢ ներկայացնել ՀՀ կրթական չափորոշիչը: | Վերջնարդյունք Կիմանան՝ ➢ ՀՀ կրթական չափորոշչի պահանջները: Կկարողանան՝ ➢ արդյունավետ դաս իրականացնել ըստ կրթական չափորոշչի պահանջների: | Խմբային աշխատանք |
| 14. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 1-ին դասարանում (2 ժամ)** **<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությու | 2 | 1 | 1 | Նպատակ՝ ➢ քննարկել երաժշտության տեսակները, «աշնան գույները երաժշտության մեջ», բացատրել, որ երաժշտությունն արտահայտում է | Վերջնարդյունք Կիմանան՝ ➢ սովորողներին ինչպես ներկայացնել երաժշտական տնակի բնակչներին, | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ների ունկնդրում, երգերի կատարում, երաժշտառիթմական շարժում):<br><br>«Երաժշտական տնակի բնակիչները», «Երաժշտությունը և մենք» «Զբոսանք երաժշտական աշխարհում», «Երաժշտական դիմակահանդես» և «Ես և երաժշտությունը» թեմաները<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում): | | | | զգացմունքներ, տրամադրություններ,<br>➢ քննարկել «ձմռան և գարնան գույները երաժշտության մեջ», աշակերտներին ծանոթ ստեղծագործությունները ներկայացնել փոփոխված՝ «դիմակ» հագած: | ➢ երաժշտության դերը մեր կյանքում,<br>➢ ինչպես կարող են հնչել իրենց ծանոթ ստեղծագործությունները:<br>Կկարողանան՝<br>➢ ներկայացնել երաժշտական տնակի բնակչներին,<br>➢ ներկայացնել երաժշտության կապը մեր կյանքի հետ,<br>➢ ներկայացնել «Երաժշտական դիմակահանդես» թեման: | |
| 15. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 2-րդ դասարանում (3 ժամ)** | 3 | 1 | 2 | Նպատակ՝<br>➢ Ծանոթություն քայլերգին, երգին և պարին, դրանց տեսակներին, | Վերջնարդյունք<br>Կիմանա՝<br>➢ երաժշտության պարզ և մատչելի տեսակները՝ երգը, | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | «Երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը», «Երաժշտության պարզ տեսակները», «Ու՞ր են տանում երաժշտության պարզ տեսակները», «Երաժշտական այբուբեն», «Երաժշտական արտահայտչամիջոցներ» թեմաները <u>**Գործնական աշխատանք**</u> (Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում, երաժշտառիթմական շարժում): | | | | ➢ երեխաներին բացատրել, որ երաժշտության պարզ և մատչելի ժանրերը տանում են դեպի բարդ ժանրեր, ➢ երեխաներին սովորեցնել, որ ինչպես մայրենի լեզուն ունի իր այբուբենը, այնպես էլ երաժշտությունն ունի իր այբուբենը, ➢ ծանոթացնել երաժշտական արտահայտչամիջոցներին՝ տեմպ, դինամիկա, երաժշտության կատարման ձևեր, տեմբր, ռեգիստր: | պարը և քայլերգը, դրանց տարատեսակները: ➢ Երգը տանում է օպերա, պարը՝ բալետ, քայլերգը՝ սիմֆոնիա: ➢ երաժշտական այբուբենը, դո հնչյունաշարը ➢ երաժշտական արտահայտչամիջոցները: Կկարողանա՝ ➢ մեկնաբանել երաժշտական պարզ և բարդ ժանրերը, ➢ ներկայացնել երաժշտական այբուբենը ➢ ներկայացնել երաժշտական արտահայտչամիջոցները: | |
| 16. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 3-րդ դասարանում (3 ժամ)** «Ինչի մասին է պատմում երաժշտությունը», | 3 | 1 | 2 | Նպատակ՝ ➢ Ներկայացնել, թե ինչի մասին է պատմում երաժշտությունը, ➢ Բացատրել արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները: | Վերջնարդյունք Կիմանան՝ ➢ ինչի մասին է պատմում երաժշտությունը, ➢ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները, | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | «Արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներ», «Խոսակցական և երաժշտական ինտոնացիաներ», «Մանկական օպերաներ» և «Սիմֆոնիկ նվագախումբ, նվագախմբի նվագարաններ» **թեմաները**<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում, երաժշտառիթմական շարժում): | | | | ➢ Բացատրել և ցույց տալ խոսակցական և երաժշտական ինտոնացիաները,<br>➢ Ներկայացնել սիմֆոնիկ նվագախումբը և դասական նվագարանները: | ➢ խոսակցական և երաժշտական ինտոնացիաները,<br>➢ սիմֆոնիկ նվագախումբը և դասական նվագարանները:<br>Կկարողանան՝<br>➢ բացատրել, թե ինչի մասին է պատմում երաժշտությունը,<br>➢ ներկայացնել արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները,<br>➢ ներկայացնել սիմֆոնիկ նվագախումբը և դասական նվագարանները: | |
| 17. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 4-րդ դասարանում (2 ժամ)**<br><br>«Հայ ժողովրդական ծեսեր, ազգային | 2 | 1 | 1 | Նպատակ՝<br>➢ Քննարկել Հայ ժողովրդական ծեսեր, ազգային երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում: | Վերջնարդյունք<br>Կիմանան՝<br>➢ հայ ժողովրդական ծեսեր, ազգային երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում, | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում», «Հայ ազգային երաժշտություն, մշակութային բազմազանություն» և «Երաժշտությունը միջմշակութային հաղորդակցության միջոց» թեմաները<br>(Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում, երաժշտառիթմական շարժում): | | | | ➢ Ցույց տալ, որ կոմպոզիտորներն իրենց ստեղծագործություններում ընդգրկել են ժողովրդական երգերի մեղեդիներ:<br>➢ Ներկայացնել հայ ազգային երաժշտությունը, մշակութային բազմազանությունը,<br>➢ Ներկայացնել երաժշտությունը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց: | ➢ հայ ազգային երաժշտությունը, մշակութային բազմազանությունը,<br>➢ երաժշտությունը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց:<br>Կկարողանան՝<br>➢ ներկայացնել հայ ժողովրդական ծեսերը, ազգային երաժշտական և գրական խոսքը ժողովրդական ծեսերում<br>➢ ներկայացնել Հայ ազգային երաժշտություն, մշակութային բազմազանությունը<br>➢ ներկայացնել սփյուռքահայ և հայկական ժողովրդական մեղեդիներն իրենց արվեստում կիրառող օտարազգի կոմպոզիտորներին: | |
| 18. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը** | 3 | 1 | 2 | Նպատակ՝ | Վերջնարդյունք<br>Կիմանան՝ | Անհատական աշխատա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **5-րդ դասարանում (3 ժամ)**<br>«Երաժշտության և արվեստի այլ տեսակների փոխառնչությունները. Երաժշտություն և գրականություն, կերպարվեստ, պարարվեստ, երաժշտությունը թատրոնում, կինոյում և հեռուսատեսությունում, երաժշտությունը և համակարգիչը» թեմաները<br><br>(Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում, երաժշտառիթմական շարժում): | | | | ➢ Երաժշտության և արվեստի այլ տեսակների փոխառնչությունները:<br>➢ Ցույց տալ երաժշտության և գրականության, երաժշտության և կերպարվեստի, երաժշտության և պարարվեստի կապը:<br>Ներկայացնել երաժշտությունը թատրոնում, կինոյում և հեռուսատեսությունում, երաժշտությունը և համակարգիչը: | ➢ երաժշտության և արվեստի այլ տեսակների փոխառնչությունները:<br>➢ երաժշտության և գրականության, երաժշտության և կերպարվեստի, երաժշտության և պարարվեստի կապը,<br>➢ երաժշտությունը թատրոնում, կինոյում և հեռուսատեսությունում, երաժշտությունը և համակարգիչը:<br>Կկարողանան՝<br>➢ ցույց տալ երաժշտության և արվեստի այլ տեսակների փոխառնչությունները, կապը երաժշտության և գրականության, երաժշտության և կերպարվեստի, երաժշտության և պարարվեստի միջև,<br>➢ ներկայացնել երաժշտությունը թատրոնում, կինոյում և | նք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հեռուսատեսությունում, երաժշտությունը և համակարգիչը: | |
| 19. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 6-րդ դասարանում (3 ժամ)**<br><br>«Համալիր կամ սինթետիկ ժանրեր. օպերա, բալետ, օպերետ և մյուզիքլ», «Նվագարանային ժանրեր. սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկեր և սիմֆոնիա» և «Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ. Դիրիժորներ, երգիչներ և այլն» թեմաները (Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում, | 3 | 1 | 2 | Նպատակը՝<br>➢ ներկայացնել համալիր ժանրերը՝ օպերա, բալետ, օպերետ և մյուզիքլ,<br>➢ ներկայացնել նվագարանային ժանրերը՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկեր և սիմֆոնիա,<br>➢ ներկայացնել համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներին: | Վերջնարդյունք<br>Կիմանան՝<br>➢ համալիր ժանրերը՝ օպերա, բալետ, օպերետ և մյուզիքլ,<br>➢ նվագարանային ժանրերը՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկեր և սիմֆոնիա,<br>➢ համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներին:<br>կկարողանան՝<br>➢ ներկայացնել համալիր ժանրերը՝ օպերա, բալետ, օպերետ և մյուզիքլ,<br>➢ ներկայացնել նվագարանային ժանրերը՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիկ պատկեր և սիմֆոնիա,<br>➢ ներկայացնել համաշխարհային և | Անհատական աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | երաժշտառիթմակա ն շարժում): | | | | | ազգային հանրահայտ կատարողներին: | |
| 20. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 7-րդ դասարանում (2 ժամ)**<br><br>«Հայ ազգային երգեր ու պարեր. հայ գուսանական-աշուղական արվեստ, հայ հոգևոր երաժշտարվեստ, ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստ, դասական հանրամատչելի երաժշտություն» թեմաները (Ստեղծագործությու նների ունկնդրում, երգերի կատարում: | 2 | 1 | 1 | Նպատակը՝<br><br>➢ ներկայացնել հայ ազգային երգեր ու պարեր. հայ գուսանական-աշուղական արվեստը,<br>➢ ներկայացնել հայ հոգևոր երաժշտարվեստը,<br>➢ ներկայացնել ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստ, բացատրել դասական հանրամատչելի երաժշտությունը: | Վերջնարդյունք<br><br>Կիմանան՝<br><br>➢ հայ ազգային երգերն ու պարերը. հայ գուսանական-աշուղական արվեստը,<br>➢ հայ հոգևոր երաժշտարվեստը,<br>➢ ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը,<br>➢ դասական հանրամատչելի երաժշտությունը<br>Կկարողանան՝<br><br>➢ ներկայացնել հայ ազգային երգեր ու պարեր. հայ գուսանական-աշուղական արվեստը,<br>➢ ներկայացնել հայ հոգևոր երաժշտարվեստը,<br>ներկայացնել ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստ, բացատրել | Խմբային աշխատա նք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | դասական հանրամատչելի երաժշտությունը: | |
| 21. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 8-րդ դասարանում (3 ժամ)**<br><br>«Ժամանակակից երաժշտության ուղղություններն աշխարհում և Հայաստանում. ջազ, ռոք, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեփ», «Ժողովրդական և դասական երկերի արդի մշակումներ» և «Ժողովրդական նվագարանների կիրառումը արդի երաժշտարվեստում» թեմաները (Ստեղծագործությունների ունկնդրում, երգերի կատարում): | 3 | 1 | 2 | Նպատակը՝<br>➢ ներկայացնել ժամանակակից երաժշտության ուղղություններն աշխարհում և Հայաստանում. ջազ, ռոք, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեփ,<br>➢ ներկայացնել ժողովրդական և դասական երկերի արդի մշակումները,<br>➢ ժողովրդական նվագարանների կիրառումը արդի երաժշտարվեստում: | Վերջնարդյունք<br>Կիմանան՝<br>➢ ժամանակակից երաժշտության ուղղություններն աշխարհում և Հայաստանում. ջազ, ռոք, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեփ,<br>➢ ժողովրդական և դասական երկերի արդի մշակումները,<br>➢ ժողովրդական նվագարանների կիրառումը արդի երաժշտարվեստում:<br>Կկարողանան՝<br>➢ ներկայացնել ժամանակակից երաժշտության ուղղություններն աշխարհում և Հայաստանում. ջազ, ռոք, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեփ,<br>➢ ներկայացնել ժողովրդական և դասական երկերի արդի մշակումները, | Խմբային աշխատանք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ժողովրդական նվագարանների կիրառումը արդի երաժշտարվեստում: | |
| 22. | **Երաժշտական դաստիարակության բովանդակությունը 10-րդ դասարանում (2 ժամ)** «Երաժշտական կերտվածք. Միաձայնություն, միամեղեդայնություն (մոնոդիա), բազմաձայն կերտվածք (հոմոֆոնիա և պոլիֆոնիա)» թեմաները (Ստեղծագործությունների ունկնդրում): | 2 | 1 | 1 | Նպատակը՝<br>➢ ներկայացնել միաձայնությունը՝ հոմոֆոնիան,<br>➢ ներկայացնել բազմաձայնությունը՝ պոլիֆոնիան: | Վերջնարդյունք<br>Կիմանան՝<br>➢ միաձայնությունը՝ հոմոֆոնիան,<br>➢ բազմաձայնությունը՝ պոլիֆոնիան:<br>Կկարողանան՝<br>➢ ներկայացնել միաձայնությունը՝ հոմոֆոնիան,<br>➢ ներկայացնել բազմաձայնությունը՝ պոլիֆոնիան: | Խմբային աշխատանք |
| | Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում | 2 | | 2 | | Գրավոր թեստային առաջադրանք | Թեստային աշխատանք |
| Ընդամենը՝ | | 60 | 20 | 40 | | | |

Գրականության ցանկ


1. «Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ, ծրագիր, Երևան, 2023:
2. Գևորգյան Ա. Ռիթմիկա Մեթոդական ձեռնարկ /2-րդ մաս/ Երևան, Մեկնարկ, 2022թ.-72 էջ:
3. Գևորգյան Ա. Ռիթմիկա: Մեթոդական ձեռնարկ /1-ին մաս/ Երևան, Մեկնարկ, 2022թ.-80 էջ:
4. Գևորգյան Ա. Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ, Երևան, «Արտագերս», 2015թ.-120 էջ:
5. Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ. Երաժշտություն. Տասներկուամյա հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք/Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան: Նկարազարդումները՝ Էմմա Իսախանյանի.- Եր.: «Արևիկ», 2023.- 124 էջ: Նկ.-:
6. Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ. Երաժշտություն. Տասներկուամյա հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան: Նկարազարդումները՝ Էմմա Իսախանյանի, դիմանկարները՝ Ամալյա Վարդանյանի.- Եր.: «Արևիկ», 2023.- 128 էջ: Նկ.-:
7. «Երաժշտություն» առարկայի դասագրքի ուսուցչի մեթոդական ուղեցույց (2-րդ դասարան) / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան.- Եր.: «Արևիկ» հրատ., 2023.
8. «Երաժշտություն» առարկայի դասագրքի ուսուցչի մեթոդական ուղեցույց (5-րդ դասարան) / Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան.- Եր.: «Արևիկ», 2023.
9. Կոմիտաս – «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941:
10. Յուզբայան, Յու. Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ. Երաժշտությունը 1-4 դասարաններում» , ուսուցչի մեթոդական ձեռնարկ, «Զանգակ-98», Երևան, 2008:
11. Յուզբայան Յու., Փահլևանյան Ա., Ավետիսյան Վ. Երաժշտությունը 5-7 դասարաններում, ուսուցչի մեթոդական

ձեռնարկ, «Զանգակ-97» , Երևան , 2011:

12. Абдуллин Э.Б., Николаева Е.В. Методика музыкального образования. – М., Музыка, 2006. – 326 с.

13. Музыкальное образование в школе: Учебное пособие для студ. муз. фак. и отд. высш. и сред. пед. учеб. заведений / Под. ред. Л.В. Школяр, В.А. Школяр, Е.Д. Критская и др. - М. : Академия, 2001. - 232 с.

14. Программы общеобразовательных учреждений. Музыка 1-8 классы / Под руководством Д.Б. Кабалевского, - 4-е издание Москва. Издательство Просвещение, 2007г..

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Դասընթացի անվանում | Ինֆորմատիկայի (ԹԳՀԳ) դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ |
| 60 ժամ լսարանային, որից 20ժ.ինքն. 40ժ գործն | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | |

**Դասընթացի նպատակն** է՝

- *սովորողներին ծանոթացնել ինֆորմատիկայի (Թվային գրագիտության և համակարգչային գիտության) դասավանդման արդի մեթոդներին ու միջոցներին*
- *ձևավորել մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաները դպրոցում ինֆորմատիկայի (Թվային գրագիտության և համակարգչային գիտության) ուսուցման գործընթացում*

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացի ավարտին շրջանավարտն ունակ կլինի՝**

Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- *ձևակերպելու տեղեկատվական կրթության հիմնական չափորոշիչները, պահանջները, բնութագրելու մանկավարժի հիմնական գործառույթները, դասավանդման արդի տեխնոլոգիաներն ու մեթոդները, դրանց կիրառման ձևերը ինֆորմատիկայի (Թվային գրագիտության և համակարգչային գիտության) ուսուցման գործընթացում*
- *քննարկելու համակարգչային և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների դերը կրթության գործընթացում*

Բ. գործնական մասնագիտական կարողություններ

- *նախագծելու և իրականացնելու հանրակրթական դպրոցում ինֆորմատիկայի ուսուցման արդյունավետ դասագործընթաց՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները*

Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

- *ստեղծել միջառարկայական կապեր ինֆորմատիկայի դասավանդման գործընթացում,*
- *պահպանելու մանկավարժական - մասնագիտական էթիկայի նորմերը, վարքականոնները, պլանավորելու ինֆորմատիկայի ուսուցման աշխատաժամանակը, փաստաթղթավորելու և կազմակերպելու ուսուցման գործընթացը*
- *կիրառել ստացած գիտելիքները առօրյայում:*

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը.

| |
|---|
| • *Դասախոսություն՝ շարժասահիկներով*<br>• *գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:* |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները.**<br>• *Բանավոր հարցում,*<br>• *Ուսումնական նախագծերի ներկայացում,*<br>• *Ռեֆերատներ, էսսեներ* |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**<br>• *Ինֆորմատիկայի ուսուցման մեթոդական համակարգը հանրակրթական դպրոցում:*<br>• *Ինֆորմատիկայի ուսուցման դպրոցական չափորոշիչները*<br>• *Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, Թվային գործիքներն ու համագործակցությունը, Հաշվողական համակարգեր և Հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:*<br>• *Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդները և տեխնոլոգիաները Ինֆորմատիկայի դասագործընթացում*<br>• *Գնահատման առանձնահատկությունները, եղանակները և ձևերը Ինֆորմատիկայի դասագործընթացում*<br>• *Առարկայական չափորոշչային վերջնարդյունքները տարրական դպրոցում* |

| |
|---|
| • *Առարկայական չափորոշչային վերջնարդյունքները միջին դպրոցում*<br>• *Առարկայական չափորոշչային վերջնարդյունքները ավագ դպրոցում* |
| **Գրականության ցանկ.**<br><br>• *Հանրակրթական հիմնական դպրոցի «Ինֆորմատիկա» առարկայի չափորոշիչ ու ծրագրեր (6-9-րդ դասարաններ)*<br>• *Թվային Գրագիտություն և Համակարգչային Գիտություն առարկայի չափորոշչային վերջնարդյունքներ*<br>• *Ավետիսյան Ս. Ս. Ինֆորմատիկա 8-րդ դաս. դասագիրք, / Ս. Ս. Ավետիսյան, Ս. Վ. Դանիելյան: Եր., Տիգրան Մեծ, 2013-168 էջ:*<br>• *Ավետիսյան Ս. Ս. Ինֆորմատիկա 9-րդ դաս. դասագիրք, / Ս. Ս. Ավետիսյան, Ս. Վ. Դանիելյան: Եր., Տիգրան Մեծ, 2014-160 էջ:*<br>• *Лапчик М.П. и др. Методика преподавания информатики. – М.: Академия, 2001. – 624 с.*<br>• *Малев В.В. Методика преподавания информатики: Электронный учебник. – www.vspu.ac.ru/~mvv/mpi* |

*«Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա»*

*դասընթացի նկարագրիչները*

*4կրդ. 120ժամ, որից՝60ժլս., 60ժ. ինքն.*

**Թեմա 1. «Ինֆորմատիկա» ուսուցման նպատակները, բովանդակությունը, նորույթները: Ուսուցման միջոցները, մեթոդները, կազմակերպման ձևերը: (10 ժամ)**

Ինֆորմատիկա ուսուցման նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները: Դասերի կազմակերպման ձևերն ու մեխանիզմները (լսարանային, արտալսարանային): Ինֆորմատիկա առարկայի ուսուցման չափորոշիչը:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Ինֆորմատիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները: (12 ժամ)**

Ինֆորմատիկայի դասագրքերը և դրանց բովանդակային առանձնահատկությունները: Նոր սերնդի թվային դասագրքերի մշակման և կիրառման արդյունավետ լուծումները:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3. Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (ինֆորմատիկա)» առարկայի դասին և արտադասարանական աշխատանքներում: (12 ժամ)**

Ինֆորմատիկա առարկայի լաբորատոր աշխատանքների կազմում ըստ բաժինների: Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը ինֆորմատիկա առարկայի շրջանակներում:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերի դերը ինֆորմատիկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում: (12 ժամ)**

Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը: Թվային գործիքներն ու համագործակցությունը: Համակարգչային սարքեր և համակարգեր: Հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 5. Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (ինֆորմատիկա)» առարկայի չափորոշչային վերջնարդյունքները: (12 ժամ)**

Ինֆորմատիկա)» առարկայի չափորոշիչը, ուսուցման նպատակը, ծրագրային առանձնահատկությունները, վերջնարդյունքների ձևավորումը կրտսեր, միջին և ավագ դպրոցներում:

**Գործնական աշխատանք** (Նախնական գնահատում: Ընթացիկ գնահատում: Ամփոփիչ գնահատում):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

*«Ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդի. | Տես. | Գործն. | | | |
| | **«Ինֆորմատիկա» դասընթացի բովանդակությունը, նորույթները, ուսուցման նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, կազմակերպման ձևերը։**<br><br>▪ Ինֆորմատիկայի ուսուցման նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները,<br>▪ Դասերի կազմակերպման ձևերն ու մեխանիզմները (լսարանային, արտալսարանային)<br>▪ Ինֆորմատիկա առարկայի ուսուցման չափորոշիչը։ | 10 | 4 | 6 | ▪ Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցման նպատակներին, նորացված բովանդակությանը, չափորոշիչներին | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br><br>**Կիմանան՝**<br><br>▪ «Ինֆորմատիկա» ուսուցման նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, կազմակերպման ձևերը<br>**Կկարողանան՝**<br><br>▪ Մեկնաբանել «Ինֆորմատիկա» ուսուցման նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, կազմակերպման ձևերը<br>▪ Արդյունավետորեն պլանավորեն դասը<br>**Կտիրապետեն՝**<br><br>▪ «Ինֆորմատիկա» առարկայի բովանդակությանը, ուսուցման միջոցներին, | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Գործնական աշխատանք՝**<br><br>Մշակել «Ինֆորմատիկա» առարկայից որևէ դասի պլան: | | | | | մեթոդներին և կազմակերպման ձևերին: | |
| | **«Ինֆորմատիկա» դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները:**<br><br>«Ինֆորմատիկա» դասագրքերը և դրանց բովանդակային առանձնահատկությունները<br><br>Նոր սերնդի թվային դասագրքերի մշակման և կիրառման արդյունավետ լուծումները: | 12 | 4 | 8 | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել «Ինֆորմատիկա» դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջներին, ինչպես նաև լաբորատորիաների նվազագույն կահավորման հիմնահարցերին | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կնկարագրեն մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներ, ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդները,<br>▪ կկիրառեն մանկավարժական տեխնոլոգիաների առանձին տարրեր օտար լեզուների առանձին թեմաների ուսուցման օրինակով,<br>▪ որոշ թեմաների ուսուցման օրինակով կդասակարգեն և ի տեղի կկիրառեն ուսուցման ավանդական, ակտիվ և փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Գործնական աշխատանք՝**<br><br>SWOT վերլուծություն «Ինֆորմատիկա» առարկայի դասագրքերի, մեթոդական ձեռնարկների և այլ դիդակտիկ միջոցների վերաբերյալ: | | | | | ընտրման հայտանիշները: | |
| | **Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը «Ինֆորմատիկա» առարկայի դասին և արտադասարանական աշխատանքներում:**<br><br>▪ «Ինֆորմատիկա» առարկայի լաբորատոր աշխատանքների կազմում ըստ բաժինների<br>▪ Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը «Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում:<br>**Գործնական աշխատանք՝**<br><br>▪ Մշակել ինֆորմատիկա առարկայից դասարանային | 12 | **4** | 8 | Թեմայի ուսումնասիրության նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել «Ինֆորմատիկա» առարկայից դասարանային և արտադասարանական լաբորատոր աշխատանքների կազմակերպման հիմնական սկզբունքներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br><br>**Կիմանան՝**<br><br>Ինֆորմատիկա առարկայի շրջանակներում դասարանային և արտադասարանական լաբորատոր աշխատանքների մշակման արդյունավետ ձևերը<br><br>**Կկարողանան՝**<br><br>մշակել «Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում դասարանային և արտադասարանական լաբորատոր աշխատանքներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և արտադասարանական լաբորատոր աշխատանքների օրինակներ տարբեր բաժիններից մեկական օրինակ կրտսեր, միջին և ավագ դպրոցում կիրառելու համար | | | | | **Կտիրապետեն՝** Ինֆորմատիկա առարկայի շրջանակներում դասարանային և արտադասարանական լաբորատոր առաջադրանքների մշակման և իրականացման նրբություններին | |
| | **Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերի դերը «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (ինֆորմատիկա) առարկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում:** <br>▪ Հաշվողականությունն | 12 | 4 | 8 | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը , համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերին նոր՝ | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները <br>**Կիմանան՝** <br>▪ հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերի դերը նոր՝ “Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Computing) ու հասարակությունը<br>▪ Թվային գործիքներն ու համագործակցությունը<br>▪ Համակարգչային սարքեր և համակարգեր<br>▪ Հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:<br>**Գործնական աշխատանք՝**<br><br>▪ Մշակել, պլանավորել լաբորատոր դասերի անցկացման սցենարներ հաշվի առնելով հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերի դերը «Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում: | | | | «Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում | **Կկարողանան՝**<br><br>▪ մշակել հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն գիտակարգերի հաշվառմամբ տարբեր առաջադրանքներ նոր՝ “Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում<br>**Կտիրապետեն՝**<br><br>▪ հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը, թվային գործիքներն ու համագործակցությունը, համակարգչային սարքեր և համակարգեր, հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողության ձևավորմանը նոր՝ «Ինֆորմատիկա» առարկայի շրջանակներում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կրտսեր, միջին և ավագ դպրոցներում | |
| | **Ինֆորմատիկա առարկայի չափորոշչային վերջնարդյունքները**<br><br>▪ Ինֆորմատիկա առարկայի չափորոշիչը:<br>▪ Ինֆորմատիկա առարկայի ուսուցման նպատակը:<br>▪ Ինֆորմատիկա առարկայի ծրագրային առանձնահատկությունները: «Ինֆորմատիկա» առարկայից վերջնարդյունքների ձևավորումը կրտսեր, միջին և ավագ դպրոցներում:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>SWOT վերլուծություն «Ինֆորմատիկա» առարկայի չափորոշչային | 12 | 4 | 8 | Թեմայի ուսումնասիրության նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել «Ինֆորմատիկա» առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հայեցակարգին, բովանդակությանը | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br><br>**Կիմանան՝**<br><br>▪ Ինֆորմատիկա առարկայի չափորոշչային պահանջները:<br>**Կկարողանան՝**<br><br>▪ արդյունավետորեն կիրառել «Ինֆորմատիկա» առարկայի չափորոշչային պահանջները առօրա գործունեության մեջ:<br>**Կտիրապետեն՝**<br><br>▪ Ինֆորմատիկա առարկայի չափորոշչային վերջնարդյունքների ձևավորմանը կրտսեր, միջին և ավագ դպրոցներում: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերջնարդյունքների վերաբերյալ կրտսեր, միջին և ավագ դպրոցներում | | | | | | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | **20** | **40** | | | |

# ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Դասընթացի անվանում | Կենսաբանության դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60 ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն. | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն** է՝

- հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ,
- ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,
- ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները.**

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

**Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները կենսաբանության դասավանդման գործընթացում,

- գնահատել և արժևորել կենսաբանության ուսուցման ժամանակակից մեթոդիկաները,
- հիմնավորել կենսաբանության դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

**Բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- պլանավորել կենսաբանություն առարկայի ուսումնական պարապմունքները,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները կենսաբանության դասավանդման գործընթացում
- իրականացնել կենսաբանության դասավանդման մեթոդների օպտիմալ ընտրություն,
- իրականացնել կենսաբանության դասերի ժամանակ աշակերտների գիտելիքների յուրացման վերահսկում,
- համեմատել կենսաբանության դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները և կիրառել դրանք ուսուցման գործընթացում,

**Գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- ստեղծել միջառարկայական կապեր կենսաբանության ուսուցման ընթացքում,
- ըմբռնել և կիրառել կենսաբանության ուսուցման ներառարկայական կապերը,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,
- կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ կենսաբանության ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով

հանդուրժողականություն սովորողների նկատմամբ,

- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները կենսաբանության դասավանդման գործընթացում:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.

- Դասախոսություն՝ շարժասահիկներով
- գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

Գնահատման **մեթոդները** .

- ***Բանավոր հարցում,***
- ***Ուսումնական նախագծերի ներկայացում,***
- ***Գրավոր աշխատանքներ,***
- ***Ռեֆերատներ,***
- ***Սահիկների կազմում և ներկայացում:***

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**

- Դասավանդման մեթոդիկայի առարկան և նրա խնդիրները:
- Կենսաբանության դասընթացի կառուցման հիմնական ձևերը:
- Կենսաբանության ուսուցման մասնավոր մեթոդներ:
- Դպրոցներում կենսաբանություն ուսումնական առարկայի բովանդակության սկզբունքները:

- Միջառարկայական կապերի հաստատում:
- Հայրենի բնության մասին ուսումնական ծրագրի կառուցում և դասավանդում:
- Կենսաբանության դասավանդման նյութական բազայի ստեղծում:

**Գրականության ցանկ.**


- Գևորգյան Է. Ս., Դանիելյան Ֆ. Դ., Եսայան Ա. Հ., Սևոյան Գ. Գ., Կենսաբանություն-12, դասագիրք ավագ դպրոցի 12-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքերի համար, Երևան, 2011:
- Գևորգյան Է.Ս., Դանիելյան Ֆ.Դ., Եսայան Ա.Հ., Սևոյան Գ.Գ., Կենսաբանություն-11, դասագիրք ավագ դպրոցի 11-րդ դասարանի հումանիտար հոսքերի համար, Երևան, 2011:
- Գևորգյան Է.Ս., Դանիելյան Ֆ.Դ., Եսայան Ա.Հ., Սևոյան Գ.Գ., Կենսաբանություն-10, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար հոսքերի համար, Երևան, 2011:
- Սվաճյան Ա.Կ., Ստեփանյան Ս.Գ. – Կենսաբանության դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978:
- Ермолаева М.Г. Современный урок: анализ, тенденции, возможности: Учебно-методическое пособие. СП.: 2011
- Лихачев Б.Т. Педагогика. Курс лекций. М.; 2010.
- Островский Э. В. Психология и педагогика: учебное пособие / Э.В. Островский, Л.И. Чернышова. М., 2013
- Теория обучения. Учебное пособие / Ибрагимов Г.И., Ибрагимова Е.М.. Андрианова Т.М.- М.:, 2011.

## Թեմատիկ պլան

**Թեմա 1. Դասավանդման մեթոդիկայի առարկան և նրա խնդիրները: (7 ժամ)**

Կենսաբանության դասավանդման մեթոդիկան որպես գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Տարբեր կարևոր թեմաների քննարկում: Խնդիրների լուծում):

**Թեմա 2. Կենսաբանության դասի նախապտրաստումը: Կենսաբանության դասընթացի կառուցման հիմնական ձևերը: /7ժամ/**

Հանրակրթական դպրոցի կենսաբանություն առարկայի ուսումնասիրման նպատակները,բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, կենսաբանություն առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարները:

Գործնական աշխատանք /գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն/

**Թեմա 3. Կենսաբանության դասավանդման տարբեր մեթոդները (8ժամ)**

Ուսուցման ցուցադրական նյութի կարևորությունը: Կենսաբանության ուսուցման մասնավոր մեթոդներ:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Տարբեր մեթոդների կիրառման արդյունավետությունը տարբեր թեմաներ քննարկելիս):

**Թեմա 4. Դպրոցներում կենսաբանություն ուսումնական առարկայի բովանդակության սկզբունքները: (7 ժամ)**

«Կենսաբանություն» առարկայի հիմնական գաղափարների կառուցման հիմնական սկզբունքները, ուսուցման/ուսումնասիրման

գործընթացում մտային գործունեության հնարների կիրառումը:

<u>**Գործնական աշխատանք**</u> (Բովանդակության քննարկում):

**Թեմա 5. Սովորողների գիտելիքների և կարողությունների վերահսկումը, ուսուցումն ու գնահատումը: (7ժամ)**

Կրթական բոլոր մակարդակներում վերջնարդյունքներին համապատասխան կարողունակություններ ձևավորող և զարգացնող գործունեության տեսակների բնութագրերը: Մանկավարժական հաղորդակցման հիմնական կանոնները և մանկավարժական հաղորդակցման փուլերը:

<u>**Գործնական աշխատանք**</u> (Ուսուցման խոսքային մեթոդը: Խնդիրների քննարկում և լուծման սխեմայի կառուցում):

**Թեմա 6. Կենսաբանական համակարգերի կազմավորման մակարդակների մասին պատկերացման ստեղծման նրբությունները աշակերտների մոտ: (8ժամ)**

Սովորողների գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը կենսաբանության ուսուցման գործընթացում:Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները:Գնահատման տեսակները:

**Գործնական աշխատանք** /Նախնական գնահատում:Ընթացիկ գնահատում:Ամփոփիչ գնահատում:/

**Թեմա 7. Հայրենի բնության մասին ուսումնական ծրագրի կառուցում և դասավանդում: /7 ժամ/**

Հայաստանում էնդեմիկ կենդանի օրգանիզմների տեսակների մասին տեղեկատվության քննարկում:

**Գործնական աշխատանք** /Աղյուսակների կազմում և ներկայացում/

**Թեմա 8. Կենսաբանության դասավանդման նյութական բազայի ստեղծում: /7 ժամ/** Լաբորատոր պարապմունքների դերը

կենսաբանության ուսուցման մեջ:

**Գործնական աշխատանք** /Անհրաժեշտ նյութերի ցանկի կազմում և քննարկում/

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1 | **Դասավանդման մեթոդիկայի առարկան և նրա խնդիրները:**<br><br>Կենսաբանության դասավանդման մեթոդիկան որպես գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ | **7** | **2** | **5** | Հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ<br><br>Ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները, | Թեմայի ուսումնասիրման ավարտին մասնակիցները.<br><br>. կսահմանեն կենսաբա-նության հիմնական հասկացությունները և կտան դրանց մատչելի բացատրություն, | |
| 2 | **Կենսաբանության դասի նախապատրաստումը: Կենսաբանության դասընթացի կառուցման հիմնական ձևերը: /5 ժամ/**<br><br>Հանրակրթական դպրոցի | **7** | **2** | **5** | | Թեմայի ուսումնասիրության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կենսաբանություն առարկայի ուսումնասիրման նպատակները,բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, կենսաբանություն առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարները: | | | | | ավարտին մասնակիցները.<br><br>կմեկնաբանեն կրթական ժամանակակից տեխնոլոգիաները կենսաբանության դասավանդման գործընթացում, | |
| 3 | **Կենսաբանության դասավանդման տարբեր մեթոդները** Ուսուցման ցուցադրական նյութի կարևորությունը: Կենսաբանության ուսուցման մասնավոր մեթոդներ: | **8** | **3** | **5** | Ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>Կիմանան, կգնահատեն և կարժևորեն կենսաբանության ուսուցման ժամանակակից մեթոդիկաները,<br><br>կօգտագործեն ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները կենսաբանության դասավանդման գործընթացում,<br><br>կիրականացնեն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կենսաբանության դասավանդման մեթոդների օպտիմալ ընտրություն, | |
| 4 | **Դպրոցներում կենսաբանություն ուսումնական առարկայի բովանդակության սկզբունքները:**<br><br>«Կենսաբանություն» առարկայի հիմնական գաղափարների կառուցման հիմնական սկզբունքները, ուսուցման/ուսումնասիրման գործընթացում մտային գործունեության հնարների կիրառումը: | **7** | **2** | **5** | Ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>կընտրեն կենսաբանության ուսուցման արդյունավետ մեթոդիկա,<br><br>կիրականացնեն կենսաբանության դասերի ժամանակ աշակերտների գիտելիքների յուրացման վերահսկում,<br><br>կհամեմատեն կենսաբանության դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները և կկիրառել դրանք ուսուցման գործընթացում | |
| 5 | **Սովորողների գիտելիքների և կարողությունների վերահսկումը, ուսուցումն ու գնահատումը:**<br><br>Կրթական բոլոր մակարդակներում վերջնարդյունքներին | **7** | **2** | **5** | Հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br><br>կհիմնավորեն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխան կարողունակություններ ձևավորող և զարգացնող գործունեության տեսակների բնութագրերը: Մանկավարժական հաղորդակցման հիմնական կանոնները և մանկավարժական հաղորդակցման փուլերը: | | | | մեթոդաբանության վերաբերյալ,<br><br>Ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,<br><br>Ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին: | կենսաբանության դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում,<br><br>կընտրեն կենսաբանության ուսուցման արդյունավետ մեթոդիկա,<br><br>կստեղծեն միջառարկայական կապեր կենսաբանության ուսուցման ընթացքում,<br><br>կդասակարգեն ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և կընտրեն կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկա, | |
| 6 | **Կենսաբանական համակարգերի կազմավորման մակարդակների մասին պատկերացման ստեղծման նրբությունները աշակերտների մոտ:**<br><br>Սովորողների գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը  կենսաբանության ուսուցման գործընթացում:Սովորողների գնահատման նպատակներն ու | **8** | **3** | **5** | Հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ,<br><br>Ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,<br><br>Ծանոթացնել կենսաբանության | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>կմեկնաբանեն կրթական ժամանակակից տեխնոլոգիաները կենսաբանության դասավանդման գործընթացում,<br><br>կգնահատեն և կարժևորեն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | խնդիրները:Գնահատման տեսակները: | | | | դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին: | կենսաբանության ուսուցման ժամանակակից մեթոդիկաները<br>կկիրառեն ուսուցման ինտերակտիվ մեթոդներ կենսաբանության ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ, | |
| 7 | **Հայրենի բնության մասին ուսումնական ծրագրի կառուցում և դասավանդում:**<br>Հայաստանում էնդեմիկ կենդանի օրգանիզմների տեսակների մասին տեղեկատվության քննարկում: | **7** | **3** | **4** | Հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ,<br>Ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,<br>Ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին:<br>Հաղորդել գիտելիքներ | Թեմայի ուսումնասիրման ավարտին սովորողները<br>կմեկնաբանեն կրթական ժամանակակից տեխնոլոգիաները կենսաբանության դասավանդման գործընթացում,<br>կգնահատեն և կարժևորեն կենսաբանության ուսուցման ժամանակակից մեթոդիկաները | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Կենսաբանության դասավանդման նյութական բազայի ստեղծում:** Լաբորատոր պարապմունքների դերը կենսաբանության ուսուցման մեջ: | | | | հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում կենսաբանություն առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ,<br><br>Ներկայացնել կենսաբանության դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,<br><br>Ծանոթացնել կենսաբանության դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին | Թեմայի ուսումնասիրման ավարտին սովորողները<br><br>կկիրառեն ուսուցման ինտերակտիվ մեթոդներ կենսաբանության ուսուցման գործընթացում՝ ցուցաբերելով հանդուրժողականություն սովորողների նկատմամբ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | 7 | 3 | 4 | | | |
| | Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում | 2 | | 2 | | | Թեստային աշխատանք |
| Ընդամենը՝ | | 60 | 20 | 40 | | | |

## ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

| **2.** | Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
|---|---|---|---|
| 60 ժամ լսարանային, որից՝ 20 ժ. դաս. 40 ժ. գործն., | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է** .

- ձևավորել գիտելիքներ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Կերպարվեստ» առարկայի դասավանդման առանձնահատկությունների վերաբերյալ,
- բացահայտել տեսությունների զարգացման միտումները,
- ձևավորել պատկերացումներ «Կերպարվեստ» առարկայի դասընթացում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ,
- ձևավորել գիտելիքներ գնահատման նոր մեթոդաբանության վերաբերյալ,
- ձևավորել հիմնարար գիտելիքներ՝ կերպարվեստի ստեղծագործական, վերլուծական ընկալման և մտածողության զարգացման վերաբերյալ,

| |
|---|
| • ձևավորել գիտելիքներ առարկայի ուսումնական խնդիրների, անհրաժեշտ նյութերի, կերպարվեստի տարրերի և մասնագիտական եզրույթների (ջրաներկ, ակրիլ, յուղաներկ, կտավ, թուղթ, գույն, տարածություն, ժանր, ոճ, տեսակ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, շարժում և այլն) վերաբերյալ,<br>• համառոտ ներկայացնել հայ և համաշխարհային կերպարվեստի պատմությունը,<br>• ձևավորել գիտելիքներ յուրաքանչյուր ժամանակաշրջանի քաղաքակրթությանը բնորոշ կերպարվեստի զարգացման միտումների ու դրանց դրսևորումների վերաբերյալ,<br>• ձևավորել ստացված գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ կիրառելու, տեղեկատվական տարբեր աղբյուրներից, համացանցից և էլէկտրոնային միջոցներից օգտվելու հմտություններ: |
| **Դասընթացի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները.**<br><br>**Դասընթացի ավարտին սովորողը՝**<br><br>**Ա. Մասնագիտական գիտելիքներ**<br><br>• կդասակարգի ուսուցման ժամանակակից մեթոդները և կընտրի «Կերպարվեստի: դասավանդման արդյունավետ հնարներ՝ ըստ անհրաժեշտության,<br>• կմեկնաբանի կերպարվեստի ուսուցման նպատակները, խնդիրները, հիմնական առանձնահատկությունները,<br>• կսահմանի կերպարվեստի ուսուցման հիմնական հասկացությունները,<br>• կներկայացնի հայկական քաղաքակրթության և կերպարվեստի զարգացման միտումներն ու առանձնահատկությունները,<br>• կներկայացնի հայկական կերպարվեստում համաշխարհային գեղարվեստական – մշակութային միջավայրին բնորոշ հատկանիշները և փոխառնչությունները:<br>• կվերլուծի ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները, |

| |
|---|
| • կմեկնաբանի «Կերպարվեստի» դասավանդման գործընթացում կրթական ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման առավելությունները։<br><br>**Բ. Մասնագիտական կարողություններ**<br><br>• կհամեմատի ուսուցման ավանդական և ժամանակակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունները «Կերպարվեստի» դասավանդման գործընթացում,<br>• «Կերպարվեստի» դասավանդման գործընթացում  կկիրառի համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ,<br>• կընտրի կերպարվեստի ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր և տեխնիկական միջոցներ,<br>• կներկայացնի գեղարվեստական գործունեության հմտություններ<br>• կներկայացնի «Կերպարվեստի» դասավանդման գործընթացում արժեքային համակարգի ձևավորման ուղղված նմուշօրինակներ սգտեղշում։<br>• կգնահատի սովորողների գիտելիքները՝ կիրառելով համապատասխան չափանիշներ, մեթոդներ և գործիքներ։ |
| **Դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները**.<br>• *դասախոսություն՝ սահիկների ուղեկցությամբ*<br>• *գործնական առաջադրանքներ*<br>• *բանավեճեր և երկխոսություններ*<br>• *թեմատիկ (ուսումնական) ֆիլմերի դիտումներ և քննարկումներ։* |

| |
|---|
| **Գնահատում.**<br>• բանավոր հարցում,<br>• գործնական աշխատանքներ,<br>• ռեֆերատներ։ |
| **Դասընթացի թեմաները.**<br>Թեմա 1. Կերպարվեստը արվեստների շարքում։<br>Թեմա 2. Կերպարվեստի տեսակները։<br>Թեմա 3. Կերպարվեստի ժանրերը։<br>Թեմա 4. Կերպարվեստ առարկայի չափորոշիչը և օրինակելի ծրագիրը։ Հիմնական գաղափարներ։ Դասընթացի կազմակերպումն ըստ ակնկալվող վերջնարդյունքների։<br>Թեմա 5 Դասի կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները։<br>Թեմա 6. Կերպարվեստի դասի կառուցվածքը ըստ դասի տեսակի։<br>Թեմա 7. Կերպարվեստի դասընթացներում օգտագործվող նյութերը։<br>Թեմա 8.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը կերպարվեստի դասերին։<br>Թեմա 9.Ուսուցման ժամանակակից մեթոդները և հնարները Կերպարվեստի դասավանդման գործընթացում։ |

Թեմա 10. Մանկական աշխատանքների վերլուծություն:

Թեմա 11. Գնահատման նոր մեթոդաբանությունը և աշակերտների գնահատումը:

Թեմա 12. Ուսոցչին ներկայացվող ժամանակակից պահանջները /վարկանիշավորման պահանջներ:

**Գրականության ցանկ.**


- *Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը Երևան 1975:*
- *Աղասյան Ա., Հակոբյան Հր., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. Հայ արվեստի պատմություն, Զանգակ- 97, Երևան, 2009:*
- *Աղասյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2009, 292էջ:*
- Աղասյան Ա.Վ. Արվեստի պատմություն: Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Արմավ. 2022թ. Գիրք 2. 308 էջ:
- *Առաքելյան Բ., Ակնարկներ Հին Հայաստանիարվեստի պատմության, Երևան, 1976:*
- *Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. 9-6-րդ դարերում, Երևան, 2006:*
- *Երզնկյան Մ., Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, 2003:*
- *«Հանրակրթության պետական չափորոշիչ»՝ ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:*
- *Կերպարվեստ առարկայի չափորոշիչ և օրինակելի ծրագիր, ԿԳՄՍ նախարարի 2023 թ., մարտի 30-ի N 40-Ն և 2022 թ. նոյեմբերի 24-ի N 47-Ն հրամաններ:*
- *Ղազարյան Մ.« Հայ կերպարվեստը 17-18 րդ դդ գեղանկարչություն, Երևան 1974:*
- *Ղազարյան Վ., Հակոբյան Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, 2013*
- *Մարտիկյան Ե., Հայ կերպարվեստի պատմություն, Երևան, գիրք Ա. 1971, գիրք Գ. 1983., գիրք Դ, 1987:*
- *Ներսիսյան Լ.Ս., Գյուլմիսարյան Ե., Ձեռնարկուսուցչի համար. 1-4-րդ դասարաններ, Երևան, Զանգակ 97, 2008թ. 68 էջ:*

- *Սարգսյան Ս.Մ., Պլեներային ուսումնական գործընթաց (մեթոդական ցուցումներ): Հեղ. Հրատ.: Երևան, 2009թ. 54 էջ:*
- *Колякина, В.И., Методика организации уроков коллективного творчества: Планы и сценарии уроков изобразительнного искусства,Серия: Библиотека учителя изобразительной деятельности, М.: Владос, 2002 г., 176 ст..*
- *Неменский Б.М. Изобразительное искусство и художественный труд в начальной школе: система преподавания уроков ИЗО в 1-4 классах, Издательство: Учитель, 2007г.*
- *Неменский Б. М., Неменская Л. А., Коротеева Е.И., "Изобразительное искусство. Методическое пособие. 1-4 классы", Просвещение, 2010г.,192ст.*
- *Неменский, Неменская, Горяева: Изобразительное искусство. 1-4, 5-8 классы. Сборник примерных рабочих программ. ФГОС, Издательство: Просвещение, 2021 г., 304 ст.*
- *Ростовцев Н.Н., Методика преподавания изобразительного искусства в школе, Издательство "Рандеву-АМ", Москва, 2000 г., 234 ст..*


**«Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա»**

**դասընթացի ծրագիր /4 կրդ./**

**Թեմա 1. Կերպարվեստը արվեստների շարքում: (3 ժամ)**

Կերպարվեստը որպես վիզուալ արվեստի տեսակ և մարդու ստողծագործական կարողությունները զարգացնելու միջոց:

Կերպարվեստի առաջին ստեղծագործությունները և զանրգացումը՝ քարանձավային պատկերներ: Կերպարվեստի դասավանդման նպատակը որպես հանրակրթական առարկա և միջառարկայական կապերը:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների դիտում տեսասաhիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Կերպարվեստի տեսակները: (5 ժամ)**

Գեղանկարչություն, Գրաֆիկա: Քանդակագործություն: Դեկորատիվ կիրառական արվեստ: Ճարտարապետություն: Կերպարվեստի տեսակների տարբերությունները ըստ օգտագործվող նյութերի և կատարման ձևերի:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների դիտում տեսասաhիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն):

**Թեմա 3. Կերպարվեստի ժանրերը : (5 ժամ)**

Կերպարվեստի ժանրերը: Կերպարվեստի ժանրերի տարբերակումը ըստ պատկերման օբյեկտների: Ժանրերի ձևավորման ժամանակագրական դասակարգումը:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Ստեղծագործությունների դիտում տեսասաhիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն):

**Թեմա 4. Կերպարվեստ առարկայի չափորոշիչը և օրինակելի ծրագիրը: Հիմնական գաղափարներ: Դասընթացի կազմակերպումն ըստ ակնկալվող վերջնարդյունքների: (5 ժամ)**

Նյութեր և միջոցներ: Կերպարվեստի տարրեր և դիզայնի սկզբունքներ: Նորարություն և երևակայություն: Վերանայում և ցուցադրում: Քննադատական արձագանք: Գնահատում և ինքնագնահատում: Արվեստ, տեխնոլոգիաներ և գյուտեր, Արվեստի պատմություն, Արվեստի դերը և նշանակությունը: Խաչվող հասկացություններ: Թեմատիկ պլանավորում:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Թեմատիկ պլանի կազմում, քննարկում, վերլուծություն):

**Թեմա 5. Դասի կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները: (5 ժամ)**

Ֆրոնտալ աշխանանք: Անհատական և ինքնուրույն աշխատանք: Զույգերով և խմբային աշխատանք: Խմբային աշխատանքի կազմակերպում: Տարբերակված ուսուցում:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Խմբային կամ զույգերով աշխատանք, վերլուծություն):

**Թեմա 6. Կերպարվեստի դասի կառուցվածքը ըստ դասի տեսակի: Դասի պլան: (5 ժամ)**

Կերպարվեստի դասերի կառուցվածքը ըստ դասի տեսակի: Դասի կառուցվածքը: Դասի պլանավորում: Ուսուցչի նախապատրաստական աշխատանք:

**Գործնական աշխատանք** (Դասի պլան ըստ դասի տեսակի, քննարկում, վերլուծություն):

**Թեմա 7. Կերպարվեստի դասընթացներում օգտագործվող նյութերը: (5 ժամ)**

Գեղանկարչական նյութեր՝ գուաշ, ջրաներկ, ակռիլ: Գրաֆիկական նյութեր՝ մատիտ, ածուխ: Ծեփակերտում՝ պլաստիրին, կավ: Աշխատանք գունավոր թղթերով: Ապակենկարչություն: Բատիկ: Կերպարվեստի գործունեությանը անհրաժեշտ գրենական պիտույքներ և պարագաներ:

**Գործնական աշխատանք** (Աշխատանք տարբեր նյութերով):

**Թեմա 8. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը կերպարվեստի դասերին: (5 ժամ)**

Կերպարվեստագին գործունեության կազմակերպում կույր և մնացորդային տեսողություն ունեցող երեխաների հետ: Աշխատանքային միջավայրի կազմակերպում:

**Գործնական աշխատանք** ( Տեսասահիկի դիտում, դեբատ, քննարկում, վերլուծություն):

**Թեմա 9. Ուսուցման ժամանակակից մեթոդները և հնարները Կերպարվեստի դասավանդման գործընթացում: (5 ժամ)**

Դասավանդման մեթոդները և դրանց արդիականությունը: Ուսուցման փոխկապակցված, նպատակային, բովանդակային, տրամաբանական, գեղագիտական ասպեկտները:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Դասի պլանի քննարկում, վերլուծություն):

**Թեմա 10. Մանկական աշխատանքների վերլուծություն : (5 ժամ)**

Երեխայի նկարում օգտագործվող գույների, գծերի, պատկերների ընտրությունը և նշանակությունը: Աշխատանք դպրոցի հոգեբանների հետ:

**<u>Գործնական աշխատանք</u>** (Մանկական աշխատանքների քննարկում, վերլուծություն):

**Թեմա 11.Գնահատման նոր մեթոդաբանությունը և աշակերտների գնահատումը: (5 ժամ)**

Հայտորոշիչ գնահատում: Ձևավորող գնահատում: Ամփոփիչ գնահատում: Գնահատման չափանիշների մշակում ըստ առաջադրանքի: Զույգերով և խմբային աշխատանքների գնահատման առանձնահատկությունները:

**Թեմա 12. Ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները /վարկանիշավորման պահանջներ/: (5 ժամ)**

Դասարանային մշակույթ՝ նպաստավոր ուսումնական միջավայր, դրական վարքագծի ակնկալիքներ: Դասավանդում՝ դասի խթանում, նյութի մատչելի մատուցում, հետադարձ կապ, քննական մտածողություն: Սոցիալ-հուզական հմտություններ՝ ինքնուրույնություն,

համառություն, սոցիալական և համագործակցային հմտություններ:

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2ժամ)**

**«Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան**

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1. | **Կերպարվեստը արվեստների շարքում:**<br>Ներկայացնել կերպարվեստը որպեսզ վիզուալ արվեստի տեսակ: Կերպարվեստի առաջին ստեղծագործությունները և զանգացում: Քննարկել կերպարվեստ առարկայի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցում: Ներկայացնել միջառարկայական կապերի միջոցով երեխաների կարողությունների ցարգացման ուղիները: | 3 | 1 | 2 | ▪ ներկայացնել կերպարվեստ առարկան որպես վիզուալ արվեստի տեսակ:<br>▪ ծանոթացնել կերպարվեստի առաջին ստեղծագործություններին, առաջի կերպարվեստի դպրոցներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ Կճանաչեն կերպարվեստի առաջին ստեղծագործությունները,<br>▪ Կմեկնաբանեն առարկայի նշանակությունը կընտրեն, կհամադրեն տարբեր դպրոցների մոտեցումներ: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | <u>**Գործնական աշխատանք**</u><br>(Ստեղծագործությունների դիտում տեսասահիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն):**Ախտորոշիչ գնահատում:** | | | | | | |
| 2. | **Կերպարվեստի տեսակները:**<br>Ներկայացնել կերպարվեստի չորս տեսակները: Գեղանկարչություն, Գրաֆիկա: Քանդակագործություն, Դեկորատիվ կիրառական արվեստ:<br>Ներկայացնել տեսակների տարբերությունները ըստ օգտագործվող նյութերի և կատարման ձևերի:<br><u>**Գործնական աշխատանք**</u><br>(Ստեղծագործությունների դիտում տեսասահիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն): | **5** | 1 | 4 | Հաղորդել կերպարվեստի տեսակների մասին գիտելիքներ:<br>Ցուցադրել կերպարվեստի տարբեր տեսակներին պատկանող արվեստի առավել հայտնի ստեղծագործություններ: Ցուցդրել այդ ստեղծագործությունների տեխնիկական կատարման և նյութական տարբերությունները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կթվարկեն կերպարվեստի տեսակները,<br>▪ կճանաչեն և կմեկնաբանեն կերպարվեստի տարբեր տեսակներին պատկանող արվեստի առավել հայտնի ստեղծագործություննե ր,<br>▪ կմեկնաբանեն ստեղծագործություննե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | րի կատարման եղենակները, | |
| 3. | **Կերպարվեստի ժանրերը :**<br><br>Ներկայացնել կերպարվեստի ինը ժանրերը, կերպարվեստի ժանրերի տարբերակումը ըստ պատկերման օբյեկտների: Ներկայացնել ժանրերի ձևավորման ժամանակագրական դասակարգումը:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>**<br>(Ստեղծագործությունների դիտում տեսասահիկի միջոցով, դեբատ, համեմատական վերլուծություն): | **5** | **2** | **3** | Հաղորդել կերպարվեստի ժանրերի մասին գիտելիզներ:<br><br>Ցուցադրել կերպարվեստի տարբեր ժանրերին պատկանող արվեստի առավել հայտնի ստեղծագործություններ: Ներկայացնել այդ ստեղծագործությունների տեխնիկական կատարման և նյութական տարբերությունները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կթվարկեն կերպարվեստի ժանրերը,<br>▪ կճանաչեն և կմեկնաբանեն կերպարվեստի տարբեր ժանրերին պատկանող արվեստի առավել հայտնի ստեղծագործություննե րը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| 4. | **Կերպարվեստ առարկայի չափորոշիչը և օրինակելի ծրագիրը: Հիմնական գաղափարներ: Դասընթացի կազմակերպումն ըստ ակնկալվող վերջնարդյունքների:** Ներկայացնել դպրոցում անցկացվող կերպարվեստային գործունեությունը ըստ դասի տեսակների՝ թեմատիկ նկարչություն, բնօրինակից նկարչություն, դեկորատիվ գործունեություն, զրույցներ արվեստի մասին: Ներկայացնել կերպարվեստային գործունեության տեսակի ազդեցությունը երեխաների ստեղծագործական կարողությունների ձևավորման | 5 | 2 | 3 | Հաղորդել կերպարվեստի դասի տեսակների մասին գիտելիքներ ըստ դասարանների, ներկայացնել դրանցից յուրաքանչյուրի նպատակը Ներկայացնել ժամային բաշխվածությունը:: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ Կիմանան, կթվարկեն և կմեկնաբանեն կերպարվեստի դասի տեսակները,<br>▪ Կիմանան դասի ժամային բաշխվածությունը ըստ տեսակների:<br>▪ Կկազմեն տարեկան օրացուցային պլան: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գործում: Ներկայացնել Կերպարվեստ առարկայի տարեկան ժամաքանակի բաշխվածությունը ըստ դասի տեսակի: **<u>Գործնական աշխատանք</u>** (Նկարչություն ըստ կերպարվեստի դասի տեսակների, քննարկում, վերլուծություն): | | | | | | |
| 5. | **Դասի կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները:** Ֆրոնտալ աշխանանք: ԱՆհատական և ինքնուրույն աշխատանք: Զույգերով և խմբային աշխատանք: Խմբային աշխատանքի կազմակերպում: Տարբերակված հանձնարարություն: **<u>Գործնական աշխատանք</u>** (Խմբային կամ զույգերով աշխատանք, վլուծություն): | 5 | 2 | 3 | Ներկայացնել դասի կազմակերպման ձևերը: Կատարել խմբի բաժանում՝ կիրառելով տարբեր մոտեցումներ: Սովորեցնել կազմել հանձնարարությունների կիրառելով տարբերակման մեթոդները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կիմանան, կերպարվեստի , դասի կազմակերպման ձևերը,<br>կկատարեն խմբի բաժանում՝ կիրառելով տարբեր մոտեցումներ,<br>▪ կկազմեն հանձնարարություններ անհատական, ինքնուրույն, զույգերով և խմբային | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աշխատանքների համար: | |
| 6. | **Կերպարվեստի դասի կառուցվածքը ըստ դասի տեսակի:**<br><br>Կերպարվեստի դասերի կառուցվածքը ըստ դասի տեսակի: Ժամի բաշխում: Դասի պլանավորում: Ուսուցչի նախապատրաստական աշխատանք:<br><br>**<u>Գործնական աշխատանք</u>** (Դասի պլան ըստ դասի տեսակի, քննարկում, վերլուծություն): | 5 | 2 | 3 | Ներկայացնել կերպարվեստի դասի կառուցվածքը ըստ դասի տեսակների: Սովորեցնել կացմել դասի պլան: Ներկայացնել ուսուցչի նախապատրաստական աշխատանքը և դրա կարևորությունը: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկազմեն դասի պլան,<br>▪ Կկարողանան վերլուծել դասը և արդյունքները: | |
| 7. | **Կերպարվեստի դասընթացներում օգտագործվող նյութերը:**<br>Գեղանկարչական նյութեր՝ գուաշ, ջրաներկ, ակրիլ: Գրաֆիկական նյութեր՝ մատիտ, ածուխ: Ծեփակերտում՝ պլաստիրին, կավ: Աշխատանք գունավոր թղթերով: Ապակենկարչություն: Բատիկ: Կերպարվեստի գործունեությանը անհրաժեշտ գրենական պիտույքներ | 5 | 2 | 3 | Ներկայացնել կերպարվեստի դասերին օգտագործվող նյութերը ըստ դասի տեսակի:<br><br>Սովորեցնել աշխատել այդ նյութերով: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան աշխատել և ստեղծագործել տարբեր նյութերով: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և պարագաներ: <br><br> <u>**Գործնական աշխատանք**</u> (Աշխատանք տարբեր նյութերով): | | | | | | |
| 8. | **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը կերպարվեստի դասերին:** <br><br> Կերպարվեստագին գործունեության կազմակերպում կույր և մնացորդային տեսողություն ունեցող երեխաների հետ: Աշխատանքային միջավայրի կազմակերպում: <br><br> <u>**Գործնական աշխատանք**</u> ( Տեսաաահիկի դիտում, դեբատ, քննարկում, վերլուծություն): | 5 | 2 | 3 | Ներկայացնել Կրթության հատուկ պահանջներ ունեցող երեխաների հետ աշխատանքի մեթոդները: <br><br> Կազմել գործնական հանձնարարություններ կազմակերպում կույր և մնացորդային տեսողություն ունեցող երեխաների համար: <br><br> Սովորեցնել կազմակերպել աշխատանքային միջավայրը: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները. <br><br> ▪ կկարողանան կերպարվեստի դասերին կազմակերպել աշխատանքային միջավայր կրթության հատուկ պայմաններ պահանջող երեխաների համար, <br> ▪ կտիրապետեն նման երեխաների հետ աշխատելու մեթոդներին: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 9. | **Ուսուցման ժամանակակից մեթոդները և հնարները Կերպարվեստի դասավանդման գործընթացում:** Դասավանդման մեթոդները և դրանց գործառույթները: Ուսուցման փոխկապակցված, նպատակային, բովանդակային, տրամաբանական, գեղագիտական և կառավարման ասպեկտները: **<u>Գործնական աշխատանք</u>** (Դասի պլան ըստ դասի տեսակի, քննարկում, վերլուծություն): | 5 | 2 | 3 | Ներկայացնել դասավանդման մեթոդները և դրանց գործառույթները: Սովորեցնել դասի պլանավորման ժամանակ պլանավորել նաև դասավանդման մեթոդները: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները. ▪ կկարողանան դասի պլանավորման ժամանակ պլանավորել նաև դասավանդման մեթոդները, ▪ կտիրապետեն կերպարվեստի ուսուցման մեթոդների և հնարներին: | |
| 10. | **Մանկական աշխատանքների վերլուծություն:** Երեխայի նկարում օգտագործվող գույների ընտրությունը և նշանակությունը: Աշխատանք դպրոցի | 5 | 2 | 3 | Ծանոթացնել մանկական նկարում գույների նշանակությանը: Ներկայացնել դպրոցի հոգեբանի հետ աշխատանքի | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները. ▪ կմեկնաբանեն մանկական նկարը, ▪ կբացահայտեն առկա | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հոգեբանների հետ:<br><br>**Գործնական աշխատանք**<br>(մանկական նկարի քննարկում, վերլուծություն): | | | | անհրաժեշտությունը և կարևորությունը: Քննարկել և վերլուծել մանկական նկարներ: | խնդիրները: | |
| 11. | **Գնահատման նոր մեթոդաբանությունը և աշակերտների գնահատումը:**<br><br>Գնահատման չափանիշների մշակում ըստ առաջադրանքի: Զույգերով և խմբային աշխատանքների գնահատման կարգ: | 5 | 1 | 4 | Ներկայացնել գործող գնահատման կարգը:<br><br>Սովորեցնել մշակել գնահատման չափանիշներ տարբեր առաջադրանքների համար: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կմշակեն առանձին առաջադրանքների համար գնահատման չափանիշներ,<br>▪ Կկարողանան գնահատել զույգերով և խմբային աշխատանքները,<br>▪ իմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները: | |
| 12. | **Ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները /վարկանիշավորման պահանջներ/:**<br>Դասարանային մշակույթ՝ | 5 | 1 | 4 | Ներկայացնել ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները: Սովորեցնել պլավավորել և անցկացնել կերպարվեստի դաս՝ հաշվի | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կթվարկեն և կմեկնաբանեն ուսուցչին | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նպաստավոր ուսումնական միջավայր, դրական վարքագծի ակնկալիքներ: Դասավանդում՝ դասի խթանում, նյութի հասկացվածության ստուգում, հետադարձ կապ, քննական մտածողություն: Սոցիալ-հուզական հմտություններ՝ ինքնուրույնություն, համառություն, սոցիալական և համագործակցային հմտություններ: | | | | առնելով վարկանիշավորման պահանջները: | ներկայացվող պահանջները, ▪ դասը կկազմակերպեն այդ պահանջների համաձայն: | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստայի աշխատան** |
| **Ընդամենը՝** | | 60 | **20** | **40** | | | |

**3.Գրականության ցանկ**


1. Աղասյան Ա.Վ. Արվեստի պատմություն: Կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Արմավ. 2022թ. Գիրք 2. 308 էջ:

2. Ներսիսյան Լ.Ս., Գյուլմիսարյան Ե., Ձեռնարկուսուցչի համար. 1-4-րդ դասարաններ, Երևան, Զանգակ 97, 2008թ. 68 էջ:

3. Սարգսյան Ս.Մ., Պլեներային ուսումնական գործընթաց (մեթոդական ցուցումներ): Հեղ. Հրատ.: Երևան, 2009թ. 54 էջ:

4. Неменский Б.М. Изобразительное искусство и художественный труд в начальной школе: система преподавания уроков ИЗО в 1-4 классах, Издательство: Учитель, 2007г.

5. Неменский Б. М., Неменская Л. А., Коротеева Е.И., "Изобразительное искусство. Методическое пособие. 1-4 классы", Просвещение, 2010г.,192ст.

6. Неменский, Неменская, Горяева: Изобразительное искусство. 1-4, 5-8 классы. Сборник примерных рабочих программ. ФГОС, Издательство: Просвещение, 2021 г., 304 ст.

7. Колякина, В.И., Методика организации уроков коллективного творчества: Планы и сценарии уроков изобразительнного искусства,Серия: Библиотека учителя изобразительной деятельности, М.: Владос, 2002 г., 176 ст..

8. Ростовцев Н.Н., Методика преподавания изобразительного искусства в школе, Издательство "Рандеву-АМ", Москва, 2000 г., 234 ст..

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

| | | | |
|---|---|---|---|
| **2801** | **Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ** | **4 կրեդիտ** | **120ժամ** |
| **Ընդհ. 60ժամ լսարան., որից՝<br>46ժ. դաս.,14ժ.գործն.** | **60 ժամ ինքնուրույն, արտալսարանային** | | |
| **Ուսուցման ձևը՝ առկա** | | | |

**Դասընթացի նպատակն է**

- սովորողներին ներկայացնել կրթական տեխնոլոգիաների դերակատարությունը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման գործում, ձևավորել պատկերացումներ ժամանակակից դիդակտիկայի խնդիրների վերաբերյալ, խորացնել գիտելիքները ժամանակակից ուսուցման, կրթական տեխնոլոգիաների վերաբերյալ,
- ներկայացնել աշխարհում և Հայաստանում կրթական-տեխնոլոգիական բարեփոխումների ուղղությունը և ընթացքը, ինչպես նաև հումանիստական-անձնակողմնորոշիչ կրթական տեխնոլոգիաների ներդրման կարևորությունը:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- սահմանել «կրթական տեխնոլոգիայ»հասկացությունը,
- վերարտադրել կրթական տեխնոլոգիաների տեսակներն ու դասակարգումները, բաղկացուցիչ տարրերը ու հիմնական

գործառույթները,

- ներկայացնել կրթական տեխնոլոգիայի հորիզոնական և ուղղահայաց կառուցվածքների առանձնահատկությունները

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- համադրել և հակադրել ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաները,
- գնահատել նորարարական տեխնոլոգիաների կարևորությունը անձնակողմնորոշիչ հարացույցի պայմաններում,
- կիրառել ժամանակակից նորարական կրթական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացքում,
- փաստարկել կրթական և հաղորդակցական-տեղեկատվական տեխնոլոգիաների փոխազդեցությունները՝ հանուն արդյունավետ կրթության,

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- համակարգել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են ուսումնական հաստատություններում կրթական տեխնոլոգիաների արդյունավետության գնահատման ու վերլուծման համար,
- արժևորել ուսումնասիրության այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են սույն դասընթացի շրջանակներում վերջնական զեկույց պատրաստելու համար :

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը.**

- *Դասախոսություն՝ շարժասահիկներով*
- *գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:*

| |
|---|
| **Գնահատման մեթոդները և չափանիշները.**<br>• *Բանավոր հարցում,*<br>• *Ուսումնական նախագծերի ներկայացում,*<br>• *Ռեֆերատներ, էսսեներ* |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>• «Կրթական տեխնոլոգիա» հասկացությունը. դասակարգումն ու տիպաբանությունը:<br>• Կրթական ավանդական տեխնոլոգիաներ:<br>• Կրթական նորագույն-ժամանակակից տեխնոլոգիաներ:<br>• Կրթության կառավարման տեխնոլոգիաներ:<br>• Ուսուցման արդյունավետության և կրթական արդյունքների գնահատման տեխնոլոգիաներ |
| **Հիմնական գրականության ցանկ**<br>1. Պետրոսյան Հ.Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ: Եր, 2012:<br>2. Պետրոսյան Հ.Հ., Ուսումնական ժամանակակից տեխնոլոգիաներ: Ուս. ձեռնարկ: Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, Եր., 2008:<br>3. Колеченко А.К. Энциклопедия педагогических технологий: Пособие для преподавателей. СПб.: КАРО, 2005.<br>4. Ксензова Г.Ю. Перспективные школьные технологии: Учебно-методическое пособие. М.: Педагогическое общество России, 2001.<br>5. Кукушина В.С. Современные педагогические технологий. Начальная школа. Пособие для учителей. Ростов н/Д: Изд. “Феникс”, 2003. |

6. Щуркова Н.Е. Педагогическая технология. 2-е допол. изд. М.: Пед. общество России, 2005.

«ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

*/4կրդ.-120ժ., 60ժ.լս., որից 46ժ.դաս., 14ժ.գործն., 60ինքն. և արտալս./*

**Թեմա 1. Մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը: Մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրիչներն ու դրանց դասակարգումը: Ավանդական ուսուցման տեխնոլոգիաներ: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաներ (10 ժամ):**

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, Դասերի պլանավորում):

**Թեմա 2. Զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներ: Նախագծային ուսուցման տեխնոլոգիաներ (12ժ)**

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, դասի պլանավորում):

**Թեմա 3. Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիաներ: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիաներ: Բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսուցման տեխնոլոգիաներ: Ուսուցման հեռավար տեխնոլոգիաներ (12ժ)**

**Գործնական աշխատանք** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, դասի պլանավորում):

**Թեմա 4. Մտածողությունը խթանող ռազմավարությունները: Ինչպես  ձևավորել ինքնուրույն սովորող: Ընկալման և յուրացման տեխնոլոգիաներ՝ Զուգադրության գրաֆիկական կազմակերպիչ, Կանխատեսման ուղեցույց, Նախկին գիտելիքներն ակտիվացնող մտագրոհ, ԹՏԳԻ, Թվարկել-խմբավորել-որակել, Հաջորդական այբբենական կլոր սեղան, Շրջագայություններ՝ գրքի բաժիններով, Հասկացության/սահմանման քարտեզագրում, Հարց-պատասխան փոխադարձ կապը (12ժ)**

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, դասի պլանավորում):

**Թեմա 5. Ընկալման և յուրացման տեխնոլոգիաներ՝ Ֆրայերի մոդելը, Ուսուցում՝ երևակայական մտապատկերների միջոցով, Պատմական փոփոխությունների շրջանը, Պատմական հիշողության  օղակներ, Հետազոտության աղյուսակներ, Փոխներգործուն ընթերցանության ուղեցույց , Խճանկար առաջադրանք, ԳՈՒՍ (Գիտեմ - Ուզում եմ սովորել - Սովորել եմ), Թռուցիկ գրառումներ (12ժ)**

<u>**Գործնական աշխատանք**</u> (Նախնական գնահատում: Ընթացիկ գնահատում: Ամփոփիչ գնահատում):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2ժ)**

*«Կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ» դասընթացի թեմատիկ պլան*

| Հ Հ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| | **Մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը: Մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրիչներն ու դրանց դասակարգումը**<br>**Ավանդական ուսուցման տեխնոլոգիաներ: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաներ**<br>**Գործնական աշխատանք՝**<br>Մշակել դասի պլան | 10 | 8 | **2** | ▪ Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել մանկավարժության արդի տեխնոլոգիաներին, ավանդական և ժամանակակաից տեխնոլոգիաների հարաբերակցությանը | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br>**Կիմանան՝**<br>▪ մանկավարժական արդի տեխնոլոգիաների բնութագրերը և դրանց դասակարգման սկզբունքները<br>**Կկարողանան՝**<br>▪ Մեկնաբանել մանկավարժական արդի տեխնոլոգիաների | *. ppt ներկայացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կիրառելով տվյալ տեխնոլոգիաները: | | | | | առավելությունները<br>**Կտիրապետեն՝**<br>▪ Ուսուցման արդի և ավանդական տեխնոլոգիաների զուգահեռ կիրառման հնարներին: | |
| | **Զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներ:**<br>**Նախագծային ուսուցման տեխնոլոգիաներ**<br><br>**Գործնական աշխատանք՝**<br>SWOT նշված տեխնոլոգիաներով դասերի վերաբերյալ | 12 | 10 | **2** | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել զարգացնող և նախագծային ուսուցման տեխնոռլգիաների կիրառման առանձնահատկություններին | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>**Կիմանան՝**<br>▪ Նախագծային ուսուցման տեխնոլոգիական առանձնահատկությունները<br>**Կկարողանան՝**<br>▪ Իրականացնել նախագծային ուսուցում<br>**Կտիրապետեն՝** | *. ppt ներկայացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Զարգացնող ուսուցման տեխնոլոգիաների կիրառման հնարներին: | |
| | **Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիաներ: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիաներ: Բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսուցման տեխնոլոգիաներ: Ուսուցման հեռավար տեխնոլոգիաներ**<br><br>**Գործնական աշխատանք՝** | 12 | 10 | **2** | Թեմայի ուսումնասիրության նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել ուսուցման ծրագրավորված. համագործակցային, քննադատական մտածողության զարգացման և այլ տեխնոլոգիաներին: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br>**Կիմանան՝**<br>Ուսուցման ծրագրավորված, համագործակցային, բազմաբնույթ մտածողության զարգացման տեխնոլոգիաներին<br>**Կկարողանան՝**<br>մշակել դասընթաց՝ կիրառելով մոդուլային և այլ տեխնոլոգիաները | *. ppt ներկայացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ▪ Մշակել որևէ առարկայից դասարանային և արտադասարանական աշխատանքների օրինակներ՝ կիրառելով նշված տեխնոլոգիաները | | | | | **Կտիրապետեն՝** Նորարարա դասի մշակման արդի ռազմավարություններին | |
| | **Մտածողությունը խթանող ռազմավարությունները: Ինչպես ձևավորել ինքնուրույն սովորող: Ընկալման և յուրացման տեխնոլոգիաներ՝ Զուգադրության գրաֆիկական կազմակերպիչ, Կանխատեսման ուղեցույց, Նախկին գիտելիքներն ակտիվացնող մտագրոհ, ԹՏԳԻ, Թվարկել-խմբավորել-որակել,** | 12 | 9 | 3 | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել կառուցողական մանկավարժության արդի ռազմավարություններին | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները **Կիմանան՝** ▪ Ինչպես մշակել ժամանակակից դաս **Կկարողանան՝** ▪ Իրականացնել արդի դասեր՝ կիրառելով նշված տեխնոլոգիաները **Կտիրապետեն՝** ▪ Կառուցողական մանկավարժության արդի | *. ppt ներկայացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Հաջորդական այբբենական կլոր սեղան, Շրջագայություններ՝ գրքի բաժիններով, Հասկացության/սահմանման քարտեզագրում, Հարց-պատասխան փոխադարձ կապը**<br>**Գործնական աշխատանք՝**<br>▪ Մշակել, տվյալ ռազմավարություններով դասերի օրինակներ։ | | | | | ռազմավարություններին | |
| | **Ընկալման և յուրացման տեխնոլոգիաներ՝ Ֆրայերի մոդելը, Ուսուցում՝ երևակայական մտապատկերների միջոցով, Պատմական փոփոխությունների շրջանը,** | 12 | 9 | | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել կառուցողական մանկավարժության արդի ռազմավարություններին | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները<br>**Կիմանան՝**<br>▪ Ինչպես մշակել ժամանակակից դաս | *. ppt ներկայացում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Պատմական հիշողության օղակներ, Հետազոտության աղյուսակներ, Փոխներգործուն ընթերցանության ուղեցույց , Խճանկար առաջադրանք, ԳՈՒՍ (Գիտեմ - Ուզում եմ սովորել - Սովորել եմ), Թռուցիկ գրառումներ**<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Մշակել, տվյալ ռազմավարություններով դասերի օրինակներ: | | | | | **Կկարողանան՝**<br><br>▪ Իրականացնել արդի դասեր՝ կիրառելով նշված տեխնոլոգիաները<br>**Կտիրապետեն՝**<br><br>▪ Կառուցողական մանկավարժության արդի ռազմավարություններին | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | 46 | 14 | | | |

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| **3.** | Հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է .**

- սովորողներին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկային, նրա առանձնահատկություններին,
- Ներկայացնել դասավանդման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում:

***Դասընթացի կրթական վերջնարդյունքները.***

***Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝***

***Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն***

- *սահմանել հայոց լեզվի և գրականության ուսուցման հիմնական մեթոդները,*
- *մեկնաբանել հայոց լեզվի և գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,*
- *վերլուծել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները հայոց լեզու և գրականություն դասավանդելիս,*

- *մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում:*

***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ***

- *համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները լեզվի և գրականության ուսումնառության գործընթացում,*
- *որոշել հայոց լեզվի և գրականության ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ եղանակները,*
- *գործնականում կազմել կամ ընտրել հայոց լեզվի և գրականության ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ,*
- *գնահատել սովորողների գիտելիքները հայոց լեզվից և գրականությունից՝ ընտրելով համապատասխան մեթոդներ, միջոցներ ու չափանիշներ:*

**Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները**.

- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել լեզվի և գրականության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում,
- հայոց լեզվի և գրականության ժամանակակից մեթոդների միջոցով զարգացնել և հարստացնել դասավանդող ուսուցչի դասավանդման գործիքակազմը,
- Ստեղծագործաբար կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- *դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,*
- *գործնական առաջադրանքներ,*
- *քննարկումներ և երկխոսություններ:*

**Գնահատման մեթոդները և միջոցները.**

- Բանավոր հարցում,
- Գործնական աշխատանքներ,
- Ռեֆերատներ:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**

- Ներառարկայական կապեր. կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին:
- Միջառարկայական կապեր.կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին:
- Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին :
- Խճանկար. կիրառման սկզբունքները գրականության դասավանդման գործընթացում:
- Գրական դատ, ԽԻԿ, ԳՈՒՍ մեթոդների կիրառման առանձնահատկությունները գրականության դասավանդման գործընթացում:
- Վենի դիագրամ,Վեբ-որոնում ուսուցման մեթոդների առանձնահատկությունները գրողների կենսագրության կամ գրական կերպարի ուսուցման գործընթացում:

- Հեղինակի աթոռ, մանրապատում մեթոդների կիրառման առանձնահատկությունները գրականության դասավանդման գործընթացում:
- Աշակերտի բանավոր խոսքի, պատկերավոր մտածողության զարգացման ուղիները հայոց լեվի և գրականության ուսուցման գործընթացում:
- Ուսանողների կողմից դասի վարում՝ տեսական գիտելիքների կիրառմամբ:
- Հայոց լեզվի ուսուցման մեթոդները, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը:
- Աշակերտի դատողական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և գրականության դասերի ընթացքում:
- Աշակերտի խոսքի զարգացումը /բառապաշարի հարստացում, բանավոր խոսքի զարգացում/ գրականության դասերի ընթացքում:
- Հնչյունաբանության ուսուցումը:
- Բառագիտության ուսուցումը:
- Ձևաբանության ուսուցումը:
- Շարահյուսության ուսուցումը
- Ոճագիտական իրողությունների ուսուցումը:
- Գործնական գրությունների առանձնահատկությունների ուսուցումը:

**Գրականության ցանկ.**


1. Արզումանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդներ,ձևեր,Երևան, 2020թ.:
2. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, «Այրեքս» 2004թ.:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
4. ¸áÉáõË³ÝÛ³Ý ²., Ð³Û ·ñ³Ï³ÝáõÃÛ³Ý ¹³ë³í³Ý¹Ù³Ý Ù»Ãá¹ÇÏ³, ºñ¨³Ý, 2006:
5. Կիրակոսյան Գ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա /ուսումնական ձեռնարկ/, Երևան, ՀԱԱՀ, 2015:

6. Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականություն/Մեթոդական ձեռնարկ/,Եր. 2012թ.:
7. Սողանյան Ն., Խաչատրյան Հ. , Գրականություն (Մեթոդական ձեռնարկ),Եր., 2012:
8. Ուսուցման արդյունավետ հնարներ,Ս.Խաչատրյան, Ֆ. Էբերտ հիմնադրամ,Հայաստան, 2020թ.:

***Թեմա 1.Ներառարկայական կապեր. կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին(2 ժամ):***

*Մասնավոր և ընդհանրացված ունակությունների ձևավորում: Ներառարկայական նյութի ընտրություն և կառուցվածքը: Ներառարկայական կապերի դերը սովորողի մոտիվացիաների ձևավորման գործում:*

***Գործնական աշխատանք:*** *Ուսումնասիրել և դիտարկել ուսուցման դիդակտոգեն սկզբունքների դերը և նշանակությունը հայոց լեզվի և գրականության ներառարկայական կապերի ստեղծման գործընթացում:*

***Թեմա 2. Միջառարկայական կապեր.կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին(3 ժամ):***

*Միջառարկայական կապերի դերը օբյեկտի, երևույթների, գործողությունների ուսումնասիրության համատեքստում: Ինտեգրատիվ կրթական կատեգորիաներ: Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորում. ներառարկայական կապեր:*

***Գործնական աշխատանք:*** *Վերլուծել միջառարկայական կապերի կիրառման փորձը հայոց լեզվի և գրականության դասերին:*

***Թեմա 3.Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասերին(3 ժամ):***

*Համագործակցային ուսուցման հիմունքերը: Համագործակցային ուսուցման սկզբունքներն ու մեթոդները: Համագործակցային ուսուցման կազմակերպման ռազմավարությունների առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասագործընթացներում:*

***Գործնական աշխատանք:*** *Ներկայացնել համագործակցային ուսուցման դրական կողմերը: Դիտարկել համագործակցային*

*ուսուցում կազմակերպելու դժվարությունները: Բացահայտել հայոց լեզվի և գրականության դասերին համագործակցային ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները:*

***Թեմա 4.Խճանկար.կիրառման սկզբունքները գրականության դասավանդման գործընթացում(3 ժամ):***

*Առաջադրված նյութի ուսուցման առանձնահատկությունը <<Խճանկար>> մեթոդով: Խմբային ռազմավարություն, խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունը Խճանկար մեթոդով: Նյութը ամբողջացնելու, տեղեկատվությունը ամփոփելու խմբային կարողությունների ձևավորում: Խճանկարի տեսակները: Խճանկարի փուլերը, կազմակերպման առանձնահատկությունները:*

***<u>Գործնական աշխատանք:</u>***

*Խճանկար մեթոդով աշխատելու ռազմավարությունների մշակում/Հովհ. Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմի ուսուցման օրինակով/:*

***Թեմա 5. Գրական դատ, ԽԻԿ, ԳՈՒՍ մեթոդների կիրառման առանձնահատկությունները գրականության դասավանդման գործընթացում (3 ժամ):***

*Համագործակցային մեթոդների համադրման հնարավորությունը գրականության դասագործընթացում: Խիկ համակարգի կառուցվածքը: Գրական դատ մեթոդի կիրառման նշանակությունը գրական ստեղծագործությունների քննարկման, հեղինակների կենսագրության և գեղարվեստական գործերի միջև եղած կապի տեսանկյունից: ԳՈՒՍ մեթոդի կառուցվածքը և կիրառման նշանակությունը:*

***<u>Գործնական աշխատանք:</u>*** *Դուրս բերել Գրական դատ, ԽԻԿ, ԳՈՒՍ մեթոդների կիրառման համար թեմաներ և մեկնաբանել այդ մեթոդներով տվյալ թեմայով դասերի իրականացման արդյունավետությունը /Ավ. Իսահակյանի <<Աբու Լալա-Մահարի>> պոեմի օրինակով/:*

***Թեմա 6.Վենի դիագրամ, Վեբ-որոնում ուսուցման մեթոդների առանձնահատկությունները գրողների կենսագրության և գրական կերպարի ուսուցման գործընթացում(3 ժամ):***

*Վենի դիագրամի կառուցվածքը: Գիտելիքների կարգավորիչները. համեմատություն: Վեբ-որոնման դերը մեդիաուսուցման կազմակերպման գործում: Մեթոդի կիրառման դժվարությունները:*

***Գործնական աշխատանք:*** *Դուրս բերել Վենի դիագրամի, Վեբ-որոնման մեթոդների կիրառման առանձնահատկությունները գծապատկերներով /Դ. Դեմիրճյանի <<Վարդանանքը>> վեպի օրինակով/ :*

***Թեմա 7. Հեղինակի աթոռ, մանրապատում մեթոդների կիրառման առանձնահատկությունները գրականության դասավանդման գործընթացում(4 ժամ):***

*Տեղեկատվության մշակման և վերլուծման գործընթացը <<Հեղինակի աթոռ>>, <<Մանրապատում>> մեթոդների կիրառության դեպքում: Դրական փոխկախվածությունն ու սոցիալական հմտությունների ձևավորումը մանրապատումներ մեթոդի կիրառման ժամանակ:*

***Գործնական աշխատանք:*** *Ներկայացնել Հեղինակի աթոռ և մանրապատում մեթոդների կիրառման նմանություններն ու տարբերությունները գրական կոնկրետ ստեղծագործությունների քննարկման միջոցով:*

***Թեմա 8.Աշակերտի բանավոր խոսքի, պատկերավոր մտածողության զարգացման ուղիները հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացներում(6 ժամ):***

*Բանավոր խոսքի, պատկերավոր մտածողության զարգացման չափանիշները տարբեր տարիքային խմբի սովորողների հետ աշխատանքում: Խոսքային մեթոդներ: Սովորողի պատկերավոր մտածողության, բանավոր խոսքի անհատական փորձառության ձևավորման մոդելավորումը:*

***Գործնական աշխատանք:*** *Բանավոր խոսքի զարգացման մեթոդների կիրառական առանձնահատկությունների մեկնաբանությունը սահիկաշարերով:*

***Թեմա 9.Ուսանողների կողմից դասի վարում՝ տեսական գիտելիքների կիրառմամբ(3 ժամ):***

*Ուսանողակենտրոն ուսուցման չափորոշիչներ: Սովորողի դերի փոփոխման մեխանիզմները:*

***Գործնական աշխատանք:*** *Պատրաստել ձևանմուշ սովորողի կողմից դասի վարման նախապատրաստման, գնահատման համար:*

***Թեմա 10. Հայոց լեզվի ուսուցման մեթոդները, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը(2 ժամ):***

*Խոսքային հմտությունների զարգամաn մեթոդները: Խոսելու, լսելու, գրելու, կարդալու հմտությունների զարգացման առանձնահատկությունները: Հայոց լեզվի ուսուցման գործընթացի կազմակերպման միջոցները:*

***<u>Գործնական աշխատանք:</u>*** *Դասակարգել խոսքային մեթոդներն ըստ հայոց լեզվի չորս հմտությունների համաչափ զարգաման արդյունավետության :*

***Թեմա 11. Աշակերտի դատողական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում(2 ժամ):***

*Քննադատական մտածողություն: Գիտելիքների կառուցողականության մոդելները: Տրամաբանական մտածողության, ինքնուրույնության և ստեղծագործական, դատողական կարողություններ սովորողի մոտ զարգացնելու, հաղորդակցման կարողությունների ձևավորման մեթոդներ:*

<tr><td>Դասընթացի անվանումը</td><td>Պատմության դասավանդման մեթոդիկա</td><td>4 կրեդիտ</td><td>120ժամ</td></tr>
<tr><td colspan="2">60ժամ լսարանային, որից՝ 20ժ- դաս- 40ժ - գործն- ,</td><td colspan="2">60 ժամ ինքնուրույն և արտալսարանային</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցման ձևը՝ առկա</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="4">1. Դասընթացի նպատակն է<br>• սովորողներին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում պատմության դասավանդման մեթոդիկային, նրա առանձնահատկություններին,<br>• կիրառել տարբեր ժամանակակից մեթոդներ, միջոցներ և տեխնոլոգիաներ պատմության դասավանդման գործընթացում:</td></tr>
<tr><td colspan="4">Դասընթացի կրթական վերջնարդյունքները-<br>Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝<br>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն<br>• լուսաբանել հանրակրթության համակարգում պատմության ուսուցման հիմնահարցերը, պատմության դասավանդման հիմնական ձևերն ու մեթոդները, մեթոդական հնարները,</td></tr>
</table>

- քննարկել պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի ժամանակակից ծրագրերն ու առաջարկները, պատմություն դասավանդողին ներկայացվող արդի պահանջները և պատմագիտության կերպափոխություններով պայմանավորված նոր մարտահրավերները,
- կարևորել պատմության դասավանդման գործընթացում հիմնական հասկացությունների ու պատմական երևույթների /ֆենոմեն/ բովանդակության մեկնության ու վերլուծության, պատմա-մշակութային գործընթացների պատճառահետևանքային կապերի վերհանման անհրաժեշտությունը,
- ներկայացնել դասավանդման գործընթացում պատմական անձ - ժողովրդական զանգված – ամբոխ հարաբերակցության մեթոդական մշակումը,
- ներկայացնել պատմության պարբերացման, դրա ընկալման կարևորությունը պատմության դասավանդման գործընթացում, քննության ենթարկել պատմական ժամանակի չափույթները,
- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները պատմության դասավանդման գործընթացում,
- լուսաբանել պատմության դասավանդման գործընթացում դաստիարակության հիմնախնդիրը,
- քննարկել Եվրակլիոյի կողմից առաջ քաշված պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման հնարավորությունը ՀՀ-ում:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

- համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները պատմության դասավանդման գործընթացում,
- որոշել պատմության ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ եղանակները,
- գործնականում կազմել կամ ընտրել պատմության ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, տեխնիկական

| |
|---|
| միջոցներ, թեստեր: |
| Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.<br>• դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել պատմության դասավանդման արդյունավետ մեթոդիկա,<br>• կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ պատմության ուսուցման գործընթացում,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները պատմության դասավանդման գործընթացում: |
| Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.<br>• դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ<br>• գործնական աշխատանքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ |
| Գնահատման մեթոդները և միջոցները.<br>• Բանավոր հարցում,<br>• Գործնական աշխատանքներ,<br>• Ռեֆերատներ |

| |
|---|
| Դասընթացը բաղկացած է հետևյալ  թեմաներից.<br>• Պատմության դասավանդման մեթոդիկան մանկավարժական գիտության բնագավառ: Պատմության ուսուցման հիմնահարցերը, պատմության դասավանդման հիմնական ձևերն ու մեթոդները, մեթոդական հնարները: Կրթության ավանդական և ժամանակակից մոդելները: Ինտերակտիվ / փոխներգործուն/ մեթոդների կիրառումը պատմության դասավանդման գործընթացում: Պատմության դասավանդման գործընթացում հիմնական հասկացությունների ու պատմական երևույթների /ֆենոմեն/ բովանդակության մեկնությունն ու վերլուծությունը:<br>• Նոր մարտահրավերներ պատմություն դասավանդողին. պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի ժամանակակից ծրագրերը, առաջարկներն ու արդի պահանջները:Պատմական գործընթացի վրա ներազդող կարևորագույն գործոնները և դրանց հետազոտման հիմնական /օբյեկտիվության, պատմականության, սոցիալական մոտեցման, համակողմանիության/ սկզբունքները:<br>• Համաշխարհային պատմության գիտական պարբերացման հիմնահարցը դասավանդման գործընթացում և ուսուցման համակարգում:<br>• Դաստիարակության /աշխարհայացքային, հայրենասիրական, աշխատանքային, գեղագիտական, հանդուրժողական/  հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում:<br>• Պատմության ուսուցման և դասավանդման հոգեբանական և գենդերային դիտանկյունները:<br>• Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը պատմության դասավանդման գործընթացում: |
| Գրականության ցանկ<br>• Ինչու՞, ինչպե՞ս, Գիրք պատմության ուսուցման, Ե., 2020: |

- <Հարավային Կովկասում պատմության դասավանդման և դասագրքերի պատրաստման խնդիրներ և հեռանկարներ>>: Մեթոդական ուղեցույց, Ե.,2014:
- Ղևոնդյան Հ., Ինչպես նախապատրաստել և անցկացնել պատմության դասը, Ե.,1989:
- Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Ե.,2001:
- Մարգարյան Հ., Դերային/ կերպարային/ ներկայացում մեթոդի կիրառումը դասի ընթացքում պատմական փաստերն ու իրադարձություններն ուսումնասիրելու և վերլուծելու համար, Ե., 2022:
- Պապոյան Հ.,Պատմության դասավանդման մեթոդիկա, Ե., 2014:
- <<Պատմություն, հասարակագիտություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր>>, Ե.,2009:
- <<Պատմության օժանդակ ձեռնարկ ավագ դպրոցի համար. Այլընտրանքային դասեր>>, Ե.,2014:
- Սերոբյան Ս., Ազգային պատմության դասավանդման խնդրի շուրջ, <<Հայագիտությունը դպրոցում>>, թիվ 1, Ե., 2007:
- Սերոբյան Ս.,Դաստիարակության հիմնախնդիրը պատմության դասավանդման մեջ,«Տարեգիրք ԵՊՀ պատմության ֆակուլտետ», Ե., 2010:
- Սերոբյան Ս., Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման խնդրի շուրջ, «Պատմություն և մշակույթ / հայագիտական հանդես/», Ե., 2015.
- Սերոբյան Ս., Նոր մարտահրավեր պատմություն դասավանդողին, <<Հայագիտությունը դպրոցում>>, թիվ 1, Ե., 2015:
- Սերոբյան Ս., Պատմության պարբերացման հիմնախնդիրը / բուհական դասախոսություն/, օգնություն ուսուցչին/, <<Հայագիտությունը դպրոցում>>, թիվ 4, Ե., 2015:

- Ստրադլինգ Ռ., Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, Ե., 2008:
- Քիսթ Ջ., Կրոնական բազմազանություն և միջմշակութային կրթություն, Ե., 2008:
- ,, Подготовка и опубликование новых учебников по истории для школ в европейских странах, проводящих демократические преобразования’’. Варшава. 1996.
- ,,Преподавание истории и пропаганда демократических ценностей и идеи терпимости’’, Страссбург, 1996.
- Пингл Фальк, Исследование,Страсбург, 1996.
- ,, Первоначальная местная подготовка преподавателей истории в европейских странах в период демократических преобразований’’, Львов, 1997.
- ,,Совет Европы и история в школе’’, Страсбург, 1997.
- Студеникин М.Т., Методика преподавания истории в школе,М., 2006.
- Студеникин М.Т.,Современные технологии преподавания истории в школе, М., 2007.


«Պատմության դասավանդման մեթոդիկա »Թեմատիկ պլան

Թեմա 1. Պատմության դասավանդման մեթոդիկան մանկավարժական գիտության բնագավառ: Դասընթացի խնդիրներն ու նպատակները: Պատմության ուսուցման հիմնահարցերը, պատմության դասավանդման հիմնական ձևերն ու մեթոդները, մեթոդական հնարները: (2ժամ)

Կրթությունը որպես ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց: Պատմության դասավանդման մեթոդիկան որպես մանկավարժական գիտության առանձին բնագավառ, որպես մասնավոր դիդակտիկա: Պատմության դասավանդումը դասավանդողի ստեղծագործական աշխատանք: Պատմության ուսուցման մեթոդներն

/խոսքի , զննականության , ինքնուրույն աշխատանքի, գործնական աշխատանքի/ ու մեթոդական հնարները որպես դասավանդող – սովորող փոխհարաբերությունում ներդաշնակության ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման միջոցներ: Զննականության երկու՝ անմիջական և միջնորդավորված տեսակները պատմության դասավանդման մեջ: Զննական պարագաները /քարտեզ, պատմական նկար, ծաղրանկար ,շարժ, դիագրամ, գրաֆիկ- սխեմա, ֆիլմ, գրատախտակ, գրական աղբյուր,պատմական և իրավական փաստաթուղթ և այլն /և դրանց օգտագործումը ուսուցման գործընթացում: Ուսուցման ժամանակակից ձևերը, տեխնոլոգիաները (պրոբլեմային, մոդուլային, նախագծային, հետազոտական, խաղային և այլն):Պատմության առարկայական ծրագրերի և թեմատիկ պլանների վերանայման գիտաքաղաքական և ճանաչողական պատճառները: Ծրագրերի, թեմատիկ պլանների, դասագրքերի փոխկապակցվածությունն ու ներդաշնակությունը: Պատմության դասը և նրա առանձնահատկությունները: Դասի կառուցվածքն ու ընթացքը դասավանդողի ստեղծագործական աշխատանքի ու արհեստավարժության դրսևորում:Դասի տիպերը; Դասի ուժեղ և թույլ , դրական և թերի կողմերի վերլուծության , քննարկման ու ճշգրտման անհրաժեշտությունը: Հարցերի և առաջադրանքների դերը պատմության ուսուցման ժամանակ: Տարբեր դասարաններին հատկացված դասաժամերը՝ տարիքային առանձնահատկություններին և կրթական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան::

<u>Գործնական աշխատանք</u>՝ - /4ժամ/(Գրաֆիկական կազմակերպիչների կիրառմամբ ներկայացնել պատմության դասավանդման մեթոդիկա դասընթացի խնդիրները, նպատակները, առարկան, նաև՝ դասի տիպերը: պատմության դասի պլանի կազմում)

Թեմա 2. Նոր մարտահրավերներ պատմություն դասավանդողին. պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի ժամանակակից ծրագրերը, առաջարկներն ու արդի պահանջները: (2ժամ)

Կրթության համընդհանրացումը և հումանիզացումը ՝ 21-րդ դարի մարտահրավեր: Պատմական նյութի դասավանդման առանձնահատկությունները. Պատմության ՝ իբրև մշակութային տեքստի, այսինքն իբրև մարդու արժեքաստեղծ գործունեության ընկալումը և դասավանդումը: Միջմշակութային հաղորդակցության և մշակութային փոխներգործության

ընկալումը պատմության ուսուցման գործընթացում: Դասավանդման ժամանակ միջառարկայական, ներառարկայական և ներդասընթացային կապերի հաստատումը: Եվրախորհրդի կողմից

պատմություն դասավանդողին ներկայացվող ժամանակակից պահանջները: Մասնագիտական պատշաճ մակարդակը,պատմության հիմնահարցերի խոր իմացությունը , դասավանդողի անձնական հմայքը, ճոխ և պատկերավոր լեզուն , նորարարությունը որպես դասավանդման լավագույն երաշխիքներ: Եվրախորհրդի կողմից պատմության դասագրքերին ներկայացվող ժամանակակից պահանջները:Դասագիրքը որպես պատմագիտության նվաճումների արտացոլում ,նրա բովանդակությունը՝ դասավանդման որակի երաշխիք:

<u>Գործնական աշխատանք</u>՝- /4ժամ/( (Կլոր սեղան-քննարկում «Դասագրքաստեղծման ժամանակակից գործընթացը» և «Դասավանդողի աշխատանքը պատմության դպրոցական դասագրքերով» թեմաներով):

Թեմա 3. Ազգային պատմություն դասավանդողին Եվրախորհրդի կողմից ներկայացվող պահանջները : (2 ժամ)

Ազգային պատմության դասավանդման առանձնահատուկ տեղը ժողովրդավարական անցումային գործընթացներում:Ազգային պատմության դասավանդումը իբրև ազգի միասնությունն ապահովող, նրա ապագան կանխորոշող կարևորագույն միջոց; Հայոց պատմության դասավանդումը համաշխարհային պատմության համատեքստում՝ պատմահամեմատական զուգահեռների անցկացմամբ: Ազգային և համաշխարհային պատմության ու մշակույթի հարաբերակցության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում:;Ազգային պատմության «սպիտակ և սև » էջերը, հակասական և ցավոտ հիմնախնդիրներն ու թեմաները վերհանելու և անկողմնակալ ու առարկայորեն լուսաբանելու անհրաժեշտությունը: Ազգային մեծամասնության պատմության համատեքստում ազգային փոքրամասնությունների պատմության ուսուցման կարևորությունը:Ազգային պատմության համատեքստում ժողովուրդների համակեցության և համամարդկային – հումանիստական գաղափարների քարոզչության անհրաժեշտությունը: «Ազգ, ազգայնականություն , ազգայնամոլություն, ազգային հպարտություն , ազգային սնապարծություն, ազգայնական անհատապաշտություն, ազգայնական եսապաշտություն» հասկացությունների մեկնության կարևորությունը պատմության դասավանդման գործընթացում:

<u>Գործնական աշխատանք</u>՝-/4ժամ/ («Գիտական բանավեճ» մեթոդով «Պատմական հիշողությունը և ազգային պատմության շարադրանքն ու դասավանդումը » թեմայի քննարկում:)

Թեմա 4. Կրթության ավանդական և ժամանակակից մոդելները: Ինտերակտիվ / փոխազդական/ մեթոդներիկիրառումը պատմության դասավանդման գործընթացում: Սկզբնաղբյուրներով աշխատանքը պատմության դասերին : (2ժամ)

Կրթության ավանդական /ուսուցչակենտրոն / և ժամանակակից / անձնակենտրոն/ մոդելների հիմնադրույթները:Դասավանդման գործընթացում գիտելիքների հաղորդումը, ստուգումը և գնահատումը որպես դասավանդողի մենաշնորհ իրավունք կրթության ավանդական մոդելում : Դասավանդման գործընթացում գիտելիքների հաղորդման, ստուգման և գնահատման փոխազդական մեթոդների կիրառումը ֆասիլիտատորի կողմից: Մանկավարժական տեխնոլոգիան որպես դասավանդողի և սովորողի մանկավարժական համատեղ գործունեության կազմակերպման և անցկացման մոդել: Փոխգործուն / ինտերակտիվ/ մեթոդների կիրառման հիմնական կանոնները: Փոխգործուն / ինտերակտիվ/ մեթոդների կիրառման առանձնահատկությունները պատմության դասերին : Փոխգործուն, խոսքի, զննականության և այլ մեթոդների համաժամանակյա կիրառումը պատմության դասավանդման գործընթացում: Սկզբնաղբյուրների և փաստաթղթերի ուսուցումը պատմության դասերին:Սկզբնաղբյուրների ընտրության չափանիշները, նրանցով աշխատանքի կազմակերպման և ներկայացման ձևերը:

Գործնական աշխատանք՝ -/4ժամ/«Սկզբնաղբյուրով աշխատանքի փուլերը պատմության դասերին» ցուցապաստառի ստեղծում:«Խճանկար» մեթոդի կիրառմամբ փոխազդական այլ մեթոդների ուսուցում:

Թեմա 5. Պատմության դասավանդման գործընթացում պատմական հիմնական հասկացությունների բովանդակության մեկնությունն ու վերլուծությունը: (2 ժամ)

Պատմական փաստերը և նրանց տիպաբանությունը: Փաստ – իրադարձություն, փաստ – երևույթ և փաստ գործընթաց:«Պատմական իրադարձություն, պատմական երևույթ, պատմական գործընթաց »հասկացությունների մեթոդական մշակումը պատմության դասավանդման մեջ: Պատմահամեմատական զուգահեռները դասավանդման գործընթացում. պատմաքննադատական, պատմահամեմատական, պատմատիպաբանական մեթոդները Գրաֆիկական կազմակերպիչներով /հասկացությունների համեմատության աղյուսակներ,Էմաձև, տեաձև աղյուսակ,Վենի տրամագիծ/ աշխատանքը հասկացությունների բովանդակության մեկնության ժամանակ:

<u>Գործնական աշխատանք</u>՝ -/4ժամ/(Ինքնուրույն աշխատանք գծագրական կազմակերպիչներով՝ պատմական հասկացությունների համեմատության նպատակով):

Թեմա 6. Պատմության դասերին պատմական գործընթացի վրա ներազդող կարևորագույն գործոնների հետազոտման հիմնական սկզբունքները: (2ժամ)

Դասավանդման գործընթացում պատմական փաստերի հետազոտման հիմնական՝ օբյեկտիվության, պատմականության, սոցիալական մոտեցման և համակողմանիության սկզբունքների կարևորումը: Պատմական գործընթացի և, մասնավորապես, մշակութային հաղորդակցության և փոխներգործության հիմնախնդիրների լուսաբանման ժամանակ անաչառության և անկողմնակալության սկզբունքի մշակումն ու կիրառումը:Պատմական երևույթների և իրադարձությունների պատճառահետևանքային կապերի վերհանումը պատմության դասերին: Դասը քաղաքականացնելու անթույլատրելիությունը: Համակողմանիության սկզբունքի կիրառման երկու՝ միմյանց փոխլրացնող, ոչ թե հակադիր քայլերը՝ վերլուծությունը/ անալիզ/ և համադրումը/ սինթեզ, / որպես պատմական գիտելիքի նոր մակարդակի ձևավորումն ապահովող միջոցներ:

Գործնական աշխատանք՝ /4ժամ/(Քննարկում «Մշակութային հաղորդակցության և փոխներգործության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում » թեմայով:):

Թեմա7. Պատմության դասավանդման գործընթացում պատմական անհատ - ժողովրդական զանգված – ամբոխ հարաբերակցության մեթոդական մշակումը: (2ժամ)

Պատմական անհատի տեղն ու դերը պատմական գործընթացում: Պատմական անհատը որպես մշակութային գործունեության օբյեկտ և սուբյեկտ:Պատմության դասերին պատմական անհատի գործունեության արժևորման ելակետային սկզբունքները: Պատմական անհատ- ժողովրդական զանգված հարաբերակցության մեթոդական մշակումը: «Ժողովրդական զանգված » և «էթնոս » եզրույթները պատմության դասավանդման գործընթացում: Պատմական ամբոխը և նրա դերակատարումը պատմական գործընթացներում:

Գործնական աշխատանք՝ /4ժամ/ (Բանավեճ – քննարկում ‹‹Պատմության շարժիչ ուժերը›› թեմայով:)

Թեմա 8. Համաշխարհային պատմության գիտական պարբերացման հիմնահարցը դասավանդման գործընթացում և ուսուցման համակարգում: (2 ժամ)

Պատմության պարբերացումը որպես պատմական ժամանակի ճշգրտում, վերաիմաստավորում,վերակառուցում: Պատմության կաուզատիվ և խրոնոգրաֆիկ շարադրանքը: Պատմության ժամանակային չափումները. լոկալ ժամանակ և ազգային պատմություն, գլոբալ ժամանակ և համաշխարհային / քաղաքակրթական / պատմություն, տոտալ ժամանակ և

ընդհանուր պատմություն։‹‹Հին աշխարհի պատմություն, միջին դարերի պատմություն, վաղ միջնադար, միջնադարի ծաղկման ժամանակաշրջան, միջնադարի աշուն, նոր ժամանակների շեմ, նոր և նորագույն

պատմություն, արդյունաբերական հասարակություն, հետարդյունաբերական հասարակություն›› հասկացություններիէությունը: Մշակույթ- քաղաքակրթություն

հարաբերակցության մեթոդական մշակումը:

Գործնական աշխատանք՝-/4ժամ/( (ժամանակագրության ուսուցման աղյուսակների կազմումը:)

Թեմա 9. Դաստիարակության /աշխարհայացքային, հայրենասիրական, աշխատանքային, գեղագիտական, գենդերային, հանդուրժողական/ հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում: (2 ժամ) Պատմության ուսուցման ընթացքում դաստիարակության մթնոլորտի ստեղծման կարևորությունը:Պատմության ուսուցման ընթացքում աշխարհայացքային տարբեր դրույթների յուրացումը, ազգայինի և համամարդկայինի ճիշտընկալումը որպես սովորողների աշխարհայացքային դաստիարակության գործոն: Հայրենասիրական

դաստիարակության հիմնախնդիրը:Աշխատանքային դաստիարակության հիմնախնդիրը: Ուսուցման գործընթացում մարդկության աշխատանքային գործունեության քաղաքակրթական արժևորումը: Պատմական կոնկրետ փաստերով , արտադասարանական աշխատանքներով սովորողների մոտ աշխատանքի նկատմամբ կոնկրետ վերաբերմունքի

ձևավորումը:Գեղագիտական դաստիարակության կարևորումը պատմության ուսուցման ընթացքում: Գեղեցիկի կատեգորիայի բովանդակությունը պատմության դասավանդման մեջ: Մշակույթի պատմության դասավանդումը որպես սովորողների գեղագիտական դաստիարակության միջոց: Անհատի և հասարակության հանդուրժողական գիտակցությունը որպես համակեցական ընդհանուր բարիք և արժեք: Հանդուրժողական դաստիարակության հիմնախնդրի լուծման ուղիները պատմության դասերին: ‹‹Հանդուրժողություն, այլատյացություն /քսենոֆոբիա/, ցեղակենտրոնություն /էթնոֆոբիա/, անհանդուրժողություն›› եզրույթների մեթոդական մշակումը:Մշակութային

բազմակերպության ընկալումը պատմության ուսուցման և դասավանդման գործընթացում: Գենդերային դաստիարակությունը որպես անհատի սոցիալականացման, քաղաքացիության ձևավորման, սոցիալական արդարության և էգալիտար մշակույթի ձևավորման կարևոր գործոն: Գենդերային հետազոտությունները պատմությանուսուցման ընթացքում;

Գործնական աշխատանք՝-/4ժամ/ (Կլոր – սեղան քննարկում ‹‹ Հանդուրժողական դաստիարակության հիմնախնդրի լուծման ուղիները պատմության դասերին ›› թեմայով:)

Թեմա 10. Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը պատմության դասավանդման գործընթացում:. (2ժամ) Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը որպես ուսուցման ավանդական և ժամանակակից մոդելների զուգակցման,աշխարհի մշակութային բազմակերպությունն ընկալելու, պատմական իրադարձությունը տարբեր տեսակետներից գնահատելու հնարավորություն: Եվրակլիոն բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման մասին: Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքը որպես այլընտրանք միամշակութային, էթնոկենտրոն պատմության դասավանդմանը:Պատմության ուսուցման ընթացքում ոչ միայն համընդհանուր ընդունելություն գտած, այլև վիճելի, մինչև վերջ չհամակարգված փաստերի ու տեսակետների ներկայացումը որպես սովորողների

բանավիճելու,մտավոր – հետազոտական կարողությունները և էմպատիայի հատկանիշը զարգացնելու և բազմակարծություն ձևավորելու միջոց:

Գործնական աշխատանք՝/2ժամ/ «Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման բարդություններն ու խոչընդոտները»թեմայով կլոր սեղան- քննարկում:

Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում (2ժամ)

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգում |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1. | Պատմության դասավանդման մեթոդիկան մանկավարժական | 6 | 2 | 4 | • ծանոթացնել հանրակրթական | Մասնակիցները հիմնական՝ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գիտության բնագավառ: Դասընթացի խնդիրներն ու նպատակները Պատմության ուսուցման հիմնահարցերը, պատմության դասավանդման հիմնական ձևերն ու մեթոդները, մեթոդական հնարները: Գործնական աշխատանք ՝ 1.Գրաֆիկական կազմակերպիչների կիրառմամբ ներկայացնել պատմության դասավանդման մեթոդիկա դասընթացի խնդիրները, նպատակները, առարկան, նաև՝ դասի տիպերը: 2.Պատմության դասի պլանի կազմում | | | | ուսումնական հաստատություններում պատմության դասավանդման մեթոդիկային, նրա՝ որպես մասնավոր դիդակտիկայի, ուսումնասիրության օբյեկտին և առարկային, խնդիրներին և նպատակներին, առանձնահատկությունների ն, .Զարգացնել ուսուցչի մասնագիտական հմտություններն ու կարողությունները: | •պատմության ուսուցման կազմակերպման տեխնոլոգիաները,հիմնական ձևերն ու մեթոդները •Պատմությանո դասավանդման հիմնաձևերի էությունը Մասնակիցները կկարողանան՝ •Համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունն երը պատմության դասավանդման գործընթացում, •չափորոշիչային պահանջներին համապատասխան կազմել կամ ընտրել ծրագրեր, թեմատիկ պլաններ, պատմության ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, միջոցներ: •.Կազմել դասի պլաններ •դասակարգել | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ուսուցման ժամանակակից մեթոդները և ընտրել պատմության դասավանդման արդյունավետ մեթոդիկա | |
| 2. | Նոր մարտահրավերներ պատմություն դասավանդողին. պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի ժամանակակից ծրագրերը, առաջարկներն ու արդի պահանջները:<br><br>Գործնական աշխատանք՝ Կլոր սեղան-քննարկում «Դասագրքաստեղծման ժամանակակից գործընթացը» և «Դասավանդողի աշխատանքը պատմության դպրոցական դասագրքերով» թեմաներով | 6 | 2 | 4 | • քննարկել պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի ժամանակակից ծրագրերն ու առաջարկները, պատմություն դասավանդողին ներկայացվող արդի պահանջները և պատմագիտության կերպափոխություններով պայմանավորված նոր մարտահրավերները, | Մասնակիցները կիմանան՝<br>●Եվրախորհրդի և Եվրակլիոյի կողմից դասագրքաստեղծման և պատմության դասավանդման արդի պահանջներն ու ծրագրերը<br>●<br>Մասնակիցները կկարողանան՝<br>●հիմնավորել 21-րդ դարում կրթության մարդասիրացման անհրաժեշտությունը<br>●Բացահայտել պատմական տեսական գիտելիքի և նրա կիրառական ասպեկտների միջև | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կապերը | |
| 3. | Ազգային պատմություն դասավանդողին Եվրախորհրդի կողմից ներկայացվող պահանջները : Գործնական աշխատանք՝ «Գիտական բանավեճ» մեթոդով «Պատմական հիշողությունը և ազգային պատմության շարադրանքն ու դասավանդումը » թեմայի քննարկում: | 6 | 2 | 4 | . լուսաբանել ազգային պատմության դասավանդման առանձնահատուկ տեղը ժողովրդավարական անցումային գործընթացներում<br>. քննարկել ազգային և համաշխարհային պատմության ու մշակույթի հարաբերակցության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում | Մասնակիցները կիմանան՝<br>• Ազգային պատմության «սպիտակ և սև » էջերը, հակասական և ցավոտ հիմնախնդիրներն ու թեմաները վերհանելու և անկողմնակալ ու առարկայորեն լուսաբանելու անհրաժեշտությունը<br>• Պատմության նյութը ինչպես ծառայեցնել սովորողների ազգային և քաղաքացիական գիտակցության ձևավորմանը.<br>Մասնակիցները կկարողանան՝ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | •Ստեղծել փոխադարձ հարգանքի և ըմբռնման, արդարության, ներառականության ու հավասարության սկզբունքների վրա հիմնված արդյունավետ կրթական միջավայր.<br>•համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները ազգային և համաշխարհային պատմության դասավանդման գործընթացում<br>• | |
| 4. | Կրթության ավանդական և ժամանակակից մոդելները: Ինտերակտիվ /փոխներգործուն/ մեթոդների կիրառումը պատմության դասավանդման գործընթացում: Սկզբնաղբյուրներով աշխատանքը պատմության դասերին | 6 | 2 | 4 | .քննարկել կրթության ուսուցչակենտրոն և անձնակենտրոն մոդելների հիմնադրույթները:<br>.լուսաբանել փոխգործուն մեթոդների կիրառման հիմնական կանոնները<br>.վերլուծել պատմության ուսուցման գործընթացում սկզբնաղբյուրով | Մասնակիցները կիմանան՝<br>• կրթական ժամանակակից տեխնոլոգիաները պատմության դասավանդման գործընթացում<br>• .սովորողների հետազոտական | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Գործնական աշխատանք՝ «Սկզբնաղբյուրով աշխատանքի փուլերը պատմության դասերին» ցուցապաստառի ստեղծում:«Խճանկար» մեթոդի կիրառմամբ փոխազդական այլ մեթոդների ուսուցում: | | | | աշխատանքի փուլերը: | գործունեության կազմակերպման սկզբունքները<br>● համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները պատմության դասավանդման գործընթացում տեքստային աշխատանքի կազմակերպման. սկզբունքները, եղանակները.<br>●. Մասնակիցները կկարողանան՝<br>·համեմատել ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները պատմության դասավանդման | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | գործընթացում<br>•կազմակերպել և ղեկավարել սովորողների որոնողական-հետազոտական գործունեությունը.<br>•տեքստային աշխատանքը դարձնել սովորողների խոսքի զարգացման միջոց.<br>•որոշել պատմության ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ եղանակները | |
| 5. | Պատմության դասավանդման գործընթացում պատմական հիմնական հասկացությունների բովանդակության մեկնությունն ու վերլուծությունը:<br><br>Գործնական աշխատանք՝<br>Ինքնուրույն աշխատանք գծագրական կազմակերպիչներով՝ պատմական հասկացությունների | 6 | 2 | 4 | . քննարկել պատմական փաստերի տիպաբանությունը,<br>.վերլուծել «փաստ-իրադարձություն , փաստ – երևույթ, փաստ – գործընթաց» հասկացությունները,<br>. հիմնավորել դասավանդման գործընթացում պատմական | Մասնակիցները կիմանան՝<br>• պատմական ինֆորմացիան ներկայացնելու տարբեր մեթոդները<br>• Սահմանել փաստ-իրադարձություն , փաստ –երևույթ, փաստ – | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | համեմատության նպատակով: | | | | հասկացությունների բովանդակության մեկնության անհրաժեշտությունը | գործընթաց «քաղաքակրթություն», «ինքնություն», պատմական ժառանգություն» եզրույթները<br>●<br>Մասնակիցները կկարողանան՝<br>●Ներկայացնել և համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը,<br>●<br>●հետևություններ անել հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնել արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հետ | |
| 6. | Պատմության դասերին պատմական գործընթացի վրա ներազդող կարևորագույն գործոնների հետազոտման հիմնական սկզբունքները:<br><br>Գործնական աշխատանք՝ Քննարկում «Մշակութային հաղորդակցության և փոխներգործության հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում » թեմայով | 6 | 2 | 4 | . կարևորել դասավանդման գործընթացում պատմական փաստերի հետազոտման հիմնական՝ օբյեկտիվության, պատմականության, սոցիալական մոտեցման և համակողմանիության սկզբունքների կիրառումը,<br>. հիմնավորել պատմական գործընթացի և, մասնավորապես, մշակութային հաղորդակցության և փոխներգործության հիմնախնդիրների լուսաբանման ժամանակ անաչառության և անկողմնակալության սկզբունքի մշակումն ու կիրառումը,<br>.վերլուծել պատմության դասը քաղաքականացնելու անթույլատրելիությունը | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 7. Պատմության դասավանդման գործընթացում պատմական անհատ - ժողովրդական զանգված – ամբոխ հարաբերակցության մեթոդական մշակումը<br><br>Գործնական աշխատանք՝<br>Բանավեճ – քննարկում «Պատմության շարժիչ ուժերը» թեմայով | 6 | 2 | 4 | •քննարկել պատմության շարժիչ ուժերի հիմնահարցը<br>,<br>. ներկայացնել պատմության դասերին պատմական անհատի գործունեության | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | արժևորման ելակետային սկզբունքները: | | |
| | .8. Համաշխարհային պատմության գիտական պարբերացման հիմնահարցը դասավանդման գործընթացում և ուսուցման համակարգում:<br><br>Գործնական աշխատանք՝ ժամանակագրության ուսուցման | 6 | 2 | 4 | ներկայացնել պատմության | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | աղյուսակների կազմում;<br><br>9. Դաստիարակության /աշխարհայացքային, հայրենասիրական, աշխատանքային, գեղագիտական, գենդերային, հանդուրժողական/ հիմնախնդիրը պատմության դասավանդման գործընթացում:<br><br>Գործնական աշխատանք՝<br>Կլոր – սեղան քննարկում « Հանդուրժողական դաստիարակության հիմնախնդրի լուծման ուղիները | 6 | 2 | 4 | պարբերացման, դրա ընկալման կարևորությունը պատմության դասավանդման գործընթացում,<br>. քննության ենթարկել պատմական ժամանակի չափույթները, | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | թեմայով:)<br><br>10 Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառումը պատմության դասավանդման գործընթացում<br><br>Գործնական աշխատանք՝<br><br>Բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի կիրառման բարդություններն ու խոչընդոտները;- քննարկում<br><br>Դասընթացի ամփոփում<br><br>Ընդամենը՝ | 4<br><br>2<br>60 | 2<br><br>20 | 2<br><br>2<br>40 | . քննարկել և հիմնավորել պատմության ուսուցման ընթացքում դաստիարակության մթնոլորտի ստեղծման կարևորությունը, ,բացահայտել պատմության դասերին դաստիարակության հիմնախնդրի լուծման ուղիները, լուսաբանել բազմատեսանկյուն մոտեցման սկզբունքի էությունը, .հիմնավորել պատմության ուսուցման գործընթացում այդ սկզբունքի կիրառման նշանակությունը | | |

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Դասընթացի անվանումը | Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

Դասընթացի **նպատակն** է

- ծանոթացնել սովորողներին ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի հիմնական (ընդհանուր և մասնավոր) խնդիրների հետ,
- ներկայացնել ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի հիմունքները,
- հիմնավորել ժամանակակից սկզբունքները և ռազմավարությունները,
- ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,
- ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները**.

| |
|---|
| Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝<br><br>**Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.**<br><br>• ներկայացնել ռուսերենի  դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները և հիմնարար սկզբունքները,<br>• բացահայտել ռուսերենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները,<br>• հիմնավորել հաղորդակցական մեթոդների արդյունավետությունը:<br>**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**<br><br>• համեմատել ռուսերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետությունը ,<br>• տարբերակել ընկալողական և վերարտադրողական կարողությունները և հմտություններն ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների,<br>• ընտրել ուսումնական իրավիճակին համապատասխան առաջադրանքներ<br>• կազմել ընթացիկ և ավարտական ստուգման թեստեր ըստ մոդելի կամ ցուցանմուշի: |
| **Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները**.<br>• մեկնաբանել կրթական ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,<br>• դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել ռուսերենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները ռուսերենի դասավանդման գործընթացում,<br>• կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական |

թղթապանակներ,

- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,
- հաղորդակցվել օտար լեզվով:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ:
- բանավեճեր և դիալոգներ /ռուսերենով/
- թեմատիկ/ուսումնական/ ֆիլմերի դիտում և քննարկում:

**Գնահատման մեթոդները և միջոցները.**

- Բանավոր հարցում,
- Գործնական աշխատանքներ,
- Ռեֆերատներ,

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**

- Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի պատմութունը:
- Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները:

- Ռուսաց լեզվի մեթոդիկայի կապը լեզվաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության հետ,
- Ռուսաց լեզվի ծրագրի կառուցման բովանդակությունը և սկզբունքները միջին և բարձր դասարանների համար:
- Ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Լեզվաերկրագիտական և հաղորդակցական ասպեկտները:
- Խոսքի զարգացման մեթոդիկան, նրա հիմնական սկզբունքները, ավանդական և ինտերակտիվ ձևերը:
- Ռուսաց լեզվի դասերի կառուցվածքը և տեսակները:
- Ստուգման մեթոդները և ձևերը:
- Ռուսաց լեզվի ժամանակակից դասագրքերը:

**Գրականության ցանկ**


1. Багрянцева В. А. , Литневская Е. И. Методика преподавания русского языка в средней школе.- Москва: Академический проект, 2006.
2. Баранов М.Т., Ипполитова Н.А., Ладыженская Т.А., Львов М.Р. Методика преподавания русского языка в школе. Учебник для студ. высш. пед. учеб. заведений. — М.: Академия, 2001.
3. Метс Н.А. Лингвистическая основа описания русского языка в целях его преподавания как иностранного / Н.А. Метс. � М., ГИРЯП, 2003.
4. Чеснокова М.П. Методика преподавания русского как иностранного. – Москва: МАДИ, 2015.
5. Щукин А.Н. Методика преподавания русского как иностранного.Учебное пособие. – Москва: Флинта, 2018.

**Անհրաժեշտ այլ նյութեր**

6. Аракелян Н.К., Мелик-Мартиросян Дж.С., Самуэлян С.Б.,Эйрамджян А.А./Русский язык. Учебник для 5-го класса средней общеобразовательной школы. - Ереван, “Арег”, 1999 и переиздания.
7. Аракелян Н.К., Мелик-Мартиросян Дж.С., Самуэлян С.Б.,Эйрамджян А.А./Русский язык. Учебник для 6-го класса средней общеобразовательной школы. - Ереван, “Арег”, 1999 и переиздания.
8. Р.Р.Грдзелян, Р.Г.Рафаелян, Тер-Аракелян Р.А. Русский язык | Учебник для 8-го класса общеобразовательной школы Ереван, Макмиллан-Армения, 2008 и переиздания.
9. Р.Р.Грдзелян, Р.А.Тер-Аракелян, Р.Г.Рафаелян Русский язык | Учебник для 9-го класса общеобразовательной школы Ереван, Макмиллан-Армения, 2009 и переиздания.
10. И. Манучарян, Р.Р.Грдзелян, Н.А.Байбуртян, И.М.Мелик-Оганджанян, А.А.Читчян Русский язык Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար | Учебник, Ереван. Манмар, 2010 и переиздания.
11. Н.А.Байбуртян, Р.Р.Грдзелян, И.К.Манучарян, И.М.Мелик-Оганджанян, А.А.Читчян Русский язык 11 Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար | Ереван. Манмар, 2010 и переиздания

**Թեմատիկ պլան**

**Թեմա 1. Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները։ Ռուսաց լեզվի մեթոդիկայի կապը լեզվաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության հետ: (11 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական

վերլուծություն)։

Թեմա 2. Ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները։ Խոսքի զարգացման մեթոդիկան, նրա հիմնական սկզբունքները։ Ուղղախոսական նորմերի ուսուցանումը։ Հնչյունական հմտությունների ձևավորում։ Ռուսաց լեզվի բառապաշարի քերականական նյութի ընտրության սկզբունքները։ (12 ժամ)

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում)։

**Թեմա 3. Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը ռուսաց լեզվի դասերին և արտադասարանական աշխատանքներում՝ ըստ հանրակրթության աստիճանների և հոսքերի։ Ռուսաց լեզվի դասերի կառուցվածքը և տեսակները։ (11 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում)։

**Թեմա 4. Դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները։ (12 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում)։

**Թեմա 5. Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում։ (12 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (Նախնական գնահատում։ Ընթացիկ գնահատում։ Ամփոփիչ գնահատում)։

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում։ Առաջիկա աշխատանքների պլանավորում։ (2 ժամ)**

*«Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդի. | Տես. | Գործն. | | | |
| 1. | **Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: Ռուսաց լեզվի մեթոդիկայի կապը լեզվաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության հետ:**<br><br>▪ Հանրակրթական դպրոցի ռուսաց լեզու առարկայի ուսումնասիրման նպատակները, բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, ռուսաց լեզու առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարների հենքը:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br>▪ Տարբեր ժամանակահատվածների | 11 | 4 | 7 | Հումանիտար գիտելիքներով օժտված, ռուսաց լեզվի դասընթացի ուսումնասիրման չափորոշչահեն բովանդակությունն ըմբռնող, ռեֆլեքսիվ, վերլուծող, համադրող ուսուցչի/մասնագետի/ պատրաստումն է: | Թեմայի ուսումնասիրման ավարտին մասնակիցները.<br>. Կսահմանեն ռուսաց լեզվի ուսուցման նպատակն ու խնդիրները,<br>. կպլանավորեն ու կմշակեն ուսումնառության հաջորդականությունը,<br>. կկիրառեն տարատեսակ ուսումնական պաշարներ տարբեր ընդունակություններ ունեցող ունկնդիրների համար,<br>.կտիրապետեն ուսուցման տարատեսակ մեթոդների, հնարների,տեխնոլոգիաների: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | չափորոշիչների (նաև այլ երկրների) համեմատական, քննական և փոխզուգահեռադրման վերլուծություն: | | | | | | |
| 2. | **Ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Խոսքի զարգացման մեթոդիկան, նրա հիմնական սկզբունքները: Ուղղախոսական նորմերի ուսուցանումը: Հնչյունական հմտությունների ձևավորում: Ռուսաց լեզվի բառապաշարի քերականական նյութի ընտրության սկզբունքները:Օտար լեզվի ուսուցման մանկավարաժական տեխնոլոգիաները և մեթոդները:**<br><br>**«Ռուսաց լեզու՝ որպես օտար լեզու»** ուսումնական բնագավառի բովանդակությունը, նորույթները, հիմնական հասկացությունների /Հաղորդակցում, Ընթերցանություն/գրականություն, Լեզվական համակարգ, Ստեղծարություն, Ինքնություն /ու ենթահասկացությունների | 12 | 4 | 8 | Ուղղորդել ուսուցչի գործունեությունը դեպի պլանավորած արդյունքների հասանելիություն և իրականացում, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակություննե րի ձևավորում: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կնկարագրեն մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներ, ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդները,<br>▪ կկիրառեն մանկավարժական տեխնոլոգիաների Ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի առանձին թեմաների ուսուցման օրինակով,<br>▪ որոշ թեմաների ուսուցման օրինակով կդասակարգեն և ի տեղի կկիրառեն ուսուցման | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | բովանդակության կառուցման սկզբունքները, գաղափարների ու ենթագաղափարների ուսուցման/ուսումնասիրման չափորոշչահեն տեխնոլոգիաները.<br><br>▪ Ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումներ:<br>▪ Աշակերտների գործուն մասնակցությունն ուսուցման գործընթացում<br>▪ Մանկավարժական տեխնոլոգիաներ, դրանց նկարագրությունը և կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում:<br>▪ Ուսուցման մեթոդներ. դրանց նկարագրությունը և կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ուսուցման ավանդական և փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ:<br>▪ Ուսուցման ժամանակակից մեթոդների և հնարների կիրառությունը օտար լեզվի դասավանդման գործընթացում. օրինակներ, դրանց առանձնահատկությունների բացահայտում: | | | | | ավանդական, ակտիվ և փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների ընտրման հայտանիշները: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Գործնական աշխատանք՝**<br><br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | | | | | | |
| 3. | **Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը օտար լեզվի դասերին և արտադասարանական աշխատանքներում՝ ըստ հանրակրթության աստիճանների և հոսքերի:**<br><br>▪ Ռուսաց լեզվի դասաժամերին և արտադասարանական աշխատանքներում ուսուցչի և սովորողի գործունեության տեսակները նկարագրող գործունեության ձևերը:<br>▪ Ժամանակակից դասին ներկայացվող պահանջները: Ուսուցման կազմակերպման այլ ձևեր:<br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Թեմատիկ երկխոսության միջոցով մասնագիտական բառապաշարի հարստացում: | **11** | **4** | **7** | Ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասագործընթացում ուսուցչի և աշակերտի փոխգործունեության շրջանակներում մանկավարժական հաղորդակցման արդյունավետ ձևերի ներկայացումն է: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան զարգացնել սովորողի մտածողության տարբեր տեսակները (խոսքային-տրամաբանական, կոմբինատորային, հավանականական և այլն),<br>▪ կուղղորդեն սովորողին՝ ինքնուրույն աշխատանք կատարելու, մշտապես սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, կձևավորեն արժեքային համակարգ և դիրքորոշում,<br>▪ կպլանավորեն արտադասարանական | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող** | | | | | գործունեության մեթոդական վերլուծություն,<br>▪ կպլանավորեն և կիրականացնեն ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսումնական աշխատանքները,<br>▪ կվերլուծեն ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասի ժամանակակից մոտեցումները:<br><br>Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կիմանան առարկայական չափորոշիչները, դրանց ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը, առարկայական ծրագրերը, կառուցվածքը, ծրագրերի և առարկայական չափորոշիչների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | **դիդակտիկական պահանջները:**<br><br>*Գործնական աշխատանք*՝<br><br>Չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի տրամաբանական կառուցվածքը. չափորոշչաhեն կրթության կազմակերպումը հանրակրթական դպրոցի առարկայական դաշտում: | 12 | 4 | 8 | ▪ Ծանոթացնել ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշիչների եվ ծրագրերի մշակման հայեցակարգային դրույթներին, ներկայացնել դասագրքի, ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի որակական բնութագրիչները: | համապատասխանությու նը,<br>▪ կձևակերպեն չափորոշիչների վրա հիմնված կրթության իրականացման խնդիրները,<br>▪ կընտրեն և կհամադրեն առարկայի դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ և էլեկտրոնային ռեսուրսներ՝ ըստ դրանց ներկայացվող դիդակտիկական պահանջների,<br>▪ կկիրառեն թվային դասագրքեր, էլեկտրոնային և այլ ուսումնական ռեսուրսներ օտար լեզու դասաժամերին, կհարաբերեն, կհամադրեն և կհակադրեն գործող և այլընտրանքային դասագրքերի, ուսումնաօժանդակ նյութերի առանձնահատկություննե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ը: | |
| 5. | **Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը Օտար լեզվի ուսուցման գործընթացում:**<br><br>▪ Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը Օտար լեզուների ուսուցման գործընթացում:<br>▪ Գնահատում և արժևորում: Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները: Գնահատման տեսակները:<br><br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Թեստի կառուցման սկզբունքները: | 12 | 4 | 8 | Ներկայացնել արժևորումը/գնահատումը՝ որպես սովորողի ցուցաբերած արդյունքի կամ կատարողականի մասին արժեքային դատողությունների իրացման գործընթաց: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կիմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները,<br>▪ կարժևորեն գնահատման գործառույթը,<br>▪ կգիտակցեն սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կդասակարգեն ուսումնառական նպատակները ըստ առաջնահերթությունների,<br>▪ կընտրեն գնահատման մեթոդները՝ ի տեղի: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում | **2** | | **2** | | | Թեստային աշխատանք |
| Ընդամենը՝ | | 60 | **20** | 40 | | | |

## ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

## ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

<table>
<tr><td>Դասընթացի անվանում</td><td colspan="2">Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա</td><td>4 կրեդիտ</td></tr>
<tr><td colspan="2">60 ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն.,</td><td colspan="2">60 ժամ ինքնուրույն և արտալսարանային</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցման ձևը՝ առկա</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="4">Դասընթացի նպատակն է՝<ul><li>սովորողներին ծանոթացնել տեխնոլոգիայի դասավանդման արդի մեթոդներին ու միջոցներին</li><li>ձևավորել մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաները դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման գործընթացում</li></ul></td></tr>
<tr><td colspan="4">Դասընթացի կրթական վերջնարդյունքները<br><br>Դասընթացի ավարտին շրջանավարտն ունակ կլինի՝</td></tr>
</table>

Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

- *ձևակերպելու տեղեկատվական կրթության հիմնական չափորոշիչները, պահանջները, բնութագրելու մանկավարժի հիմնական գործառույթները, դասավանդման արդի տեխնոլոգիաներն ու մեթոդները, դրանց կիրառման ձևերը տեխնոլոգիայի ուսուցման գործընթացում*
- *քննարկելու երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.*

Բ. գործնական մասնագիտական կարողություններ

- *նախագծելու և իրականացնելու հանրակրթական դպրոցում տեխնոլոգիա առարկայի ուսուցման արդյունավետ դասագործընթաց՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները*
- *վերլուծելու, գնահատելու և առաջարկելու դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.*

Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

- *ստեղծել միջառարկայական կապեր դասավանդման գործընթացում,*
- *պահպանելու մանկավարժական - մասնագիտական էթիկայի նորմերը, վարքականոնները, պլանավորելու ուսուցման աշխատաժամանակը, փաստաթղթավորելու և կազմակերպելու ուսուցման գործընթացը*
- *կիրառել ստացած գիտելիքները առօրյայում:*

| |
|---|
| Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը.<br><br>• *Դասախոսություն՝ շարժասահիկներով*<br>• *գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:* |
| Գնահատման մեթոդները և չափանիշները.<br><br>• *Բանավոր հարցում,*<br>• *Ուսումնական նախագծերի ներկայացում,*<br>• *Ռեֆերատներ, էսսեներ* |
| Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.<br>Թեմա 1. Դասընթացի խնդիրներն ու նպատակները: Տեխնոլոգիայի դպրոցական դասընթացի ընդհանուր բնութագիրը: Տեխնոլոգիայի չափորոշիչն ու ծրագրերը և դրանց բովանդակության նորույթները:<br>Թեմա 2. Տեխնոլոգիայի ուսուցումը: Տեխնոլոգիայի ուսուցման առանձնահատկությունները 1-4 դասարաններում<br>Թեմա 3. Տեխնոլոգիայի ուսուցումը միջին դպրոցում (5-7-րդ դասարաններ): Տեխնոլոգիայի թեմատիկ պլանների, ուսումնական նյութերի ստեղծում<br><br>Թեմա 4. Սովորողների գնահատումը՝ որպես Տեխնոլոգիայի ուսուցման բարելավման միջոց:<br><br>Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում |
| Գրականության ցանկ.<br><br>• *«Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, հեղ.՝ Հովսեփյան Ս., Աղաջանյան* |

*Մ., Բարսեղյան Մ., Երևան, 2007 թ., 134 էջ:*

- *«Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012:*
- *Տեխնոլոգիա – 1 (աշխատանքային տետր), դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2019թ:*
- *Տեխնոլոգիա – 2, դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի համար / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2018թ:*
- *Տեխնոլոգիա – 3, դասագիրք հանրակրթական դպրոցի երրորդ դասարանի համար / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2019թ:*
- *Տեխնոլոգիա – 4, դասագիրք հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի համար / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2018թ:*
- *Տեխնոլոգիա (ուսուցչի ձեռնարկ) 1-4 դասարաններ / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2008թ:*
- *Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 5 – րդ դասարանի դասագիրք / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2019թ:*
- *Տեխնոլոգիա (ուսուցչի ձեռնարկ) 5 - 7 դասարաններ / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2014թ:*
- *Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 6- րդ դասարանի դասագիրք / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2015թ:*
- *Տեխնոլոգիա: Հանրակրթական դպրոցի 7- րդ դասարանի դասագիրք / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան – Եր. Տիգրան Մեծ. 2016թ:*
- *Պապիկյան Կ., Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա, 1-4 դդ., Երևան, հեղ. հրատ., 2019 թ., 160 էջ:*
- *Պապիկյան Կ., «Տեխնոլոգիա» առարկայի դասապլաններ, Երևան, «ՎՄՎՊրինտ» 2019:*
- *Պապիկյան Կ., Հայկական ասեղնագործություն, Երևան, «Զանգակ-97», 2002թ., 92 էջ:*
- *Պապիկյան Կ., Հայկական Կարպետներ և գորգեր, Երևան, «Զանգակ-97», 2009, 92 էջ:*
- *Փաշայան Ա., Կավե սալիկներից մինչև թուղթ, Երևան, Աստղիկ, 2007 թ., 95 էջ:*

- *Ներսիսյան Լ., Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք, Երևան, «Զանգակ-97» հր., 2004 թ., էջ 96:*
- *Թադևոսյան Ս., Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, հեղ. հրատ., 20017 թ., 135 էջ:*


## *«Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա»*

## *դասընթացի ծրագիր*

**Թեմա 1. Դասընթացի խնդիրներն ու նպատակները: Տեխնոլոգիայի դպրոցական դասընթացի ընդհանուր բնութագիրը: Տեխնոլոգիայի չափորոշիչն ու ծրագրերը և դրանց բովանդակության նորույթները: (13 ժամ)**

Տեխնոլոգիայի դասընթացի տեղն ու դերը հանրակրթության մեջ: «Տեխնոլոգիա» առարկայի դերը սովորողների աշխատանքային կրթության և դաստիարակության կարևորագույն միջոց: «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության ձևավորումը (չափորոշիչ,

ծրագիր) և բովանդակային բաղադրիչները:

**<u>Գործնական աշխատանք</u>**՝ (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Տեխնոլոգիայի ուսուցումը: Տեխնոլոգիայի ուսուցման առանձնահատկությունները 1-4 դասարաններում: ( 15 ժամ)**

1-4-րդ դասարաններում Տեխնոլոգիայի ուսուցման սկզբունքները: Ժամանակակից մեթոդներով դասընթացի կազմակերպումը: Գործնական և նախագծային աշխատանքների կազմակերպման և դասի թեմատիկ պլանավորման առանձնահատկությունները:

**<u>Գործնական աշխատանք</u>**՝ (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3. Տեխնոլոգիայի ուսուցումը միջին դպրոցում (5-7-րդ դասարաններ): Տեխնոլոգիայի թեմատիկ պլանների, ուսումնական նյութերի ստեղծում (15 ժամ)**

Տեխնոլոգիայի ուսուցիչը և ժամանակակից դասը: Ուսուցման դիդակտիկական սկզբունքները: Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները: Դասի պլանավորումը: Ուսուցման ժամանակակից ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները (պրոբլեմային, մոդուլային, նախագծային, հետազոտական, խաղային և այլն), դրանց նպատակային կիրառությունը դասին: Գործնական աշխատանքի ժամանակակից տեսակները: Սկզբնաղբյուրների և փաստաթղթերի ուսումնասիրման հուշաթերթիկներ: Ուսումնական գծակարգերի (աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, գծապատկերներ, հատակագծեր և այլն) և ցուցապաստառների ստեղծում: Տեխնոլոգիայի ուսուցման ժամանակակից միջոցները, դրանց դասակարգումը: Ուսուցման տպագիր-տեղեկատվական, զննական, էկրանային և էլեկտրոնային միջոցները (համակարգիչ, համացանցային կայքեր, էլեկտրոնային դասագիրք, էլեկտրոնային գրադարան և նյութեր, տեսադասեր, հեռավար ուսուցում):

**<u>Գործնական աշխատանք</u>**՝ (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Սովորողների գնահատումը՝ որպես Տեխնոլոգիայի ուսուցման բարելավման միջոց: (15 ժամ)**

Գնահատման նյութերի մշակում. թեստային նյութերի կազմման, անցկացման ժամանակակից սկզբունքներ գնահատման սանդղակների կազմում: Գործնական աշխատանքների՝ առարկայական չափորոշչով առաջարկվող տեսակների գնահատման սկզբունքներն ու եղանակները: Թեստ, թեստի տեսակները, կառուցվածքը, հատկորոշիչների կազման սկզբունքները: Ստեղծագործական նախագծի գնահատման սանդղակի ստեղծում: Ձևավորող գնահատման մատյանի ստեղծում: Ուսումնամեթոդական նյութերի ստեղծում (մեթոդական խորհուրդների, հանձնարարականների, հարցարանների, թեստերի թղթային և էլեկտրոնային տարբերակների մշակում, մեթոդական, դիդակտիկական բաշխիչ և ինքնաշեն նյութերի պատրաստում և այլն):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում (2 ժամ)**

*Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկայի դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| | **Ներածություն:**<br>Դասընթացի նպատակները և խնդիրները:<br>Տեխնոլոգիայի դպրոցական դասընթացի ընդհանուր բնութագիրը: Տեխնոլոգիայի չափորոշիչն ու ծրագրերը և դրանց բովանդակության նորույթները: | 13 | 5 | 8 | Զարգացնել ուսուցչի մասնագիտական հմտությունները, ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները:<br>Զարգացնի պլանավորելու իր մեթոդամանկավարժական գործունեությունը և սահմանի նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները: | **Մասնակիցները կիմանան՝**<br>• 1-7-րդ դասարաններում տեխնոլոգիայի ուսուցման սկզբունքները.<br>• ժամանակակից մեթոդներով տեսական և գործնական դասերի կազմակերպումը.<br>• Տեխնոլոգիայի նախագծային ուսուցումը.<br>**Մասնակիները կկարողանան՝** | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | • պլանավորել և վարել տեխնոլոգիայի դաս.<br>• պլանավորել և վարել տեխնոլոգիայի գործնական ուսուցման դաս.<br>• պլանավորել և վարել ինտեգրված դաս. | |
| | **Տեխնոլոգիայի ուսուցման առանձնահատկությունները 1-4 դասարաններում:**<br><br>Աշխատանքային, ստեղծարարական, ձեռնարկատիրական կարողունակությունների զարգացումը և մեթոդների ընտրությունը առարկան ուսուցանելիս:<br><br>Առարկայի թեմատիկ պլանավորում. պլանավորել և վարել գործնական դաս. ինտեգրված դաս (ինքնուրույն աշխատանք):<br><br>Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ դասագրքի որևէ թեմայի (ինքնուրույն աշխատանք՝ | 15 | 5 | 10 | *Նպաստի տեխնոլոգիայի դասավանդման արդյունավետությանը,*<br><br>*ապահովի տարբերակված ուսուցման կազմակերպում՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ հետերոգեն խմբերի առկայության պայմաններում,*<br><br>Զարգացնի տեսական նյութի գործնական կիրառման հմտությունները | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում):<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>Միասնացված դասի պլանների կազմում:<br><br>Որևէ թեմայից տեսանյութի կամ սահիկաշարի պատրաստում: | | | | դասավանդելիս:<br><br>խթանի սովորողների ինքնուրույն, գործնական ինքնակառավարման, ինքնավերահսկման և նախաձեռնողական կարողությունների զարգացումը: | | |
| | **Տեխնոլոգիայի ուսուցումը միջին դպրոցում (5-7-րդ դասարաններ):**<br><br>Միասնացված ուսուցումից տարբերակված ուսուցման անցնելու դժվարությունները հաղթահարելու միջոցներն ու մեթոդները: Չափորոշչահեն կրթության ապահովումը:<br><br>Գործնական աշխատանքներով ուսուցումը որպես աշակերտների աշխատանքային հմտությունների զարգացման միջոց: Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությունը առարկան | 15 | 5 | 10 | Զարգացնի ներառված սովորողի դիտարկման և ուսումնական ունակությունների բացահայտման գործընթացում մասնակցության շրջանակի ներկայացումը և դիտարկման հմտությունները:<br><br>Զարգացնի ուսուցման ժամանակակից մեթոդների | **Մասնակիցները կիմանան՝**<br><br>• տեխնոլոգիա առարկայի նյութը ինչպես ծառայեցնել սովորողների աշխատանքային հմտությունների զարգացմանը և մասնագիտական կողմնորոշմանը.<br>• սովորողների դիզայներական նախագծային աշխատանքի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | դասավանդելիս:<br><br>Գործնական աշխատանքների ուսուցման առանձնահատկությունները:<br><br>Նախագծային ուսուցման առանձնահատկությունները:<br><br>Սովորողների երևակայության, ստեղծագործական մտածողության, աշխատանքային հմտությունների զարգացումը տեխնոլոգիայի ստեղծագործական նախագծերի կատարման միջոցով:<br><br>Տեխնոլոգիական գործընթացների տեսական ուսուցումն՝ ըստ տեսաֆիլմի և անիմացիաների:<br><br>Առարկայի թեմատիկ պլանավորման սկզբունքները (ինքնուրույն աշխատանք):<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>- Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | | | | տիրապետման և կիրառման կարողությունները: | կազմակերպման սկզբունքները.<br>**Մասնակիները կկարողանան՝**<br>• տեխնոլոգիական գործընթացների ուսուցումը ծառայեցնել սովորողների աշխատանքային հմտությունների զարգացմանը և նրանց մասնագիտական կողմնորոշմանը.<br>• պլանավորել և անցկացնել տեխնոլոգիայի տեսական և գործնական ուսուցման դասեր: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | - Ներառական դասի նմուշների կազմում:<br>- Ներառական երեխաների համար ուսումնական նյութերի կազմում. վարժություններ, թեստեր: | | | | | | |
| | **Սովորողների գնահատումը որպես տեխնոլոգիայի ուսուցման բարելավման միջոց**<br><br>Գնահատման նյութերի մշակում. թեստերի կազմման, անցկացման ժամանակակից սկզբունքներով գնահատման սանդղակների կազմում: Տեսական նյութի՝ առարկայական չափորոշչով առաջարկվող թեմաների գնահատման սկզբունքներն ու եղանակները:<br><br>Թեստ, թեստի տեսակները, կառուցվածքը, հատկորոշիչների կազմման սկզբունքները:<br><br>Ստեղծագործական նախագծի գնահատման սանդղակի ստեղծում: Ձևավորող գնահատման մատյանի ստեղծում:<br><br>**Գործնական աշխատանք՝** | 15 | 5 | **10** | Նպաստի գնահատման նյութերի մշակման և կազմման գործընթացին,<br><br>Ստեղծի գնահատման գործիքներ: | **Մասնակիցները կիմանան՝**<br><br>• Գնահատման նյութերի մշակման սկզբունքները .<br>• Գնահատման սանդղակների կազմել:<br><br>• ստեղծագործական նախագծերի անցկացման և գնահատման ժամանակակից սկզբունքները<br><br>**Մասնակիները կկարողանան՝**<br><br>• Գնահատման սանդղակների կազմել, | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ստեղծագործական նախագծի գնահատման սանդղակի ստեղծում: Ընթացիկ գնահատման թեստերի կազմում:<br><br>Ամփոփիչ թեստերի կազմում:<br><br>Հայտորոշիչ թեստերի կազմում: | | | | | • Տեսական նյութի՝ առարկայական չափորոշչով առաջարկվող թեմաների գնահատման սկզբունքներն ու եղանակները կիրառեն ուսուցման գործընթացում:<br>• Կազմեն ստեղծագործական նախագծի գնահատման սանդղակ: | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | Գնահատիր դասընթացը՝ զարգացնելով հմտությունները | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | **60** | 20 | 40 | | | |

## ՖԻԶԻԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Դասընթացի անվանում | Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն** է՝

- հաղորդել գիտելիքներ հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում ֆիզիկա առարկայի դասավանդման խնդիրների և մեթոդաբանության վերաբերյալ,
- ներկայացնել ֆիզիկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկաները,
- ծանոթացնել ֆիզիկայի դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին:

**Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

**Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- սահմանել ֆիզիկայի դասավանդման հիմնական հասկացությունները,
- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները ֆիզիկայի դասավանդման գործընթացում,

- գնահատել և արժևորել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները ֆիզիկայի դասավանդման գործընթացում,
- հիմնավորել ֆիզիկայի դերը բնական գիտությունների շարքում,
- ընտրել ֆիզիկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,

**Բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- պլանավորել ֆիզիկա առարկայի ուսումնական պարապմունքները,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները ֆիզիկայի դասավանդման գործընթացում,
- իրականացնել ֆիզիկայի դասավանդման մեթոդների օպտիմալ ընտրություն,
- իրականացնելու ֆիզիկայի դասերի ժամանակ աշակերտների գիտելիքների յուրացման վերահսկում,
- կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ ֆիզիկայի ուսուցման գործընթացում,
- համեմատել ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, ընտրել նպատակահարմար մեթոդը և ցուցադրել դրա գործնականում կիրառելու հնարավորությունը,

**Գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- ստեղծել միջառարկայական կապեր ֆիզիկայի դասավանդման գործընթացում,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները**.

- մեկնաբանել կրթական ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները,
- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել ֆիզիկայի դասավանդման

| |
|---|
| արդյունավետ մեթոդիկա,<br>• օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները ֆիզիկայի դասավանդման գործընթացում,<br>• կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,<br>• կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ մեթոդներն ու ձևերը**.<br>• Դասախոսություն՝ շարժասահիկներով<br>• գործնական աշխատանքներ՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ։ |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները.**<br>▪ *Բանավոր հարցում,*<br>▪ *Ուսումնական նախագծերի ներկայացում,*<br>▪ *Գրավոր աշխատանքներ*<br>▪ *Ռեֆերատներ* |

**Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից**.

- Դասավանդման մեթոդիկայի առարկան և նրա խնդիրները:
- Դասընթացը կազմելու սկզբունքները հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում:
- Ֆիզիկայի դասընթացի կառուցման հիմնական ձևերը:
- Ֆիզիկայի ուսուցման մասնավոր մեթոդներ:
- Դպրոցներում ֆիզիկայի դասընթացի բովանդակության սկզբունքներ:
- Միջառարկայական կապերի հաստատում:
- Կենսոլորտում ընթացող ֆիզիկական երևույթների մասին ուսումնական ծրագրի կառուցում և դասավանդում:
- Ֆիզիկայի դասավանդման նյութատեխնիկական բազայի և կաբինետ-լաբորատորիայի ստեղծում:

**Գրականության ցանկ.**


- Աթայան Կ., Ֆիզիկայի ուսուցման տեսություն և մեթոդիկա, դասագիրք բուհերի ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար,Երևան, 2016:
- Ղազարյան Է., Կիրակոսյան Ա., Մելիքյան Գ., Մամյան Ա., Մաիլյան Ս., Ֆիզիկա-12, դասագիրք, Երևան, 2012:
- Ղազարյան Է., Կիրակոսյան Ա., Մելիքյան Գ., Մամյան Ա., Մաիլյան Ս., Ֆիզիկա-11, դասագիրք, Երևան, 2012:
- Ղազարյան Է., Կիրակոսյան Ա., Մելիքյան Գ., Մամյան Ա., Մաիլյան Ս., Ֆիզիկա-10, դասագիրք, Երևան, 2012:
- Կ. Աթայան, Ս. Մաիլյան, Հ. Սարգսյան, Լ.Պետրոսյան, Ֆիզիկայի խնդիրների տեսակները և լուծման մեթոդները, Երևան, 2004:

- Աթայան Կ.Ի.,Կենսոլորտում ընթացող ֆիզիկական երևույթներ, Երևան, 2010:
- «Բնագետ» հանդես, բոլոր համարները սկսած 2008 թվականից:
- Глазунов А.Т., Нурминский И.И., Пинский А.А. Методика преподавания физики в средней школе, Москва, 1989.
- Лихачев Б.Т. Педагогика. Курс лекций. М.; 2010.


**Թեմա 1. Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի առարկան նպատակը, խնդիրները, բովանդակությունը:(8 ժամ)**

Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի առարկան, ուսումնասիրման նպատակները,դասընթացի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները:

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն):

,**Թեմա.2. Ֆիզիկայի ուսուցման նպատակները,միջոցները, մեթոդները, բովանդակությունը, կազմակերպման ձևերը/8ժամ/**

Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի ուսումնասիրման նպատակները,բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, ֆիզիկա առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարները:

Գործնական աշխատանք/ SWOT վերլուծություն, դեբատ,կլոր սեղան քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն/

**Թեմա 3. Ֆիզիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները: (8ժամ)**

Ֆիզիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները: Ֆիզիկայի դասագրքերը և դրանց բովանդակային առանձնահատկությունները: Նոր սերնդի թվային դասագրքերի

մշակման և կիրառման արդյունավետ լուծումները:

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Գիտական ճանաչողության մեթոդները որպես Ֆիզիկայի ուսուցման/ուսումնասիրման մեթոդներ: (8ժամ)**

«Ֆիզիկա» առարկայի հիմնական գաղափարների կառուցման հիմնական սկզբունքները, ուսուցման/ուսումնասիրման գործընթացում մտային գործունեության հնարների կիրառումը:

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 5. Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը ֆիզիկա առարկայի դասին և արտադասարանական աշխատանքներում: (9 ժամ)**

Կրթական բոլոր մակարդակներում վերջնարդյունքներին համապատասխան կարողունակություններ ձևավորող և զարգացնող գործունեության տեսակների բնութագրերը: Մանկավարժական հաղորդակցման հիմնական կանոնները և մանկավարժական հաղորդակցման փուլերը:

<u>**Գործնական աշխատանք**</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 6. Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում: (9 ժամ)**

**Սովորողների** գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում:Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները:Գնահատման տեսակները:

**Գործնական աշխատանք** /Նախնական գնահատում:Ընթացիկ գնահատում:Ամփոփիչ գնահատում:/

**Թեմա 7.Ֆիզիկայի դպրոցական կաբինետ, նրա կահավորումը , նյութատեխնիկական բազան և ՏՀՏ միջոցները:/8ժամ/**

Հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ուսումնական կաբինետի կահավորման սկզբունքները,ֆիզիկա ուսումնական առարկայի ուսուցման նյութատեխնիկական բազան կազմող սարքերի սարքավորումների ,տեղակայանքների, համակարգիչների,համացանցի և ՏՀՏ միջոցների առակայությունը կաբինետում:

**Գործնական աշխատանք/**Ծանոթանալ ֆիզիկայի ուսումնական կաբինետի կահավորման սկզբունքներին, սարքերի,սարքավորումների,տեղակայանքների համապատասխան պահարաններում պահպանման կանոններին, ուսուցման գործընթացում ՏՀՏ միջոցների նպատակային օգտագործման պահանջներին/

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

*«Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1 | **Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի առարկան, նպատակը,խնդիրները, բովանդակությունը:**<br><br>.Ֆիզիկայի ուսուցման մեթոդիկայի առարկան,նպատակը,խնդիրները, բովանդակությունը:<br><br>**Ֆիզիկայի ուսուցման** | **8** | **3** | **5** | Բնագիտամաթեմատիկական գիտելիքներով օժտված, ֆիզիկայի դասընթացի ուսումնասիրման չափորոշչաիեն բովանդակությունն ըմբռնող, ռեֆլեքսիվ, վերլուծող, համադրող ուսուցչի/մասնագետի/ պատրաստումն է: | Թեմայի ուսումնասիրման ավարտին մասնակիցները.<br><br>.Կսահմանեն ֆիզիկայի ուսուցման նպատակն ու խնդիրները,<br><br>.կպլանավորեն ու կմշակեն ուսումնառության հաջորդականությունը,<br><br>.կկիրառեն տարատեսակ ուսումնական պաշարներ տարբեր ընդունակություններ ունեցող ունկնդիրների համար,<br><br>.կտիրապետեն ուսուցման տարատեսակ մեթոդների, հնարների,տեխնոլոգիաների: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | **նպատակները,բովանդակությունը,միջոցները,մեթոդները,կազմակերպման ձևերը:**<br>▪ Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի ուսումնասիրման նպատակները, բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, ֆիզիկա առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարների հենքը:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br>▪ Տարբեր ժամանակահատվածների չափորոշիչների (նաև այլ երկրների) համեմատական, քննական և փոխզուգահեռադրման վերլուծություն:<br><br>▪ Ֆիզիկայի դպրոցական դասընթացի կառուցադրման հիմնարար | **8** | **3** | **5** | .<br><br>Բնագիտական գիտելիքներով օժտված, ֆիզիկայի դպրոցական դասընթացի ուսումնասիրման չափորոշչահեն բովանդակությունն ընկալող,վերլուծող համադրող շրջանավարտի պատրաստումն է: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կսահմանեն ֆիզիկայի ուսուցման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կպլանավորեն և կմշակեն ուսումնառության հաջորդականությունը՝ հաշվի առնելով բոլոր սովորողների առանձնահատկությունները,<br>▪ Կլրամշակեն ուսումնական պլանները՝ ըստ մշտադիտարկման արդյունքների,<br>▪ կկիրառեն տարաբնույթ ռեսուրսներ պատրաստվածության տարբեր մակարդակների հասած, սովորելու տարբեր ոճեր և | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սկզբունքները։ | | | | | ընդունակություններ ունեցող սովորողների համար։<br>▪ կտիրապետեն այնպիսի մեթոդական գիտելիքների, որոնց հիմքի վրա, գիտականորեն հիմնավորված ու արդյունավետ ուսուցվում է ֆիզիկայի բազմամակարդակ դասընթացը,<br>▪ կփաստաթղթավորեն հետազոտությունների արդյունքներն ու կվերլուծեն դրանք։ | |
| 3 | **Ֆիզիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները։**<br><br>Ֆիզիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և | **8** | **3** | **5** | Թեմայի նպատակն է ուսուցիչներին ծանոթացնել ֆիզիկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջներին։ | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>Կիմանան՝<br><br>▪ առարկայի դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները: Ֆիզիկայի դասագրքերը և դրանց բովանդակային առանձնահատկություններ ը: Նոր սերնդի թվային դասագրքերի մշակման և կիրառման արդյունավետ լուծումները<br><br>*Գործնական աշխատանք*՝<br><br>Չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի տրամաբանական կառուցվածքը. չափորոշչահեն կրթության կազմակերպումը հանրակրթական դպրոցի առարկայական դաշտում: | | | | | ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները: Կկարողանան՝<br><br>▪ Արդյունավետ կիրառել էլեկտրոնային և այլ ուսումնական ռեսուրսները ֆիզիկայի դասաժամերին: Կտիրապետեն՝<br><br>▪ առարկայի դասագրքերի կամ այլ դիդակտիկ նյութերի կիրառման առանձնահատկություննե րին: | |
| 4 | **Գիտական ճանաչողության մեթոդները որպես Ֆիզիկայի ուսուցման/ուսումնասիրմա** | **8** | **3** | **5** | Գիտական ճանաչողության մեթոդները մանկավարժական | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները . | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **և մեթոդներ:**<br>▪ «Ֆիզիկա» առարկայի առանցքային գաղափարների կառուցման հիմնական սկզբունքները, ուսուցման/ուսումնասիրման գործընթացում մտային գործունեության հնարների կիրառումը:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br>«Ֆիզիկա» առարկայի հիմնական գաղափարների և դրանց հենքի վրա բովանդակության կառուցման պարուրաձև սկզբունքը: | | | | գործընթացներում՝ որպես ուսուցման մեթոդ և բնության երևույթների ուսումնասիրման ու ճանաչման գործընթացում՝ որպես մտային գործունեության հնար դիտարկումն ու շրջանակումն է: | ▪ կկիրառեն տարաբնույթ ռեսուրսներ պատրաստվածության տարբեր մակարդակների հասած, սովորելու տարբեր ոճեր և ընդունակություններ ունեցող սովորողների մտային գործունեության հնարների ձևավորման ու զարգացման համար:<br>▪ կտիրապետեն այնպիսի գիտելիքների գործածնելուն, որոնց հիմքի վրա, գիտականորեն հիմնավորված ու արդյունավետ ուսուցվում է ֆիզիկայի դասընթացը,<br>▪ կկողմնորոշվեն ուսուցչի իրենցաշխատանքում (կապված սովորողներին ֆիզիկա ուսուցանելու հետ) դեմհառնող և անընդհատ փոփոխվող տեղեկատվության զանգվածի մեջ,<br>▪ կընտրեն սովորողների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տարիքային զարգացմանը համապատասխան մտային գործունեության հնարներ՝ նրանց անհատական կերպին համապատասխան: | |
| 5 | **Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը ֆիզիկա առարկայի դասին և արտադասարանական աշխատանքներում:**<br><br>▪ Կրթական բոլոր մակարդակներում վերջնարդյունքներին համապատասխան կարողունակություններ ձևավորող և զարգացնող գործունեության տեսակների բնութագրերը:<br>▪ Մանկավարժական հաղորդակցման հիմնական կանոնները և մանկավարժական հաղորդակցման փուլերը: | **9** | **3** | **6** | Ֆիզիկայի դասագործընթացում ուսուցչի և աշակերտի փոխգործունեության շրջանակներում մանկավարժական հաղորդակցման փուլերի և մանկավարժական հաղորդակցման հիմնական կանոնների ներկայացում: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան զարգացնել սովորողի մտածողության տարբեր տեսակները (խոսքային-տրամաբանական, հավանականակական, ստոխաստիկական և այլն),<br>▪ կուղղորդեն սովորողին՝ ինքնուրույն աշխատանք կատարելու, մշտապես սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, կձևավորեն արժեքային համակարգ և դիրքորոշում, | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Գործնական աշխատանք*՝<br><br>Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ առարկայական թեմատիկ որևէ նյութի (ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում): | | | | | ▪ ֆիզիկայի ծրագիրն ուսումնասիրելով՝ կտարանջատեն աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերն ապահովող մի շարք ընդհանրական խաչվող հասկացություններ ըստ պարուրաձև սկզբունքի,<br>▪ կպլանավորեն արտադասարանական գործունեության մեթոդական վերլուծություն,<br>▪ կպլանավորեն և կհամակարգեն ֆիզիկայիուսումնական աշխատանքները,<br>▪ կվերլուծեն ֆիզիկայի դասի ժամանակակից մոտեցումները: | |
| 6 | **Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ֆիզիկայի** | **9** | **3** | **6** | Ներկայացնել արժևորումը/գնահատումը՝ որպես սովորողի ցուցաբերած արդյունքի կամ կատարողականի | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները. | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ուսուցման գործընթացում:**<br>▪ Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում:<br>▪ Գնահատում և արժևորում: Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները: Գնահատման տեսակները:<br>***Գործնական աշխատանք*** ՝<br>Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ առարկայական թեմատիկ որևէ նյութի (ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում):<br><br>**Ֆիզիկայի դպրոցական ուսումնական կաբինետ,նրա կահավորումը,նյութատեխն իկական բազան, ՏՀՏ** | | | | մասին արժեքային դատողությունների իրացման գործընթաց:<br><br>Ստանալ համապատասխան տեսական գիտելիքներ,հմտությու | ▪ կիմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները,<br>▪ կարժևորեն գնահատման գործառույթը,<br>▪ կգիտակցեն սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կդասակարգեն ուսումնառական նպատակները ըստ առաջնահերթությունների<br>▪ կընտրեն գնահատման մեթոդները՝ ի տեղի: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | **միջոցները:**<br><br>**.Հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ուսումնական** կաբինետի կահավորման սկզբունքները,ֆիզիկա ուսումնական առարկայի նյութատեխնիկական բազան կազմող սարքերը,սարքավորումները,տեղակայանքները,դրանց պահպանման պայմանները, տեղը, ՏՀՏ միջոցները: | **8** | **2** | **6** | ններ ու կարողություններ, որոնք թույլ կտան նպաստել ֆիզիկայի ժամանակակից ուսումնական կաբինետ կահավորելու, ու նրա ուսումնանպաստ գործառույթները տեղին օգտագործելու,ֆիզիկայի ցուցադրական փորձը և լաբորատոր ծրագրային աշխատանքները կատարելու նպատակով: | Թեմայի ուսումնասիրման ավարտին սովորողները<br><br>.կիմանան ֆիզիկայի ուսումնական կաբինետի կահավորման սկզբունքները և կանոնները,<br><br>.կարժևորեն կաբինետի ուսումնանպաստ գործունեությունը ինչպես դպրոցական ֆիզիկական փորձի, այնպես էլ ծրագրով նախատեսված լաբորատոր աշխատանքների կատարման ընթացքում,<br><br>.կծանոթանան ու հետագա աշխատանքի ընթացքում կպահպանեն անվտանգության տեխնիկայի կանոնները,<br><br>.կտիրապետեն համակարգչային գրագիտությանը՝ ուսումնական կաբինետում ֆիզիկայի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տեխնոլոգիական բաղադրիչով հագեցած դաս կազմակերպելու համար,<br><br>.կտիրապետեն որոշակի կոնստրուկտորանախագծային հմտությունների՝ ինքնաշեն ֆիզիկական սարքեր ու տեղակայանքներ նախագծելու ու պատրաստելու նպատակով: | |
| | Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում | 2 | | 2 | | | Թեստային աշխատանք |
| Ընդամենը՝ | | 60 | 20 | 40 | | | |

# ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| **5.** | Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | 120ժամ |
| 60ժամ լսարանային, որից՝ 20ժ. դաս. 40ժ. գործն., | | 60 ժամ ինքնուրույն և արտալսարանային | |
| Ուսուցման ձևը՝ առկա | | | |

**Դասընթացի նպատակն է**.

- սովորողներին ծանոթացնել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ձևավորմանը, զարգացման պատմությանը,
- բացահայտել տեսությունների զարգացման միտումները, մեթոդները,
- հիմնավորել ժամանակակից սկզբունքների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը,

- ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը, հասցեատիրոջը, ուսուցման օբյեկտներին և սուբյեկտներին:

Դասընթացի կրթական վերջնարդյունքները.

**Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝**

***Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն***

- *ներկայացնել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները, մեթոդների պատմությունը,*
- *հիմնավորել հաղորդակցական մեթոդների արդյունավետությունը,*
- *բացահայտել ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները:*

***Բ. Գործնական մասնագիտական կարողություններ***

- *կիրառել համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ ֆրանսերեն լեզվի ուսուցման գործընթացում*
- *համեմատել ավանդական, դասական և այլընտրանքային ֆրանսերենի դասավանդման մեթոդները և հիմնավորել հաղորդակցական մոտեցման կիրառման արդյունավետությունը,*

- *կիրառել ընկալողական և վերարտադրողական կարողությունները և հմտությունները՝ ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների,*
- *ստեղծել ընթացիկ և ավարտական ստուգման թեստեր՝ըստ մոդելի կամ ցուցանմուշի:*

**Դասընթացը ձևավորում է հետևյալ ընդհանրական վերջնարդյունքները**.

- մեկնաբանել կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդաբանությունը,
- դասակարգել ուսուցման ժամանակակից մեթոդիկաները և ընտրել ֆրանսերենի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,
- օգտագործել ուսուցման ժամանակակից դիդակտիկ և տեխնիկական միջոցները ֆրանսերենի դասավանդման գործընթացում,
- կիրառել ընթացիկ և ավարտական ստուգման և գնահատման գործընթացում մասնագիտական և մեթոդական թղթապանակներ,
- կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ՝ օգտվելով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, համացանցային, էլեկտրոնային միջոցներից,
- հաղորդակցվել օտար լեզվով:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**.

- *դասախոսություն՝շարժասահիկների ուղեկցությամբ*
- *գործնական առաջադրանքներ*
- *բանավեճեր և երկխոսություններ/ ֆրանսերենով/*
- *թեմատիկ/ուսումնական/ ֆիլմերի դիտում և քննարկում:*

| |
|---|
| **Գնահատման մեթոդները և միջոցները.**<br>• Բանավոր հարցում,<br>• Գործնական աշխատանքներ,<br>• Ռեֆերատներ: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ թեմաներից.**<br>• *ֆրանսերենի դասավանդումը որպես գիտություն: ֆրանսերենի դասավաղնման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ:*<br>• *ֆրանսերենի ուսուցման ավանդական և ժամանակից մեթոդները՝ քերականական-թարգմանական (grammaire-traduction), ուղիղ (direct), տեսալսողական (audiovisuel), հաղորդակցական (communicatif):*<br>• *Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն:*<br>• *Քերականական նյութի մատուցման մեթոդներ:*<br>• *Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում:*<br>• *Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես* |

*վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ:*

- *Մենախոսության ուսուցում:*
- *Երկխոսության ուսուցում:*
- *Միջմշակութային ուսուցում:*
- *Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը):*
- *Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ:*
- *Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին) դասակարգում:*
- *Ընթերցանության տեխնիկայի ուսուցում:*
- *Ընթերցանության տարբեր տեսակների մակարդակների բնութագրում:*
- *Ընթերցանության տեսակների ձևավորման մեթոդներ ու ռազմավարություններ:*
- *Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում:*
- *Գրավոր խոսքի ուսուցում:*
- *Գրավոր խոսքի ուսուցման նպատակները:*
- *Գրելու տեխնիկա (տառուսուցում, ուղղագրություն) և գրավոր խոսքի (մտքերը գրավոր արտահայտելու) կարողություն:*
- *Վարժությունների համակարգ՝ ուղղված գրելու տեխնիկայի և գրավոր խոսքի կարողությունների ու հմտությունների զարգացմանը:*
- *Գրավոր խոսքի ստուգման ձևերը:*

- *Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր:*
- *Ֆրանսերենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:*

**Գրականության ցանկ.**


- *Աստվածատրյան Մ. Գ. և ուրիշներ, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), Երևան, 2007*
- *Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., Խմբ. ՝ Սուրեն Զոյան, Մելանյա Աստվածատրյան և ուրիշ., Եր., 2005*
- *Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ, Ազգային զեկույց, Երևան, 2008*
- *Маслыко, Е. А., Бабинская, П. К., Бутько, А. Ф., Петрова, С. И., Попов, А. И. Настольная книга преподавателя иностранного языка / Е. А. Маслыко, П. К. Бабинская, А. Ф. Бутько, С. И. Петрова, А. И. Попов, М., 1992*
- *Common European Framework of Reference: Teaching, Learning, Assessment. CoE, Strasbourg, 2001*
- *Puren C. Histoire des méthodologies de l'enseignement des langues, Paris, 1988*
- *Moirand S, Enseigner à communiquer en langue étrangère, Paris, 1982*

*«Ֆրանսերեն լեզվի դասավանդման մեթոդիկա»*

*դասընթացի թեմատիկ պլան****/4կրդ/***

**Թեմա 1. Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: ֆրանսերենի մեթոդիկայի կապը լեզվաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության հետ: (12ժամ)**

<u>Գործնական աշխատանք</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում, գործող և նոր չափորոշիչների համեմատական վերլուծություն):

**Թեմա 2. Ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Խոսքի զարգացման մեթոդիկան, նրա հիմնական սկզբունքները: Ուղղախոսական նորմերի ուսուցանումը: Հնչյունական հմտությունների ձևավորում: Ֆրանսերենի բառապաշարի քերականական նյութի ընտրության սկզբունքները: (12 ժամ)**

<u>Գործնական աշխատանք</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 3. Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը ֆրանսերենի դասերին և արտադասարանական աշխատանքներում՝ ըստ հանրակրթության աստիճանների և հոսքերի: Ֆրանսերենի դասերի կառուցվածքը և տեսակները: (12 ժամ)**

<u>Գործնական աշխատանք</u> (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 4. Դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները։ (12 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (SWOT վերլուծություն, դեբատ, կլոր սեղան-քննարկում):

**Թեմա 5. Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը ֆրանսերենի ուսուցման գործընթացում: (10 ժամ)**

**<u>Գործնական աշխատանք</u>** (Նախնական գնահատում: Ընթացիկ գնահատում: Ամփոփիչ գնահատում):

**Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում: Առաջիկա աշխատանքների պլանավորում: (2 ժամ)**

## *«Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա» դասընթացի թեմատիկ պլան*

| ՀՀ | Թեմա | Ժամաքանակ | | | Նպատակը | Վերջնարդյունքները | Ստուգման ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդհ. | Տես. | Գործն. | | | |
| 1. | **Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները: Ֆրանսերենի մեթոդիկայի կապը լեզվաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության հետ:**<br><br>▪ Հանրակրթական դպրոցի ֆրանսերեն լեզու առարկայի ուսումնասիրման նպատակները, բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները, ռուսաց լեզու առարկայի բովանդակությունը կազմող հիմնական գաղափարների հենքը:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>▪ Տարբեր ժամանակահատվածների չափորոշիչների (նաև այլ երկրների) համեմատական, քննական և փոխզուգահեռադրման վերլուծություն: | 12 | 4 | **8** | Հումանիտար գիտելիքներով օժտված, ֆրանսերենի դասընթացի ուսումնասիրման չափորոշչահեն բովանդակությունն ըմբռնող, ռեֆլեքսիվ, վերլուծող, համադրող ուսուցչի/մասնագետի/ պատրաստումն է: | Թեմայի ուսումնասիրման ավարտին մասնակիցները.<br><br>.Կսահմանի ֆրանսերենի ուսուցման նպատակն ու խնդիրները,<br><br>.կպլանավորի ու կմշակի ուսումնառության հաջորդականությունը,<br><br>.կկիրառի տարատեսակ ուսումնական պաշարներ տարբեր ընդունակություններ ունեցող ունկնդիրների համար,<br><br>.կտիրապետի ուսուցման տարատեսակ մեթոդների, հնարների,տեխնոլոգիաների: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| 2. | **Ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Խոսքի զարգացման մեթոդիկան, նրա հիմնական սկզբունքները: Ուղղախոսական նորմերի ուսուցանումը: Հնչյունական հմտությունների ձևավորում: Ֆրանսերենի բառապաշարի քերականական նյութի ընտրության սկզբունքները:Օտար լեզվի ուսուցման մանկավարաժական տեխնոլոգիաները և մեթոդները:**<br><br>**«Ֆրանսերենը՝ որպես օտար լեզու»** ուսումնական բնագավառի բովանդակությունը, նորույթները, հիմնական հասկացությունների /Հաղորդակցում, Ընթերցանություն/գրականություն, Լեզվական համակարգ, Ստեղծարություն, Ինքնություն /ու ենթահասկացությունների բովանդակության կառուցման սկզբունքները, գաղափարների ու ենթագաղափարների ուսուցման/ուսումնասիրման | 12 | 4 | 8 | Ուղղորդել ուսուցչի գործունեությունը դեպի պլանավորած արդյունքների հասանելիություն և իրականացում, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորում: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կնկարագրեն մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներ, ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդները,<br>▪ կկիրառեն մանկավարժական տեխնոլոգիաների Ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի առանձին թեմաների ուսուցման օրինակով,<br>▪ որոշ թեմաների ուսուցման օրինակով կդասակարգեն և ի տեղի կկիրառեն ուսուցման ավանդական, ակտիվ և փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների ընտրման հայտանիշները: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | չափորոշչահեն տեխնոլոգիաները.<br><br>▪ Ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումներ:<br>▪ Աշակերտների գործուն մասնակցությունն ուսուցման գործընթացում<br>▪ Մանկավարժական տեխնոլոգիաներ, դրանց նկարագրությունը և կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում:<br>▪ Ուսուցման մեթոդներ. դրանց նկարագրությունը և կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ուսուցման ավանդական և փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ:<br>▪ Ուսուցման ժամանակակից մեթոդների և հնարների կիրառությունը օտար լեզվի դասավանդման գործընթացում. օրինակներ, դրանց առանձնահատկությունների բացահայտում:<br><br>**Գործնական աշխատանք՝**<br><br>***Գործնական աշխատանք՝***<br><br>Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: | | | | | | |
| 3. | **Ուսուցչի և աշակերտի փոխգործունեության կազմակերպումը օտար լեզվի դասերին և** | **12** | **4** | **8** | Ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի դասագործընթացում ուսուցչի և աշակերտի | Թեմայի ուսումնասիրության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **արտադասարանական աշխատանքներում՝ ըստ հանրակրթության աստիճանների և հոսքերի:**<br><br>▪ Ֆրանսերենի դասաժամերին և արտադասարանական աշխատանքներում ուսուցչի և սովորողի գործունեության տեսակները նկարագրող գործունեության ձևերը:<br>▪ Ժամանակակից դասին ներկայացվող պահանջները: Ուսուցման կազմակերպման այլ ձևեր: ***Գործնական աշխատանք՝***<br><br>Թեմատիկ երկխոսության միջոցով մասնագիտական բառապաշարի հարստացում: | | | | փոխգործունեության շրջանակներում մանկավարժական հաղորդակցման արդյունավետ ձևերի ներկայացումն է: | ավարտին մասնակիցները.<br><br>▪ կկարողանան զարգացնել սովորողի մտածողության տարբեր տեսակները (խոսքային-տրամաբանական, կոմբինատորային, հավանականական և այլն),<br>▪ կուղղորդեն սովորողին՝ ինքնուրույն աշխատանք կատարելու, մշտապես սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, կձևավորեն արժեքային համակարգ և դիրքորոշում,<br>▪ կպլանավորեն արտադասարանական գործունեության մեթոդական վերլուծություն,<br>▪ կպլանավորեն և կհամակարգեն ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի ուսումնական աշխատանքները,<br>▪ կվերլուծեն ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի դասի ժամանակակից մոտեցումները: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | **Դասագրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին և էլեկտրոնային ռեսուրսներին ներկայացվող դիդակտիկական պահանջները:**<br><br>*Գործնական աշխատանք*՝<br><br>Չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի տրամաբանական կառուցվածքը. չափորոշչահեն կրթության կազմակերպումը հանրակրթական դպրոցի առարկայական դաշտում: | | | | ▪ Ծանոթացնել ֆրանսերենի՝ որպես օտար լեզվի ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշիչների եվ ծրագրերի մշակման հայեցակարգային դրույթներին, ներկայացնել դասագրքի, | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br><br>▪ կիմանան առարկայական չափորշիչները, դրանց ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը, առարկայական ծրագրերը, կառուցվածքը, ծրագրերի և առարկայական չափորոշիչների համապատասխանությունը,<br>▪ կձևակերպեն չափորոշիչների վրա հիմնված կրթության իրականացման խնդիրները,<br>▪ կընտրեն և կհամադրեն առարկայի դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ և էլեկտրոնային ռեսուրսներ՝ ըստ դրանց ներկայացվող դիդակտիկական պահանջների,<br>▪ կկիրառեն թվային դասագրքեր, էլեկտրոնային և այլ ուսումնական ռեսուրսներ օտար լեզու դասաժամերին, կհարաբերեն, կհամադրեն և | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 12 | **4** | **8** | ուսուցչի ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի որակական բնութագրիչները: | կհականդրեն գործող և այլընտրանքային դասագրքերի, ուսումնաօժանդակ նյութերի առանձնահատկություններ: | |
| 5. | **Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը Օտար լեզվի ուսուցման գործընթացում:**<br>▪ Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը և գնահատումը Օտար լեզուների ուսուցման գործընթացում:<br>▪ Գնահատում և արժևորում: Սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները: Գնահատման տեսակները:<br>***Գործնական աշխատանք՝***<br>Թեստի կառուցման սկզբունքները: | **10** | **4** | **6** | Ներկայացնել արժևորումը/գնահատումը՝ որպես սովորողի ցուցաբերած արդյունքի կամ կատարողականի մասին արժեքային դատողությունների իրացման գործընթաց: | Թեմայի ուսումնասիրության ավարտին մասնակիցները.<br>▪ կիմանան սովորողների գիտելիքների արդյունավետ գնահատման սկզբունքները, գնահատման տեսակները,<br>▪ կարժևորեն գնահատման գործառույթը,<br>▪ կգիտակցեն սովորողների գնահատման նպատակներն ու խնդիրները,<br>▪ կդասակարգեն ուսումնառական նպատակները ըստ առաջնահերթությունների,<br>▪ կընտրեն գնահատման մեթոդները՝ ի տեղի: | |
| | **Դասընթացի ամփոփում և ամփոփիչ գնահատում** | **2** | | **2** | | | **Թեստային աշխատանք** |
| **Ընդամենը՝** | | 60 | **20** | **40** | | | |